

23327
961

Ն Թ Ի Ֆ Ի Լ Ի Չ Ի Ը Ն Ե Գ Գ Գ Զ Բ Ն Ց

№ 56

Ժ Ո Ղ Ո Վ Ր Գ Ը Գ Ի Ը Կ Ը Ն Ն Ի Ի Թ Ե Ր

Գ Ի Բ Գ Գ

Փ Շ Ր Ա Ն Ք Ն Ե Ր

Ժ Ո Ղ Ո Վ Ր Գ Ը Կ Ը Ն Բ Ա Ն Ա Ն Ի Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Ի Ց

Ժ Ո Ղ Ո Վ Ե Գ

Գ Ա Բ Ն Գ Ի Ն Ս Ա Բ Կ Ա Ն Ի Կ Ց Ց Ո Գ Ս Է Փ Ե Ն Ը Ն Ց

Թ Ի Ֆ Ի Լ Ի Ս

Տ Գ արան Մ. Շարաձե, Նիկոլայևսկայա փողոց, 21.

Типография М. Шарадзе, Николаевская. №1.

1893

398.5(47925)

2-87



2010

2822

891.99 398.5(47.906)

7-87

Հրատարակող թիֆլիսյան Հայերեն գրքերի Հրատ.

№ 56.

Handwritten signature

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԻԻԹԵՐ

ԳԻՐԳՔ Գ՞

Փ Շ Ր Ա Ն Ք Ն Ե Ր

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԻՒՆԻՑ

1005
22605

Ժ ո ղ ո վ ե ց

ԳՐԵԳԻՆ ՍԵՐԿԱՆԿ ՅՈՂՍԷՓԵՆՑ



h. N: 24

1706



Թ Ի Փ Լ Ի Ս

Տպարան Մ. Շարաձե || Тип. М. Шарадзе
1892



Дозволено цензурою. Тифлисъ, 9-го Юля 1892 г.



Типографія М. Шарадзе, Николаевская ул., 21.

Փ Ո Ղ Ո Վ Ր Գ Ե Կ Ե Ն Ե Ր Գ Ե Ր *)

(Մոկաց խորհրդով)

Ա.

Ասլան¹⁾ աղէն նստի նշխուն²⁾ յողէն³⁾,
Կ'ուտի ուր խաց, կ'ամի ուր գինին,—
Աստանուր⁴⁾ կէնի մեանչ աշխրին,
Փաքի չունի աստանուրի մալին:

Պակսաւ խաց, պակսաւ գինին,
Կանչից ուր նորարին⁵⁾.
— Առ զփարէն, կինա մեանչ բաղարին⁶⁾,
Առ զխաց, առ զգինին,
Շուտ էրի, խասի իմ սողբթին⁷⁾:

Նորար կինաց մեանչ բաղարին,—
Ախրատ մեռիր մեանչ փուղուցին:
Էլաւ, զգլխու փուղին⁸⁾ էտու քճանին,
Մէջաց յիզար⁹⁾ էտու պատանքին,
Առից զխաց, առից զգինին,
Յիւշ¹⁰⁾ էկաւ, խասաւ Ասլան աղի սողբթին:

1) Աղայ, աղնուական, պարոն: 2) Գեղեցիկ: 3) Սենեակ, այդպէս է կոչուում լեռնային գիւղացու բնակարանի այն մասը, որտեղ պատուաւոր հիւրերն են ընդունուում: 4) Կեանք է վայելուում: 5) Ծառային: 6) Շուկայ: 7) Խնջոյք: 8) Մետաքսէ կամ ուրիշ աղնիւ լաթի կտոր, որ փաթաթուում են գլխարկի, քոլոզի չորս կողմը: 9) Մէջկապ, (գօտի) բրդից կամ մետաքսից. 10) Ուշ:

*) Սոյն գիրքը «Սասմայ Ծռեր» գրքի երկրորդ հատորն է (տես. Սասմ. Ծռ. յառաջաբան):

Ասլան աղէն ըսաց.—Ի՞նչու յիւշ էկար, խասար իմ սողթին: Ըսաց.—Վուրբան կ'ըլնիմ քեզի, Ասլան աղէն, Իս կեացի, խասայ մեանչ բազարին, Մէկ ախքատ ըմ մեռիր էր մեանչ փուղուցին. Գլխու փուշին տուի քահանին, Մէջաց յիզար տուի պատանքին,— Զախքատ տարան պախիցին,— Յիւշ էկայ, խասայ քիւ սողթին:

Ասլան աղի աչքիր դադրաւ վեար պիւնին, ¹⁾ Ասաց.—Ան վոյն ի առիր զիմ ախքաի խուզին, Թը²⁾ կերի՞ թըն կեայ, առնի զիմ քեաղցրիկ խուզին: —Ասլան աղէն, կուրբան կ'ըլնիմ քեզի, Գափրիլ Տրիշտակն ի էրկնային Առի զախքաի խուզին:

Ասլան աղէն կանչեց վեար ուր նոքարին, Ասաց.—Տիւսն³⁾ ի քեշի Բող-Բէդաւին, Վերայ տի զինը սադաֆին,— Էնու դաւին⁴⁾ ի՞նչ ի՞ առնի իմ ախքաի խուզին:

Ասլան աղէն իջաւ մեանչ մէյդանին, Կանչեց Գափրիլ Տրիշտակ էրկնային, Էսաց.—Տիւ բան ի՞նչ ունիս իմ ախքաին, Որ կ'առնիս զիմ ախքաի խուզին. Էրի ըստայ⁵⁾ առ զիմ քեաղցրիկ խուզին:

Գափրիլ Տրիշտակն էրկնային
 Վուրբաւ խատ Ասլան աղին.
 Վուրբաւ էրին չում կէսօրին:

1) Բուն: 2) Թէ: 3) Գուրս: 4) Գաւին ի՞նչ է—ի՞նչ գործ ունի:
 5) Այստեղ:

Գափրիլ Տրիշտակ յիւշեկ¹⁾ կ'զարկէր Ասլան աղին.
 Ասլան աղէն սրտէ գարբ կ'զարկէր Տրիշտակին:

Կէսօրին Տրիշտակ աչքիր շեց վեար Ասլան աղին,—
 Ասլան աղէն աւալ-թաւալ էկաւ, ինկաւ վեար ուր
 դեռչակին:

Խէրիկ էսաց.—Վուրբան կ'ըլնիմ քի, Ասլան աղէն,
 Ի՞նչ աւալ-թաւալ էկիր, ինկիր իս վեար քիւ դեռչակին:
 Էսաց.—Վեացիր իմ կուր խատ Գափրիլ Տրիշտակին,
 Իկիր կ'ուզի զիմ քեաղցրիկ խուզին:

Ըսաց.—Տիւ տու քիւ Բող-Բէդաւին
 Տիւ տու քիւ զին սադաֆին,
 Տիւ տու քիւ թուրն ի Քրմանին,
 Տիւ տու քիւ եօթ բիւրջի²⁾ ոսկին,
 Տիւ տու քիւ եօթ բիւրջի արծըթեղէն,—
 Տիւ մի տա քիւ քեաղցրիկ խուզին:

Էսաց.—Գափրիլ Տրիշտակն ի էրկնային,
 Թմա՛հ չէնի աստանուորի մալին,
 Խոգի մ' կ'ուզի իմ խուզու փոխանին:

Խէր էսաց.—Իրիք խարիր տարի ում³⁾ իմ արիր,—
 Նուրափեսայ իմ վեար ոսկը աթոռին.
 Իմ խուզին չիմ իտայ քիւ խուզու փոխանին:

Մէր էկաւ, էսաց.—Վուրբան կ'ըլնիմ քի, Ասլան աղէն,
 Ի՞նչ աւալ-թաւալ էկիր, ինկիր իս վեար քիւ դեռչակին:
 Էսաց.—Վեացիր իմ կուր խատ Գափրիլ Տրիշտակին,
 Իկիր, կ'ուզի զիմ քեաղցրիկ խուզին:

1) Կամաց: 2) Բուրգ: 3) Վեանք եմ վայելել, ապրել իմ:

Ըսաց.—Տիւ տու քիւ Բող-Բէդաւին,
 Տիւ տու քիւ զին սադաֆին,
 Տիւ տու քիւ թուրն ի Քրմանին,
 Տիւ տու քիւ եօթ բիւրջի ոսկին,
 Տիւ տու քիւ եօթ բիւրջի արծըթեղէն—
 Տիւ մի տա քիւ քեաղցր խուզին:

Էսաց.—Գափրիլ Տրիշտակն ի էրկնային,
 Թմահ չէնի աստանուորի մալին,
 Խոզի մ' կ'ուզի իմ խուզու փոխանին:

Մէր էսաց.—Իրիք խարիր տարի ումր իմ արիր,
 Նուրահարս իմ քեօնն¹⁾ երիսին.
 Իմ խոզին չիմ խոսայ քիւ խուզու փոխանին:

Անիկ էկաւ, էսաց.—Աուրբան կ'ընիմ քի, Ասլան աղէն,
 Ինչ աւալ-թաւալ էկիր, ինկիր իս վեար.քիւ գեոշակին:

Էսաց.—Աեացիր իմ կուիւ խատ Գափրիլ Տրիշտակին,
 Էկեր կ'ուզի զիմ քեաղցրիկ խուզին:

Էսաց.—Տիւ տու քիւ Բող-Բէդաւին
 Տիւ տու քիւ զին սադաֆին,
 Տիւ տու քիւ եօթ բիւրջի ոսկին,
 Տիւ տու քիւ եօթ բիւրջի արծըթեղէն,—
 Տիւ մի տա քիւ քեաղցրիկ խուզին:

Էսաց.—Գափրիլ Տրիշտակն ի էրկնային,
 Թմահ չէնի աստանուորի մալին,
 Խոզի մ' կ'ուզի իմ խուզու փոխանին:

Ասաց.—Իս չէր գիտը, թը խոզին կ'ուզին խուզու փո-
 փանին,—

1) Բօղ:

Խալալ¹⁾ սրտով իմ խոզին տուիր իմ քիւ խեոգու փո-
 փանին:

Գափրիլ Տրիշտակ զխոզին քաշից չուր²⁾ վեար սրտին.
 Էսաց.—Քիւ խոզին մի տա էնու խոզու փոխանին.
 Խէր էկաւ չէտու, մէր էկաւ չէտու,
 Տիւ ինչո՞ւ կ'տաս էնու խոզու փոխանին:

Էսաց.—Իս խալալ սրտով իմ խոզին տուիր իմ էնու
 խոզու փոխանին,—
 Վաղ զը չ'ըսին տառ³⁾ որպաւարին:

Գափրիլ Տրիշտակ կինաց էրկնք,
 Խարցմունն⁴⁾ էրաւ Տիրուջ մօտէն.
 Էսաց.—Խէր էկաւ չէտու, մէր էկաւ չէտու տղու խոզու
 փոխանին.

Աին էկաւ խոզին կ'տայ էնու խոզու փոխանին:

Էսաց.—Աինա ա՛ն Տայրի խոզին, մայրի խոզին,
 Խինգ խարիր տարի ումր իմ տըւի,
 Թըխ աստանուոր էնին վեար աշխրին:

* *

Ասլան աղէն մեծ թագաւորու տղայ էր *). ինչ զինք մօրու⁵⁾
 էլաւ, անարատ էր, մեռնիլ չէր գիտը ինչ կէր:
 Խէր մէր էլան, պիրին, փսակիցին, մէկ լաւ, ընտիր աղջիկ
 էնու խամար պիրըն, անուն էլ Մարգրիտ:

1) Հալալ, մաքուր: 2) Մինչև: 3) Գառն: 4) Հարցմունք արեց,
 հարցրեց: 5) Ծնունդեցաւ:
 *) «Ասլան Աղէն» երգի մի ուրիշ վարիանտն է. արձակ գրուած
 մասը պատմում էր երգիչը:

Քսան ու չուրս էրկրի էրեւելի իշխանքտիր ժողովցին, էկան արմնիս

Տասն'ւերկու տարից Ասլան աղէն փսակիցին: Քեառսուն օր էսու խարմնիս ուրախութիւն էրին. ծառ, ձեռող, սար, քեար ուրախութիւն էրին. ինչ որ կէր Ասլան աղի խարմնիս՝ էդա քեառսուն օր կ'ուտին, կ'լսմին, կ'խաղան:

Էլաւ տիւս, կան էկաւ քեաղքի մէջ, կան էկաւ, տեսաւ՝ մեանչ փողնին մէկ պխքատ մարդ մեռիր ը:

Ձինք խաբար առից,—էսա մարդ վճով ի մեռուցիր, ընձի շանք տուէր, տը զէնիկ մեռուցիմ:

Ասին.—Էսիկ Գափրիլ Տրիշտակն ի մեռուցի:

Էսաց.—Իսն իմ Ասլան աղէն, թագաւորու տղէն,

էն վճով քեան ձի կտրիճ, որ մեռուցէր զիմ ախքատ մեանչ փողուցին:

Մէկ մարդ էսու պատասխան խոն էսաց.

—Էնի Գափրիլն էր կտրիճ,

Ոտ ըմ գեոյ էրկինք, մէկն կ'դնէր գետըն,

Համ կ'մեռուցէր զախքատ, համ զզանգին¹⁾

Մնաթ չուներ հէչ մէկ²⁾ թագաւորից:

Ասլան աղէն կանչից էսաց.

—Իս մընաթ չունիմ Գափրիլ Տրիշտակից.

Իս կ'ըլնիմ, խեծնիմ զԲող-Բէդաւին

Կ'դնիմ քամակ զին սագաֆին,

Կ'կախիմ մօտէն ուրբեքն³⁾ ոսկին,

Կ'առնիմ իմ ձեռ թուր կէծակին,

Կ'ըլնիմ կ'կանգնիմ մեանչ իմ բախչին,

Որ Գափրիլ շատ կտրիճ ը,

Թըխ կեայ իմ դէմ կանգնը.

Որ իմ դէմ կանգնը, խիտ կ'կուռիմ,

1) Հարուստ: 2) Ոչ մի: 3) Ասպանդակ:

Կ'զարկիմ, զՏրիշտակ կ'սպանիմ,
Իմ ախքաղ փուխ¹⁾ կ'խանիմ:

Գափրիլ Տրիշտակ յերկնուց էջաւ գետըն,
Ասլան աղի դէմաց կանգնաւ:

Ասլան աղէն որ խեծաւ Բող-Բէդաւին,

Բռնից ուր ձեռ թուր կէծակին,

Գաւի կանգնաւ էն սուփ Տրիշտակին.

Հրիշտակ, որ էրկնուց էջաւ,

Խատ Ասլան աղին բռնից լախրդին:

Իրիք օր, իրիք գիշեր կուի էրաւ խատ Ասլան աղին.

Ասլան աղէն թուր սրտով կ'զարկէր Գափրիլ Տրիշտակին:

Իրիք օր, իրիք գիշեր ինչ լըմացաւ, Տէրն քեաղցրացաւ,

Գափրիլ Տրիշտակ վեար Ասլան աղին բարկացաւ,

Ասլան աղէն թուր ձախից.

Գափրիլ Տրիշտակ Ասլան աղին սրտով էզար, էլ չպախից.

Յիւշն գլխուց տարաւ:

Պիրըցին, թալըցին մեանչ ուր տեղաց:

Էնդեղ էսաց.—Գափրիլ իս քիւ բախդ, քիւ Աստըծուն, իս չէր գիտը, որ մեռնիլ կէր աշխարհ:

Էսաց.—Ճար չկայ, քիւ խոգին տ'առնիմ:

Շատ ըուջայ²⁾ ինկաւ, էսաց.—Իմ խոգին մ'առնի, իս ջհէլ իմ, հալա քսան տարեկան իմ:

Էսաց.—Չ'ըլնը, ես մէկ մարդ կ'պիրիս, խոգին տայ քիւ խոգու փոխան, ես քիւ խոգին կ'առնիմ:

Ասլան աղէն շալեով կանչից.

—Եաման խերիկ, իսն իմ Ասլան աղէն՝ ջհէլ տղայ,

Գափրիլ Տրիշտակ զիմ խոգին կ'առնը, մաջալ³⁾ չկայ,

Պիրիս, քիւ խոգին տաս իմ խոգու փոխան:

1) Փոխ, տեղը: 2) Խնդրեց: 3) Ժամանակ, միջոց:

Խէր էնդեղ պատասխան իտու, էսաց.

— Իս իմ խուզին չիմ իտայ քիւ խուզու փոխան:

Իս կ'մնամ սաղ, տիւ կինա դատաստան:

Ասլան աղէն կանչից մօր.

— Ո՛վ քաղցրիկ մերիկ, իսն իմ քիւ տղէն, որ մէկ որտին:

Քենէ կ'ուզիմ քիւ խուզին իմ խուզու փոխան:

Մէր կ'ասի. — Իս չիմ իտայ իմ տղայ — տղայ խոզին քիւ խոզու փոխան,

Տիւ ջահիլ կ'մեռնիս, արտար կ'երթաս դատաստան:

Էլ Գափրիլ Տրիշտակ աչքիր ուլուրից վերայ. Ասլան աղէն յախու Տէնց մեռաւ տեղաց տեղ. «վայ վայ կ'էնի»:

Ճար կտրաւ, էսաց. — Եամա՞ն Գափրիլ, մէ կնիկ ունիմ, էնու մօտէն էլ խաբար առնիմ, թի իտու, իտու. չ'իտու՝ իմ խոզին առ:

Վանչից. — Ո՛վ Մարգրիտ, Գափրիլ Տրիշտակ զիմ խոզին կ'առնը, Վ'ասի՛ եան մէկ խուզի պիրիս քիւ խուզուն փոխան, Եան չէ՛ կ'առնիմ քիւ խոզին տղայ — տղայ կ'տա — նիմ դատաստան:

Մարգրիտն էր կանչից, էլաց.

— Ասլան աղէն, քի կ'մեռնիմ,

Իսն իմ էրկու տարուան խարս,

Իս իմ խոզին կ'տամ քիւ խոզու փոխան,

Վաղ տիւ կ'երթաս, ըզը չ'կանչին որպաւարի վեար աշխրին:

Ասլան աղէն ցաւ իթուղ. Ասլան աղէն ժրաւ, նստաւ:

Ցաւ ինկաւ վար կնկան, կնիկ պառկաւ:

Գափրիլ Տրիշտակ զէնու խոզին քեշից, էխան վեար չըքիրուն: Տրիշտակ էլաւ էրկինք:

Միայն Տէր խարցնից, էսաց. — Ի՞նչ կայ, Տրիշտակ:

Տրիշտակ էսաց. — Միայն Տէր, Տիւ գիտիս, քի այան¹⁾ը:

Տրիշտակ իջաւ գետըն, զՏոգին քաշից, էխան վեար սրտին: Վնկան էսաց. — Խալալ սրտով քիւ խոզին կ'տամ էնու փոխան: Վնիկ էսաց. — Իս խալալ սրտով իմ խոզին տուիր իմ իմ մարդու փոխան:

Էլ էլաւ մատ առաջի Աստուած:

Էսաց. — Ի՞նչ կայ, Գափրիլ:

Էսաց. — Իմ Տէր, Տիւ գիտիս, քի այան ը:

Էլ էլաւ գետըն. զխոզին քաշեց, էխան վեար բոկին²⁾:

Էլ կնկան մօտէն խարցնից. — Տիւ քիւ խոզին խալալ սրտով կ'տամ քիւ մարդու փոխան:

Էսաց. — Խալալ սրտով տուիր իմ իմ մարդու փոխան:

Ինչ էլաւ վեար բոկին, էլ էլաւ մատ առաջի Աստուած:

Էսաց. — Գափրիլ, ի՞նչ կայ:

Էսաց. — Քի այան ը, Տէր, Տիւ գիտիս:

Էսաց. — Հայդէ կինա, էսաց, խարիր քեառսուն տարի էն էրկըսին էլ ումր տուի էն կնկայ խաթրը խամա, էնու սէրը — թընը խաթրը խամա, ինչ մարդուն ըցկուն կ'սիրէր:

Էլան խարիր քեառսուն տարի մնացին աշխարհ. կերան, խըման, ուրախութիւն էրին, յանգեախ³⁾ նուր իմացաւ, որ մեռնիլ կէր:

Էլաւ, փառք իտու Աստըծուն. կերան, խման չուր խարիր քեառսուն տարի. արտար մեռին, քեացին արքաութիւն:

¹⁾ Յայտնի է: ²⁾ Բուկ, կոկորդ: ³⁾ Այն ժամանակ:

Բ.

Կ Ե Ր Ո Ս Խ Ը Չ *)

Էն շապաթ օր լեոս կիրակի
 Քեառսուն խոտաղ ժողովեցին,
 Մէկ պողէ խաչ ըմ շինեցին,
 Գեոզի¹⁾ թաւով²⁾ փաթըթեցին,
 Չորս գլոխ խնձորեցին,
 Կայնան դէմաց խաչ խանեցին,
 Ուրանց Աստուած որ կանչեցին,
 Մէ մէ ծոնդր, աղօթ արեցին,—
 Աստու Տրամանով պողէ խաչ արծաթ դարձրցին,
 Խընձորներ ոսկի դարձրցին,
 Գեոզի . . . դարձրցին:
 Կայնան դէմաց խաչ խանեցին,
 Մէ մէկ ծոնդր, աղօթ արեցին,
 Մէ մէկ բերան որ տէր ողորմեա կանչեցին,—
 Աստու Տրամանով մասունք էրկնից մէջ իջրցին:
 Թաւ, կնաց մեանչ Կարոս ածուին.
 Գիշեր լեոս կ'անէր վեար Կարոս ածուին,
 Ցերեկ խով կ'անէր վեար Կարոս ածուին,—
 Անուն Կարոս խաչ կոչրցին:

1) Ընկոյղ: 2) Թաւ, տերև:

*) Այս վիպական երգը գրի են առել նաև Հ. Ա. Ա. Սեդ-
 րակեան իւր «Քնար Մշեցոց և Վանեցոց» ժողովրդական երգերի
 ժողովածուի և Շերէնց «Վանայ սաղի» մէջ: Այս երգը ասել է
 մեզ «Սանասարի և Բաղդասարի ծնունդը» պատմող Մոկացին:

Էլան, խաբար տարան էն գեղի իշխանին,
 Աստուած աղէկն անի էն գեղի իշխանին,
 Էլաւ, խաբար տուեց իր գեղի ժողովրդին,
 Ուրան գեղի ժողովուրդ ժողվեց,
 Մեծ բախանով խաղալամայ կապից,
 Տէր ողորմեա ասելով՝ էկաւ դէմաց Կարոս խաչին.
 Կարոս խաչ թաւ գիրկ մեծ քճանին:
 Տէր ողորմեա ասելով՝ տարան դրեցին մեանչ տաճարին:
 Գիշեր լեոս կ'անէր վեար տաճարին,
 Ցերեկ խով կ'անէր վեար տաճարին:

Խե լսողաց¹⁾ մէ Տարիւր յիսուն տարեկան
 Շուն գզիր ըմ կար մէջ գեղին.
 Խաբար տարաւ բուրդ Պարոնին,
 Խեւք բցեց բուրդ Պարոնին,
 Ասաց.— Մէ խաչ ի փայդա²⁾ ըլիւր Խայոց աղգին,
 Գիշեր լեոս կ'անի վեար տաճարին,
 Ցերեկ խով կ'անի վեար տաճարին.
 Էն բաբաթ³⁾ չի խայոց աղգին,
 Էն բաբաթ ի քեո դիւրնին.
 Գիշեր լեոս կ'անի վար քիւ դիւրնին,
 Ցերեկ խով կ'անի վար քիւ դիւրնին:

Խեւքն ընկաւ քիւրդ Պարոնին.
 Էլաւ Ալին, Յուսրով խրկեց էն գեղ
 Գէմ Կարոս խաչին՝ տիւռ իշխանին:
 Աստուած աղէկն անի էն գեղի իշխանին.
 Մէկ յըլին⁴⁾ ոսկի լցրից,
 Մէկ յըլին արծաթ,
 Իպի բուրդ Պարոնին,

1) Հեռու լսողներից: 2) Գուրս եկել, յառաջացել: 3) Արժան
 չէ: 4) Լիքը:

Ասաց.— Հիւի¹⁾ կ'անեմ քուրդ Պարոնին,
 Ռըջայ կ'անեմ քուրդ Պարոնին,
 Էն բան չունի խայոց խաչին.
 Կ'ուզի ոսկի, էսա ոսկի,
 Կ'ուզի արծաթ, էսա արծաթ,
 Խաչ որ կայ՝ ոսկի արծաթ ա:
 Խելք չ'ընկաւ Ալին, Յուսըվին:

Լալեով մոմալով տարան տիւռ տաճարին,
 Կարոս խաչ բերըցին գէմաց Ալին:
 Կատղաւ Ալին, կատղաւ ուր ձին,
 Կատղաւ Յուսըվ, ատամն առից թւի կաշին,
 Ինչպէս ձին կտրի ուր գարին.
 Լցրին մեանչ մաղէ խարարին²⁾,
 Խրկեցին քուրդ Պարոնին,
 Ասին.— Առ քի աշնան զաւուրմայ³⁾:

Էն խարիր յիսուն տարեկան շուն գղիր
 Էլաւ խելք բցից քուրդ Պարոնին,
 Ասաց.— Էն բան չի Կարոս խաչին,
 Էն բան ա խայոց աղգին:

Խելքն ընկաւ քուրդ Պարոնին,
 Էլաւ, կայնաւ վեար ուր բըջին,
 Չէն ըմ էտուր մեանչ ուր քաղքին,
 Եօթ խաղար իցցուն շոշուն իցկից յիւրիւր վեար Կարոս խաչին:

Գնացին, խասան մեանչ կէս դաշտին.
 Յետին դարձաւ վեար յըռչընին,

1) Խնդիրը: 2) Մեծ ջուալ: 3) Տապակած միս, տհալ:

Յէռջին դարձաւ վեար յետընին,
 Մէ մէկու տուեցին յըռջիւ սրի, թրի:
 Ջամդաբէ բերթեր շինեցին,
 Արընէ գետեր կապիցին:

Մէկ խաբրպիր պրծաւ,
 Խաբար տարաւ քուրդ Պարոնին.
 Ասաց.— Աստուած քանդը բիւ տուն,
 Էլանք, գնացինք, խասանք մեանչ կէս դաշտին,
 Յետին դարձաւ վար յըռջիւնին,
 Յիռջին դարձաւ վեար յետընին,
 Մէ մէկու տուեցին յիռջիւ սրի, թրի.
 Ջամդաբէ բերթեր շինեցին,
 Արընէ գետեր կապիցին,
 Ես խաբրապիր պրծայ,
 Խաբար պիրըցի քեզ:

Չեղջն ընկաւ սիրտ քուրդ Պարոնին.
 Էլաւ, կայնաւ վեար ուր չոբին,
 Ասաց.— Հիւի կ'անեմ Կարոս խաչին,
 Ռըջայ կ'անեմ Կարոս խաչին,
 Ունիմ քառսուն կոճով կռուան,
 Մատաղ կ'անիմ Կարոս խաչին,
 Տիւ բան չ'անես նուր մանուկին:
 Ասաց.— Հիւի կ'անեմ Կարոս խաչին,
 Ռըջայ կ'անեմ Կարոս խաչին,
 Ունիմ քեռսսուն գիւմ-գիւմ¹⁾ ոսկի
 Խաչխամիուր անեմ Կարոս խաչին,
 Տիւ բան չ'անես իմ գիւրնին:
 Ասաց.— Հիւի կ'անեմ Կարոս խաչին

1) Պղնձէ սափոր:

Ռըջայ կ'անեմ Կարոս խաչին,
Ունիմ քառսուն անծըն¹⁾ էրինջ,
Մատաղ կ'անեմ Կարոս խաչին,
Տիւ բան չանես իմ բերթին:

Հիւէն չընցաւ մօտ Կարոս խաչին,
Կատղաւ մանուկ ուրօրոցին,
Կատղաւ խանում ուր օթախին,
Կատղաւ Պարոն ուր դիւրնին,
Էնու բերթ էրերաց վեար ուր խըմին:

Կերն ընկաւ գզրի բերան,
Շներ խանին, տարան, կերան,
Աշխար ժողվան, գնացին սէյրան:

Գ.

Նարեկածին խաց կ'տանէր. *)
Մշակտիր պիրին ջիւրի խրկեցին,
Նստան զխաց ճաշակեցին,
Մէզար²⁾ յիլին քակուռ արին,
Զնարեկածին ջարբեցին³⁾:
Նարեկածին էկաւ, կանչից մշակտիրուն.
«Էկէք ձի խաց ճաշակեցէք»:
Մշակտիր ասին.— Կինա վեար խացին, մենք կ'կեանք:
Նարեկածին զմէզար էպաց,
Տեսաւ լիք քակուռ էրած.
Նարեկեցին քոչիր⁴⁾ էզար գետըն,

1) Անծին: 2) Մէզար—բրդից գործած այն հաստ սփռոցն է, որ ձգում են սովորաբար խմորի վերայ, բայց երբեմն էլ սեղանի սփռոցի տեղ: 3) Փորձեցին: 4) Ծնկներ, չորեր:


*) Սոյն ժողովրդական երգն աննշան փոփոխութեամբ տեսել ենք և մի ձևով գրում, որի մասին մի ուրիշ անգամ կ'ըխօսենք:

Զմէզար խաչակնքից.
Մշակտիր էկան տեսան,
Քակուռ խացնի դարցի.
Մշակտիր զարմանք մնացին:
Նարեկածին [Թորկից¹⁾] կինաց Ղարղիգու կապան,
Տեսաւ խովիւ մեռի,
Ոխար մշմուր²⁾ ի մնացի.
Էլաւ, յանտեղ եօթ տարի խովիւութին էրաւ,
Զհասն³⁾ առից, իտու, հէթմքիր շախից,
— Հէթմ շախոզ Նարեկեծի:
Գեառ, կէլ խըտրաց կէրըծին,
Էկին, տեսան, զարմանք մնացին:

Նարեկեծին [Թորկից, կինաց Մշու էրկիր,
Կինաց մէկ մարտու նոքարութին.
Մարտն էլ շատ անախում⁴⁾ պարտքնտէր էր.
Էլաւ, զիւր կալ էրաւ.
Պարտքնտէրքիր էկան, ժողուան, էկին յանդեղ
Էլաւ, [Թորկից, մտաւ ուր տուն, էլաց:
Նարեկեծին կանչից էն մարտիրուն.
— Խաց կ'տանէք ձի փարը տեղ:
Էսաց.— Որ տիւ խաց տաս, մենք շատ ալվար ինք,
Նարեկեծին քոչն էզար գետըն,
Շեղքն⁵⁾ էլ խաչակնքից,
Էլաւ, բիրադի փարը տեղը խաց ետու,
Բիրադի կայիլ⁶⁾ էլան, [Թորկին, կեացին:
Նարեկեծին էկաւ, կանչից.
— Աղա, [սուր⁷⁾] ո՞րտեղնի, մինք զխաց խուրինք:
Ըսաց.— Դէ, կինա դէն, տիւ էկիր իս վեար իմ սրտին
մանանեղ կ'ցանխս:

1) Թորկեց: 2) Անտէր, անտիրական: 3) Վարձ: 4) Անհաշու: 5) Շեղջ, կոյտ: 6) Համաձայն: 7) Հոր, որի մէջ ցորեն են լցնում:

1005
22605



Ըսաց.— Տիւ իլի, տիսի, բիրադի կայիլ էլած, կեացած:

Կնիկ էլաւ, տեսաւ շեղք աւալ շեղքնի.

Էկաւ, կանչից.— Մարտ իլի, զաղուն կրի տուն:

Էլաւ, կանգնաւ. զաղուն կրիցին,

Ջսուրիւր բիրադի լցին,

Տալ զտուն էլ աղուն լցին:

— Պարտքնտէր պարտքից աղատող Նարեկեծին,

Վեար Նարեկեծուն զարմանք մնացին:

Էլաւ. [Թորկից, էկաւ մեանչ մէկ գեղի:

Կնաց, տեսաւ նուրափեսէն մեռիւր վեար աթոռին,

Խէր, մէր նստած դառնիկն կըլան:

Նարեկեծին քեռչն էղար գետըն,

Գեողայ¹⁾ էրաւ մի Ստեղծողին, —

Նուրափեսան յարաւ վեար ուր աթոռին:

Խէր, մէր շատ ուրախացան վեար աստանուրին:

Թորկից էկաւ, խասաւ Նարեկ:

Մեռել յարացող սուփ Նարեկեծին:

Սիսայ վարդապիտանիւր ըսան, զարմանք մնացին,

Պիրին, զՆարեկեծին ջարբիցին.

Ջչափուկ լիք ջիւր արին,

Նարեկեծուն հագեայ²⁾ յրեողկեցին:

Նարեկեծին էրկու էղւրնիկ մուրթից,

Վարդապիտուն կանչից.

— Էկէք, ձի խաց ճաշակեցէք:

— Նեա տիւ ի՞նչ էրիր:

— Իս չիր գիտի [Թ'օրն էր ուրպաթ,

Հրաման էրէք՝ [Թըղ էրթան:

— Մինք կարողութին չունինք,

Տիւ էրիր իս, տիւ հրաման էրա՝ [Թըլս էրթան:

1) Խնդիր, պաղատանք: 2) Ընծայ:

Նարեկեծին քիւչիւր էղար գետըն,

Ջեղւրնէն խաչակնքից.

Էրկուս [Թուան, կինացին.

Վարդապիտքիր տեսան, զարմանք մնացին:

Էլաւ, զչափուկ ջիւր էլից,

Վեարայ կրակ էտի,

Վեար կրակըն բեամբակն էտի,

Ասաց.— Առէք ձի առաջնորթըն հագիա տարէք:

Էլան, առան, կեացին.

Առաջնորթ էլաւ, տեսաւ՝

Նեա ջիւր զկրակն էր ընցուցիր.

Նեա կրակ զբեամբակն էր ընցուցիր.

Շատ անախուն զարմանք մնացին:—

Սըրփ զանեզան, սըփ Նարեկեծին:



ՄՈՒԿԱՅ ՄԻՐՁԻՆ.

Թուղթ մ'էկաւ Ջղիրու բեաղքէն,

Էկաւ, դէպաւ Մուկաց Միրզին.

Միրզէն կեարդաց բեաղքրիկ լիզուէն,

Քեամից մաղդէն¹⁾, շլից աչքիր.—

Խաղա՛ր ափսուս Մուկաց Միրզէն:

Կանչից էսաց ուր մշակին.

— Տիւս քեաշի Բող-Նիդաֆին,

Վեարայ տիրէք զինը սագաֆին,

Իս տերթամ, խամնիմ չուր Ջղիրին.—

Խաղա՛ր ափսուս Մուկաց Միրզէն:

1) Քիթը կան արեց, տիրեց:

Մուկաց Միրզէն խասաւ Զղերին.

Քեաղաք ժողվան, էկան թամաշայ.—

Խազմր ափսուս Մուկաց Միրզէն:

Բէմուրադ կենէր կոլոտ խոջէն,—

Ըլաւ, առից փարէն, էջաւ շուկէն.

Առից մէկ բաշըլէն¹⁾,

Տանկի իրես դեղից, կաժից²⁾ ըզբաշըլին.

Վաժ մ'ինք կերաւ, մէկ խոու Մուկաց Միրզին,—

Բէմուրա՛դ կէնէր կոլոտ խոջէն:

Վախաւ լամէն, թափաւ մաղիր,

Շրջուաւ բալաք աչքիր.—

Բէմուրա՛դ կենէր կոլոտ խոջէն:

Մուկաց Միրզէն խեծաւ զձին,

Էկաւ, խասաւ Պոնաշէն,

Վուժն ի կթխէն կախած նաշէն.

Բէմուրա՛դ կենէր կոլոտ խոջէն:

Զհար տարէք Մալաքեաւէն,

Թը խաղայ Խան-աղէն,

Թը խաղայ Զան-աղէն.

Բէմուրա՛դ կենէր կոլոտ խոջէն:

Էրկուս կ'խաղան մէկն ի խաղէն.

Տարան, խասան Մալաքեաւէն.

Մուկացիք էկան ժողվան մօտ Մուկաց Միրզին.—

Բէմուրա՛դ կենէր կոլոտ խոջէն:

1) Չմերուկ: 2) Վարեց, բաժին արեց:

Ե.

Մեռաւ էն, ինչ շատ մալ ունէր.

Մեռաւ էն, ինչ նուր կ'շինէր,

Մեռաւ Զալալունց հէքիմ,

Ինչ ամեն խուցիր կ'դեղէր,—

Մէկ խուց մնաց քասար¹⁾ սրտէն:

Մեռաւ Դաւիթ Մարգարէն

Որ նստաւ ութ կանոն սաղմոս էսաց ուր սրտէն.

Առից զկացին, կինաց մէրին²⁾.

Վարից զփէտ, շինից նխշուն տամբիւրին³⁾,

Վերայ առից պողվտէ լարին,

Ինչ ձեռ կ'տէր՝ խաղար ձէն կ'ըլէր մնէն:

Մեռաւ Սէղըմոն յիմաստուն,—

Տաճար շինից լիւսեղէն,

Էպաց երիք խարիր վից փանջարէն⁴⁾,

Շողըմ կ'ըլէր օրէն, մէկ մոնէր,

Քեաղաք քեաղքով թափան թամաշայ տաճարին.

Ախչիկ մեղաւ Արաբիւնց տնէն,

Խագաւ շապիկ թխտեղէն,

Վերայ խագաւ շարեղէն.

Սէղըմընը սերտ աւրաւ վերէն,

Խրիշտակնիր զարկին թագ տարան լիւսեղէն.

Նստաւ աղաղակից ուր Աստումնէն.

Թագ պիրին, ալ գեոհար չունէր յառաջ թագին:

Մեռաւ Աղէքսանդր թագաւուր,—

Սանրից իրիք կողըմ գիւնիին,

Մէկ մնաց քասար ուր սրտէն.

1) Անբժշկելի: 2) Անտառ: 3) Սաղ: 4) Լուսամուտ:

Զծովիր կրակից.

Ծովու թագաւոր տիւս էկաւ,
 Էսաց.— Իս թագաւոր իմ ջրեղէն,
 Տիւ թագաւոր իս խողեղէն.
 Իս կարօտ իմ Աստու արիւին.
 Տիւ ի՞նչ կ'ուզիս իմ կողմակէն:
 Էսաց.— Կ'ուզիմ քիւ կողմակէն
 Խաղար փիւր-փիւր¹⁾ ձիւկ,
 Իս կուզիմ քիւ կողմակէն բալասան ծաղիկ,
 Ինչ Խայու օրէնք վերան կատարվը:

Ծառ ըմ կէր մէջ արընկին ծովերուն,
 Խաւք ըմ կէր մեանչ էն ծովուն.
 Իւր պիւն շինից էն ծառը ծէրք.
 Գերան կ'պերէր ախշրէն:
 Քեաղաք քեաղքով կ'թափէն,
 Ձէն կ'ընէր ուրինց մնէն,
 Որ գա խաւք չքինէր,
 Գերան փրթնէր, աւրէր քեաղաք զըմէն:
 Զպիւն շինից, թըմըմից,
 Փառ չ'էտուր Աստծումնէն.
 Գաղբաւ վեար ուր պնին,
 Խպարտացաւ ուր մնէն:
 Աստծուց հրաման էղաւ՝
 Կրակ էղաւ ուր թիւքիրին,
 Ընկաւ պիւն, վառից զըմէն:

1) Բիւր-բիւր.



Յնծացէք, ուրախացէք, ալէլուեա
 Ասօր տուն¹⁾ էր Ծննդեան, ալէլուեա,
 Մայրամ կինաց տեռուն ի յերին²⁾, ալէլուեա
 Ծնկնիր էտու մարմար քեարին...
 Մեկնաւ, իպի Քրիստուս որտին...
 Ինիքի³⁾, բիւրթ⁴⁾ խանձարիւր...
 Քրիստուս մեանչ քի փաթըթեցին...
 Ինիքի, շուՖ ուրուրուց...
 Քրիստուս մեանչ քի ուրուրըցին...
 Ինիքի, սուրբ Յեովանէս...
 Քրիստոսին քաւուր արին...
 Ինիքի, գիտ Յորգորէն...
 Քրիստուս մեանչ քի մկրտիցին:
 Էս տուն շինըցին գեարնան շէնքեով...
 Մնիր յինի⁵⁾ ծառն է խնգին.
 Գերանքտիր յինի քեան փէխէխին.
 Ալաշն էր վերայ ծալ-ծալ օսկի,
 Խողն ի վերայ սրսուռ⁶⁾ մարգրիտ,
 Թոնիր յինի քեանց էղեկածին⁷⁾.
 Խարսնիր պիւլիւր քեանց էղընին⁸⁾,
 Ձիր լաճի անուն ի՞նչի.
 (Այս անուն) նստի ծառի ծէքին⁹⁾,
 Սուփրէն¹⁰⁾ յընջիւ խաղար բարին,

1) Տօն: 2) Այր, քարայր: 3) Երանի: 4) Բուրբ: 5) Մէջը:
 6) Մաքուր: 7) Եկեղեցի: 8) Աղանիններ: 9) Ծայրին: 10) Սփռոց
 սեղանի:

*) Այս երգն ասուում են Մոկացի երեխաները Ծննդեան գի-
 շերը երգիկից երգիկ պալտելով և իրենց համար միզ և ուտե-
 լեղէն հաւաքելով: Այս երգի մի ուրիշ վարիանտը գտնուում է Հ.
 Սեդրակեանի «Քնար Մշեցուց և Վանեցուց» ժողովածուի մէջ:

Վթխէն ը ձեռ նռան գինի:

Մամէ մամէ, տիւ ելի սօլիր խագի, որ Փռֆուայ,
Լաչին¹⁾ թըլ որ սրուայ,
Թըլ զաջ ոտն ի բարին.
Վինա մառանի տեռու բաց, որ ճուվուայ,
Մաղ ըմ կեոքով²⁾ մէկ չիր պի, որ խոխուայ:

Է.

Ղումրին էսաց.— Արուր. ենչո՞ւ կ'լեաս.
Էսաց.— Աշուն է, ացկուն³⁾ տը լեամ,
Արուն կաթի աչքերուս.
Իս ի՞նչըն տ'էնիմ էնա ձէթիկ ձեաքտիրուն⁴⁾:
Էսաց. Տիւ մի լեա, աշունի,
Վեաղ տ'ըլնի գեարուն.
Վ'առնիմ գքի, կ'ըլնինք եա բանձրիկ սարերուն
Մե խամիր⁵⁾ կ'տանք խարա⁶⁾ քեամուն,
Մե տուն կ'չինինք մեանչ գեաղիրուն⁷⁾:
Մէ տեռու կ'պրանանք Սնդուաց քեամուն:

Ը.

Վռննկ, յի՞ւստ կը կեաս Բաղդատայ չօլէն⁸⁾
Խաբրիկ ըմ չունի՞ս իմ խօրէն, մօրէն:
— Գիւ խէրն ի մեռի, քիւ մէրն ի շիւարի,

1) Լէչակ, կանանց գլխի շոր: 2) Ընկոյզ, պոպոք: 3) Այնպէս
այնքան: 4) Չագերին: 5) Վիշտ, ցաւ: 6) Հարաւ: 7) Փշոտ բոյս է
8) Դաշտ:

Առիր ուր ձէթիկ ձեաքտիր ձըւարիր:

Վռննկ, Աստուած կ'սիրես,
Թխտիկ ըմ կիրիմ, տամ քեզի ամանաթ,
Տանես իմ խէրանական աշխարք,
Ասես՝ քիւ մէկ տղէն գեոյ Հնդրստան:

ԱՐՆՈՍ ԵՒ ՂՈՒՐՈՒՇՀԱԲ*)

Թ.

Արնոսն էր սարերաց բարնբար¹⁾
Թուխ ամպիրն էր զարավիւլ,
Սըւտակ ամպիրն էր սարաքեար.
Վանչից Ղուռուշհաբ, էսաց.
— Իսն իմ սարերաց բարնբար,
Թուխ ամպիրն էր զարավիւլ,
Սըւտակ ամպիրն էր սարաքեար:

— Արնոս տիւ մը վեախի,
Մա զի մա չրին ի ք'անուն,
Ան ժիւկն ի վեարտաւար
Վաւին իմ տկէն չ'իլըսնը²⁾:
· · · · ·
· · · · ·

1) Հաւասար: 2) Չի վերջանում:
*) Երկու սարերի խօսակցութիւնը թէև ամբողջ չգիտեր
երգիչը, բայց աւելորդ չհամարեցինք այս երկու տունն էլ
այստեղ նշանակել:

Ս Ի Ր Ո Յ Ե Ր Գ Ե Ր

Ժ.

Բարեոժնի անիւշ, թի ծմէն,
 Կեաւուտ կանաճացիր քեան զըմէն,
 Չիմ գիտը աըքաուծին ի անիւշ
 Թէ խատիմ եարուջ էրթանք ծմէն:

Ասօր տ'երթանք մի զեղան¹⁾,
 Մի քեղէք²⁾ տը շինինք մա գեղ³⁾ ոահան,
 Թը պակսաւ, փոխ տ'էնինք մի տըրկըցանց⁴⁾ մօտէն:

Ախ տ'ըլնինք, տ'երթանք ջիւկտիր⁵⁾,
 Իմ դեոստ պղտիկ ի,
 Չը կերի պոնէ զջիւրին,
 Տ'երթամ հաւար, տը խամսիմ իմ մրազին:

ԺԱ.

Ջատու էկայ քեզի խուր⁶⁾
 Քիւ բեաժն ի Մսրայ թուր,
 Քիւ ծծիրն ի պաղ յաղպիւր.
 Էրկու առու տակէն կ'երթէր,
 Իս չըր գիտը դիւր կ'երթէր:
 Կերթէր քիւ խէրանց բեախէն վեար վեարտիրուն.
 Քեաֆը վեարտ ըմ կէր յինի.
 Իս ձեռ տըլը տը կտրէր,
 Թուփ էկաւ յըրիւր⁷⁾:

1) Սար, եայլաղ: 2) Տնակ: 3) Ծաղիկ, վարդ: 4) Հարեան:
 5) Սար, ամարանոց: 6) Հիւր: 7) Էկաւ յիւրիւր — կուչ եկաւ:

Ջատու¹⁾ էկայ քեզի խուր,
 Թ'Աստուած կ'սիրիս, խորոտ կնկան չէնիս քեաւուր.
 Էնու իրիսքիր աւետարան էր, շիւշպին²⁾ էր պիւլիւր,
 Իսն էր զատնու ըխտաւուր:

ԺԲ.

Հայլա տնաւիր տուն,
 Քեամին մի տա մի տուն,
 Տ'օրօրիմ իմ պղտիկ կիրկանուց.
 Տիւ քինի, մեանչ քինուն իս քրտընիր,
 Տը կեամ պագնիմ կարմիր իրիս:

Հայլա տնաւիր տուն,
 Քեամին մի տա մի տուն,
 Ասօր բեախէ՛մ իմ տըսիր,
 Էրկու շամամ էր յինի,
 Սիւ օձն էր փաթըթիր պիւլիւր:

Հայլա տնաւիր տուն,
 Քեամին մի տա մի տուն.
 Ասօր նստիմ անցկուն տը լեամ:
 Սիրտս ի մրմուռ, աչքիրս ի լեաց,
 Անցկուն տը լեամ, բեարէ կարկուտ աչքիրուցս իկեայ:

Կիեամ³⁾ Հալաբայ խիտ,
 Իմ խուցիրն ի շատ.
 Վանայ ծով զըմէն դեղ ըլնը,
 Ջիմ բիրինքտիր⁴⁾ չի դեղը:

1) Հեռուից: 2) Շիւշպի — աւետարանի քողը, թաշկինակը:
 3) Կ'գամ: 4) Վէրքեր:

ԺԳ.

Ախչի, տ'ընիմ տամբիւրվան,
 Կեամ, նստիմ քիւ խէրանց բեախչէն,
 Էնքան տը զեարկիմ, էնքան տ'ասիմ,
 Ձիւր խալի միս, թափի օսկուր:

— Ասօր ձի քի յաբով էնքան ի զեարկած,
 Հալաբայ արբուշում բերած, բիրինքտիրն ի կապած,
 Շամայ շեաքար բերած, բիրինքտիրն ի բեաւած,
 Աջմու բամբակն ի բերած, էրինքտիրն ի սրբած,
 Ինչ իմ աչք իյնի քիւ աչք,
 Անցկուն, ինչ վեարտ ուհան վեար ձի չի շաժած¹⁾:

Ախչի իս քիւ գեարդէն էրըցայ.
 Թափաւ միս, խալաւ օսկուր,
 Խոգաւարանք էղայ քիւ գեարդէն:

— Տղայ, տի մի' վեախի,
 Վեաղ իս կ'երթամ իմ խէրանց բեախչէն.
 Տիւ էրի, իս մէկ պագ ըմ տամ քեղի,
 Իս քիւ տղայ սըրտ ձենէ չիմ թորկի.
 Թէ²⁾ զեարկած ձը, թըմըմած ի:

ԺԵ.

Բեաժն ի ման էր գեոլիւ³⁾ կամիշ⁴⁾
 Սըրտն ի բեախչայ, ծըծիրն էմիշ,
 Կը կեամ, պագնիմ կարմիր իրիս,
 Թ'Աստուած կ'սիրիս, չը լնիս դէմիշ.
 Խամով գեարդով ինչ տ'էնիմ բերողգեար ումը:

1) Շարժած: 2) Թէև: 3) Լճի: 4) Եղէգն:

Ախչի, քիւ բեաժն ի ոնդեալով տաշած,
 Քիւ թարթափքիրն ի կալամով քեշած,
 Իս քիւ գեարդէն էր խալած, մաշած,
 Խամով գեարդով ինչ տ'էնիմ բերողգեար ումը:

Ախչի, տիւ պղտիկ իր, իս քի սիրըցի,
 Քիւ անուն վեար իմ բեազկին կիրըցի,
 Բեոմ գ.քի չ'ընիմ սերաս կիրըցի,
 Խամով գեարդով ինչ տ'էնիմ բերողգեար ումը:



Ժ Ո Ղ Ո Վ Ր Գ Ե Կ Ե Ն Ե Թ Ե Կ Ն Ե Ր

1

Աղուիս զկարաւ պոնից:

Կարաւ ըսաց.—Աղուիս, ի՞նչ տ'էնիս:

Ըսաց.—Քի տ'ուտիմ:

Ըսաց.—Փառք տու Աստուծն, նուր զի կի:

Ինչ փառք իտու Աստուծն, կարաւ բերնէն թուաւ:

Աղուիս դարձաւ, էսաց.—Ինու տունն աւիր ըլի, ինչ չեւր կուշտ չ'ուտը, փառք տայ Աստուծն:

2

Տիր ըմ մկնիր ժողվան:

—Նէ ի՞նչ կի:

—Ջանգակ ըմ պիրէք, տանինք, կախինք կատու վղէն. ինչ կատուն կեսյ, զանգակը ձէն կեսյ, մինք ախախինք, փախինք:

Ամէն մուկ ըսաց.—Վալս, աղէկ բեամ'մ ի:

Ըսաց.—Տիւն զան մարդ պիրէք, ինչ զանգակ կախը կատու վղէն:

3

Կրիէմ' արծիւ էղան ընդիր:

Արծիւ խարցնից, էսաց.—Ի՞նչկը միսն ի անիւշ:

Ըսաց.—Իսնի միսն ը անիւշ:

Ըսաց.—Ալ միս չ'կա՞յ բեանց իսնըն անիւշ:

Ըսաց.—Կրիուն:

Ադ էլ զկրիէն վիրուց, բանձրացուց, էղար վեար բեարուն, կուտրաւ. իրի, նստաւ վերայ, կերաւ:

Ըսաց.—Կրիայ, կրիայ:

Ի՞նչ էր իկի գլխիւդ վերայ,

Տիւ էրիր՝ զքի կերայ:

4

Սիւ սարիկ ուր ձեաքտիր էխան. ճիւղացան, ըլաւ, իպի, է-
թուր:

Ըսաց.—Մարէ, տիւ զմի կ'թորկիս, տիւ մի շերաթ. ըմ չ'է-
րիր, մճայ մինք ի՞նչխ ապրինք:

Ըսաց.—Յեոր ինչ կ'թառէք, իրիշիցէք, մարդ ինչ յանգեա-
խէն կ'կեսայ, թը կղուաւ, ձեռ իտու բեար, հմա թուրցէք:

Մնաց մէկ մնէն բէվոջ էր, յանակեան էկաւ, խասաւ. չիւր
էկաւ, ընդիրքիր կեացիր ին:

Ըսաց.—Մարէ, ի՞նչ շերաթ էրիր անիւնց, զի էլ շերաթ է-
րա, իս էլ էրթամ խատ իմ հալին:

Ըսաց.—Ինչ տեղ ըմ կ'գեադրիս, կ'երըծաս, ինչ մարդ
կ'կըզը, ձեռ կ'տայ քեար, փախէք, կեացէք:

Ըսաց.—Մարէ, բալիմ մարդ էկաւ, քեար ծուց էլաւ:

Ըսաց.—Անդեոր տիւ գիտէք:

ԱՒԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐ *)

Քրիստոս Բեթղեհէմ մօրուց ծնուաւ:

Մեղքոն թագաւոր յառաւօտուն էլաւ լուացուիլու, տեսաւ որ էրկնուց վերայ մէ պայծառ աստղ յարեմտեան կողմն էլի. էսաց. — Օրհնեալ է Աստուած, մեզի մէ պոյծառ թագաւոր մ' էլի նորամանուկ:

Գեասպար թագաւոր յառաւօտուն էլաւ լուացուիլու, տեսաւ, որ մէ պոյծառ աստղ մ' էլի, ասաց. — Օրհնեալ է Աստուած, մեզի պայծառ թագաւոր մ' էլի նորամանուկ:

Բաղդասար թագաւոր յառաւօտուն էլաւ լուացուիլու. տեսաւ մէ պոյծառ աստղ մ' էլի յարեմտեան կողմ, ըսաց. — Օրհնեալ է Աստուած, մեզի պոյծառ թագաւոր մ' էլի նորամանուկ:

Բաղդասար թագաւոր ասաց. — Ախ էրանի կ'ըլնէր Մեղքոն թագաւոր իրա ասքեարով կէր էրթինք տեսուծին:

Մեղքոն թագաւոր առից զիւր կուշում, կինաց Գեասպար թագաւորու խող:

Գեասպար թագաւոր խաբար արից. էսաց. — Է՞ս բանի խաթըր իք իկի իմ խող:

Մեղքոն թագաւոր էսաց. — Մինք էկիր ինք տ'երթանք նորամանուկ տեսներու:

Գեասպար թագաւոր էսաց. — Օրհնեալ է Աստուած, սարբ էրիք իս էլ էլնիմ ձիղ խիտ կեամ:

*) Առաջինը պատմել է Բաղդասարի ձիւղը պատմող Մովսէսին, իսկ երկրորդը «Ս. Գեղարքը» Մովսէսի Յեովանը, Մովսէս վարիանտի պատմողը:

էրկու թագաւոր զկոշում էրին մէկ, կինացին Բաղդասար թագաւորու խող:

Թագաւոր խաբար յրեողկից. — Էդ ի՞նչ բանը յարով իք եկի իմ խող:

Մեղքոն թագաւոր էսաց. — Էկիր ինք, տ'երթանք նորամանուկ տեսնիլու:

Բաղդասար թագաւոր էսաց. — Մեղքոն, Գեասպար թագաւոր, կոշումով էրթանք, թանգուծին տ'էղնի ճամբսու խիտ, կուշում դարձըցինք ձիւր խողու մէջ, մինք իրիք թագաւոր վաթսուն մարդով էրթանք տիսուծին:

Կուշում դարձըցին ուրինց խող. իրիք թագաւոր վաթսուն մարդով կինացին:

Խասան Հերովտիս թագաւորի խող:

Հերովտիս թագաւոր էսաց. — Մեղքոն, Գեասպար, Բաղդասար թագաւոր, էդ յի՞ւր կ'երթէք:

Ասըցին, տիղ չինք էրթայ, ուխտ էնիլու կ'երթանք:

Հերովտիս թագաւոր ըսաց. — Զ'է, իս գիտըմ ձի նորամանուկ թագաւոր մ' էլի. տիւք էրթէք էնու երկրպագուծին տէք, յիտ դեանալիս դէս էկէք, իս էլ էրթամ:

Հերովտիս թագաւոր էնու խաթր կ'երթէր, որ զնորամանուկ տեսէր, սպանէր:

Մեղքոն, Գեասպար, Բաղդասար էլան կեացին. խասան Բեթղեհէմու սար. Մեղքոն թագաւոր կինաց տիսուծին, նորամանուկ. Գեասպար թագաւոր կինաց տիսուծին, երիտասարդ. Բաղդասար թագաւոր կինաց տիսուծին՝ ծըրունուկ խալվիւր տեսաւ:

Էկան իրիքն էլ մատ մէ մէկու. Բաղդասար թագաւոր ասաց. — Մեղքոն թագաւոր, տիւ ի՞նչխ տեսար.

Մեղքոն թագաւոր էսաց. — Իս տեսայ նորամանուկ:

Բաղդասար թագաւոր էսաց. — Գեասպար թագաւոր, տիւ ի՞նչխ տեսար:

Գեասպար թագաւոր էսաց. — Իս տեսայ երիտասարդ:

Մեւքոն թագաւոր էսաց.— Բաղդասար թագաւոր, տիւ
ի՞նչխ անսար:

Ըսաց.— Իս տեսայ ծիրուծեան ժամանակ:

Ըսաց.— Որ անցկունի, չէլաւ. էլըցէք իրիքն էլ իրարու խիտ
էրթինք տիտուծին:

Իրիքն էլ կնացին տեսան նորամանուկ. իրիքին էլ նշան տուեց:

Էլան Մուկաց էրկրով էկան. գնացին Աստուծանայ մէշէն,
էնդեղ զոնախ¹⁾ էլան. քնան:

Խլիսուն էլան, տ'երթան. Մեւքոն թագաւորու նշան կու-
րուսեր էր:

Մեւքոն թագաւոր էսաց.— Գեասպար թագաւոր, Բաղ-
դասար, ըսօր չինք էրթայ, իմ նշան կուրուկ²⁾ ի. գիշեր մնաք
ըստի, իմ նշան տիրու³⁾ զօրուծին լիւս կ'տայ, իմ նշան կերուայ: Էն
գիշերն էլ կեացին էնու դիմաց կոնախ. նշանը ձօտէն լիւս փայլեց:

Էլաւ կինաց ինչքան էրաւ չ'կարցաւ զնշան վիրուցէր:

Ջղէզ քեշից պիւլիւր, մէ պղտիկ եկեղեցի՛մ առաւօտուն սկսից
շինիւր Շինից յարի կէսն ի, Մեւքոն թագաւոր վախճանուաւ: Խաբար
կինաց էնու էրկիր: Մեւքոն թագաւորը տղէն էկաւ. խօր կերըման
պատու մէջ շինից. պատ կէսը կտրից, կէսէն խիտ շարից լրացըցուց:

Էլան կեացին ուրենց էրկիր:

Էնու խամար անուն էլաւ Աստըճան. ամա գեղի անուն յը-
ռաջ էլ Աստըճան էր. էդ զիտ⁴⁾ կրկին հաստըտուաւ:

Յիւրըսողէմ Սահակ եպսկոպոս կար:

Ժամանակ մ' էլաւ, Աստծուց ձայն էկաւ յետուր, ըսաց.—
Սահակ եպսկոպոս, առ մէկ թուր ըմ, կնա Թիլփիսու քեաղաք
Վէնկթամուրին հադիեա⁵⁾. Ժամանակ ըմ տըլնը, էրկիր էնու ձեռք
տ'անցընը, ժեամիր տը քեանդը, մարդ տը սպանը, մէշիգնիր տը
քեանդը, եխսը⁶⁾ տը բունը. յեք ժամանակ էկաւ Իւրըսողէմ
քիւ եկեղեցին քի բաշիւր:

1) Հիւր: 2) Աորած: 3) Տիրու: 4) Անգամ: 5) Ընծայ: 6) Գերի:

Սահակ եպսկոպոս առից թուր ըմ, կինաց Թիլփիսու քեա-
ղաք Վէնկթամուրին հադիեա:

Յիրուկունը, Սահակ եպսկոպոս նստիր ը, տեսաւ, Վէնկ-
թամուր մէ տղայ ը սպանի, լեալով լեացով էկաւ տուն:

Սահակ եպսկոպոս ըսաց.— Վէնկթամուր, ի՞նչը ըլի:

— Ապա եիս մարդ մ'իմ սպանի, ի՞նչխ պատասխան տը
տամ:

Ըսաց.— Մը վախանա, օրհնուած, Աստըծուց քիզ հրաման ի
էկի, ախար սաղ անցընը քիւ ձեռք. զեարկիս, քեանդիս խայուց
ժեամիր, սպանիս Տաճկնիր, քեանդիս Տաճկու մէշիգնիր եխսիր
բունիս, ը՞նչխ էնիս, մարդ քէ դայմիշ էնող չկայ: Աստծուց
էս թուրն էլ քի հադիեա ը էկի:

Վէնկթամուր էսաց.— Յիպուսկոպոս, յիք ժամանակ էդ
քեանիր յիմ ձեռ ընցաւ, իմ պարտ ըլնը քիւ իկիղիցին քի բեաշ-
խիմ:

Սահակ յիպուսկոպոս խլիսուն էլաւ կինաց յիւրըսողէմ:

Վէնկթամուր էլաւ իւր ասքեար ժողովից. խինդ խարիր ջան,
թի խաղար ջան, Թիլփիսու քեաղքէն բունից ընչանք յիւրըսողըմ.
քեանդից խայուց ժամիր, սպանից Տաճկնիր, քեանդից Տաճկու
մէշըմնիր, եխսիր բունից խայիր, կնաց էլաւ յիւրըսողէմ:

Սահակ իպսկոպոս խաչալամ կապից, էլաւ դէմ կանգնաւ:

Վէնկթամուր էկաւ մի գլեոխ իջըցրուց Սահակ իպսկա-
պուսին, ասաց.— Ի՞նչ կուզիս, ըտէնց խաչով, խաչալամով կայսիր
իս իմ դէմ:

Ասաց.— Քենէ կ'ինդրուիմ, խերիք ի ջեարտիս, սպանիս էխ-
սիր պունիս:

Վէնկթամուր ձիուց էջաւ տակ. ըսաց.— Սահակ իպսկա-
պուս, առ իմ թուր կապը քիւ վերէն, յիլի իմ ձին խեծի, տես-
նամ աշխարք ի՞նչխ կտեսնաս:

Սահակ իպսկոպոս թուր կապից վերէն, էլաւ զձին խե-

ծաւ, տեսաւ, որ Աստծուց ձայն կկեայ.— Լէնկթամուր, զեարկէր ջեարդը, սպանը, եխար բունը:

Սահակ իպիսկապուուս ձիուց էջաւ տակ, ըսաց.— Իս քիւ Աստծուն մեղայ, ինչխ գիտիս, անցկուն էրա:

Լէնկթամուր քեանդըլով ջեարդըլով էկաւ միր Մուկաց էրկիր. էկաւ մէ գեղ ըմ, էնու սնոր նստաւ, անուն Աղինըր:

Աշտըճանայ քեահանէն կինաց, էնու աղաչանք, ասաց.— Քենէ կենդրիմ, ինձի մէ փուքրիկ եկեղեցի՛մ կայ բեախշիս Աստըծուն, ընձը:

Լէնկթամուր ըսաց.— Քէշիշ, տիւ էդ ի՞նչխ մարդ իս, եիս Թիլվիսու ընչանք յիւրըսողէմ, յիւրըսողմու յընչանք ըստը ժեամ ըմ քեանդի, չիչ մարդ իմ դէմ չէկաւ խընդըրուելու խամար, տիւ էդ ի՞նչխ մարդ իս, վոր տիւ քիւ եկեղեցու խամար կխընդըրուիս: Քիւ եկեղեցին բեաշխիմ քիզ, մէկ ժիւմ խաց տը կերցըցիս իմ կուշումին, իմ եխարնիրուն:

Տէր-տէր ըսաց.— Լէնկթամուր սաղ ըլնը, որ տիւ իմ եկեղեցին ընձը բեաշխիս, մէկ ժիւմ չէ, իրէք ժիւմ քի խաց կկերցըցիմ:

Ասաց.— Բեաշխիր իմ, կընա խացը պատրաստութիւն տիս:

Տէր-տէր կնաց մէկ ոխար բիրիլ էտու զինիլ տուից. մէկ էլ մէ կողով խաց էնիլ տուից, տարաւ Աղինայ գեաշտը, Լէնկ-Թամուրի դէմ:

Լէնկթամուր տեսաւ.— էս ի՞նչխ բեանը, էս տասը մարդ անջախ տըսնայ. զքի կը զինիմ:

Քահանէն ըսաց.— Լէնկթամուր փաշէն սաղ ըլնը, մէկ քիւ եխարնի, քիւ կուշումին ասա ջերկ նստին, սեղան եիս բեաց էնիմ, խաց բցիմ պատրաստութիւն տեսնամ, էնունք թուղ ուտին:

Լէնկթամուր կանչից, ջերկ նստան:

Տէր-տէր զսեղան պատրաստից, կերակուր լցրից, դեանրձաւ դէմ աղօթրանը, խաչակնքից զսեղան:

Աստուածութիւն ուր սուփ շնորք մէջ լցրից, իրէք որ իրէք գիշիր կերան խման, չիմացան էն սեղան եա խաց ա կերած, եա չկերած:

Լէնկթամուր փաշէն ըսաց.— Քէշիշ, քիւ մուրազ ի՞նչ ի, որ քիւ մուրազ կատարիմ, տիւ լաւութիւն էրիր իմ խիս:

Տէր-տէր ըսաց.— Լէնկթամուր փաշէն սաղ ըլնը, քենէ կենդրուիմ մէկ փոքրիկ եկեղեցի՛մ ունիմ էնով մէկ եխար ընձը բեաշխիս:

Լէնկթամուր փաշէն ըսաց.— Հայդէ, քի բեաշխից:

Եխարնիր էլան կեացին:

Թիլվիսու քեաղքէն ընչանք յիւրըսողէմ, յիւրըսողմայ ընչանք Մուկաց էրկիր, Լէնկթամուր ընչանք եխարը բունի, բիրադի կեացին էն փուքրիկ եկեղեցին. էրթացող էլաւ ճանճ ըմ, կպաւ էնու պատիր, էնու ուճուոք¹⁾: Ինչքան եխար կար, բիրադի կնացին, բիրադի ժեամ լիք զլցուաւ:

Տէր-տէր աչբից տեսաւ, որ ութ մարդու տեղ պակաս ա: Գնաց խնդրուաւ Լէնկթամուր փաշին, ասաց.— Եիս քի խիտ բարիշիր իմ, եկեղըցով մէկ, ութ մարդ պակասը մնացիր:

Լէնկթամուր ըսաց.— Ջանմ, եիս յիմ թագաւորական խուսը²⁾ չիմ կուտըր. ութ մարդ բունիր իմ իմ ձեռաց յեռջիւ, վաճառական մարդ ին, որ ինչ թիւթիւնջի իմ շինի, որ ինչ կահվաջի իմ շինի: Ասաց, այ, ութ մարդ, իլեցէք տիւք էլ կեացէք: մէկ քիչ ժամանակ մնացէք էնդեխ, իս կկեամ: որ պէտքական մարդ ի, կվիրուցինք ձիկ, որ չէ, չթողնինք քէշըլին:

Էլան էն ութ մարդ էլ կեացին էնդեխ:

Էն եկեղեցին էլաւ ոչ յըրթիկ, ոչ տեռու, էլաւ մէ կտուր քեար:

Լէնկթամուր էսաց.— Երթամ տեսնամ էս ի՞նչխ եկեղեցի ը, որ էսքան մարդ տարաւ:

1) Առաստաղ: 2) Խօսք:

Գնաց տեսաւ ոչ եկեղեցի կայ, ոչ բեան. քահանայն կայսիր աղօթք կէնը:

Լէնկթամուր փաշէն ըսաց.— Բէշիշ, յի՞ւր ի քիւ եկեղեցին, ինչ իմ մարդ, բերիր իս մէջ:

Քահանայն լաց էլաւ, ըսաց.— Լէնկթամուր փաշէն սաղ ըլնը, ինչանք Տիմի ձը եկեղեցի կար, Տիմի էլաւ մէ կտուր քեար:

Լէնկթամուր վախացաւ, ըսաց.— Ըստուց փախնիմ, թէ չէ քնաս կտեսնամ:

Էլաւ կնաց ուր ասքեար առից, փախաւ:

Գնացին խասան Եղերովա սար. (ձմեռ էնդեղ փիս թիփի կընը) քարէ կորկուտ թափաւ էնունց վրայ, բիրազի սպանից, մէկ լէ չպրծաւ:

Սելաւ զէնունք տարաւ կուրցրուց մէր էրկրից:

Նիւր էն քահանայն աղօթք էրաւ, եկեղեցու տիւռ բացուաւ, էն եխսրնիր ազատուան:

Էն եկեղեցու անուն յիշացին սուրփ Ամենափրկիչ, էնդուր Տամար, որ ամէն լէ ազատից:

Էլան մէ-մէկ քեար բիրին, մէ տորբաս մ՝ էլ շինեցին յառաջ:

Ս Ա Ր Ը Ս Ը Փ Գ Է Վ Ո Ւ Ի Բ Ք

Սարը սըփ Գէվուրք ինչ մօրութ էլաւ, սարը մէջ էլաւ. ճիւղացաւ էլաւ մարդ:

Սշխար ամեն կռքապաշտ ին. Ստամբուլայ՝ քաղքի թագաւուր, կայսարու քաղքի թագաւուր բարեպաշտ ին. կռապաշտ թագաւուրքի շատ զօռ կէնին էդա բարեպաշտ թագաւորներաց. իսկի մարդ չ'էլաւ, որ էդա կռապաշտ թագաւորքի յաղթէր:

Գէվուրք տարին տասն'երկու ամիս, չուր օր ընէր ճաշ պաս կպնէր, աղօթք կէնէր. զինք խովիւ էր, սարն էր. ճաշուցին, ինչ

Տրիշտակներ զեանգ կզարկին, կ'ընգնէր էտու ահանջ, էն կը լսէր: Եթ տարի սար ոչխար կ'էրըծէր:

Էն էրկիր մէ կռապաշտ թագաւուր կէր. էսաց.— Էդա մարդ պեան չը գիտը, մէ կռքիրուն ահանջ չը դնը, պիրինք սպանինք:

Ձինք փախաւ կինաց ինկաւ Խայաստան քաղաք, էնունք աստուածապաշտ ին, էն ժամանակ Քրիստուս էլ չէր իկի ախար:

Կինաց ինկաւ Խայաստան քաղաք, յէռջիւ մէկ թագաւուրը կ'կարտէր:

Ստամբուլայ թագաւուր, Կայսարու թագաւուր ճամբելիցին Խայաստան թագաւուրու մօտ, միզի քեոմակ¹⁾ ճամբելը:

Էլաւ ժողուից մէկ խարիր խաղար ասքեար, Գէվուրք անաւուր²⁾ էրաւ գլխաւուր, ճամբելից:

Էդա ժամանակ մէկ խաւք ըմ սարէն էկաւ, թուաւ վեար էնու թիւն. էդունք որ ճամբախ կ'երթին, խաւք որ խուսէր բեարին էր, ինչ որ չը խուսէր, կը նստէր:

Կեացին խասան կայսարու քեաղաք:

Թագաւուր էրի տեսաւ, կինաց էնու դէմ կանգընաւ, էսաց.— Բիւ անուն ի՞նչ կը:

Էսաց.— Գէվուրք ր:

— Խէրանական անուն ի՞նչ կը:

Էսաց.— Չըմ գըտը, ընձը Սարը սըփ Գէվուրք կ'ասին:

Էսաց.— Մէ կռապաշտ թագաւուր վեար մի կռիւ կէնի, կարողութիւն ունի՞ս էնու յաղթիս:

Էսաց.— Աստըծու կամբեով կը յաղթիմ:

Էլաւ առից զիւր ասքեար, առից կինաց կռապաշտ թագաւուրը սնոր³⁾ խասաւ:

Կռապաշտ թագաւուր էրազ տեսաւ. մէկ մարդ էսաց.— Մէկ

1) Օգնութիւն, օգնական: 2) Անունով: 3) Սահման:

մարդ ուր ասքեարով տը կեայ վեար մի կուիւ, անուն Գէվուրք ի, տիւ էնու չըս յաղթը, տիւ կը յաղթըւիս, ան չը յաղթըւը:

Թագաւուր էսաց.— Էսի մի աստուածն էկի ընձը էրազ— միտք չէրաւ հընշտակն ի:

Էլաւ կինաց ուր կոքերու մօտ. քեառսուն, յիսուն կուռք շինած ին դրած մի սերսուսի¹⁾ տան մէջ. կինաց գլեոն իջուց կոքերուն.— Կոքիր, էսաց, էսա մարդ ի՞նչ մարդ ք ընձը տը յաղթը:

Կոքիր ասին.— Զէ, կը խաբը, սութ կասը, էն բեղի չը յաղթը:

Էսաց.— էրթամ յէռջիւ, եոխսամ կուիւ:

Ասին. կինա կուիւ, ի՞նչ կը վախանաս:

Էլաւ կանչից ասքեար առից, կինաց յէռջիւ սըլի Գէվուրքայ կուիւ:

Սըլի Գէվուրք էզար բերադի կուտուրից, ջարդից, մէկ չիթուր:

Թագաւուր զինք մընակ փախաւ, կինաց մտաւ կոքերու տուն:

Սըլի Գէվուրք ինչ էլաւ մեանչ էդ կռապաշտ քաղքին. կըռքիր բերադի ժաթ էկան տեղաց:

Սըլի Գէվուրք կինաց, էսաց.— Էդա կոքերու տուն ընձը շանք տըւէք:

Էդ գեղական բերադի խաց, էմագ կիփին կ'տանին կոքերու տուն, կոքիր խաց չին ուտը, դիւանք կը կեան կ'ժողուին, կո՛ւտին. ինունք կ'իմանան, որ կոքիր կ'ուտին:

Սըլի Գէվուրք էսաց էն գեղախին.— Որ խաց, էմագ կ'տանէք կոքերուն, իսն էլ կեամ, իրարու խիտ էրթանք:

Էլան ժողուան, խաց, էմագ առին, կեացին:

Տարան մտան կոքատուն, որ մտան, կոքիր սըլի Գէվուրքայ յախուն յըմէն կըտրտուն²⁾, շուռ առին³⁾ գեախն:

1) Մաքուր: 2) Կտոր կտոր եղան: 3) Արջուեցան, թափուեցան:

Թագաւուր մեանչ կոքերուն էր, էսաց.— Եաման, էդ վո՞վն էր էկաւ իմ կոքիր կուտուրից:

Խաց տարողքիր ասին.— Մինք չ'ինք:

— Ապա վո՞վն ի:

Էսաց.— Մինք չ'ինք, Գէվուրքն ի, զինք էկաւ էստեղ, քիւ կոքիր կուտուրից¹⁾:

Մէկ կուռք հըլա յանդեղ մնացիր էր կանգըն:

Կինաց էդա կոքուն էսաց.— Էդա մարտիւ խիտ ի՞նչ էնիմ:

Էսաց.— Էն մարդ պունիս պիրիս իմ յէռջիւ էնիս մատաղ (դե մէջն ի, դե կզուցի):

Թագաւուր յերտըցաւ, ըսաց, էն մարդ յիւր²⁾ ընը կը պիրիմ բեղի մատաղ:

Էլաւ կինաց սըլի Գէվուրք պունից, իպի. խափիլով տարան էնդեղ, ինչ որ տարան էնդեղ, զթուր բեշից թագաւուր տ'սպանէր զսուսի Գէվուրք. ինչ սըլի Գէվուրք պառկացըցուց գետըն տը զինէր, կուռք կուտուրաւ, դե մօտէն փախաւ, կինաց: Խաւք վեար էնու թիւին խուսաւ. ինչ խուսաւ, էլաւ կռապաշտ թագաւուրը ձեռ ոտ կտրից, պունից, կապից Կայսարու քաղքի թագաւուրը խամա ճամբից:

Քաղաք բերադի դարձան, էլան աստուածապաշտ:

Զինք առից ուր ասքեար, էկաւ Կայսարու քաղաք խասաւ:

Ստամբուլայ թագաւուր ճամբից մատ Կայսարու թագաւուր, էսաց.— Կռապաշտ թագաւուրու ասքար իմ չուրս պիւլիւր պունած ին, ընձը հնդատ³⁾ ճամբիւր:

Թագաւուր էսաց.— Գէվուրք, վիր Աստուածն ի, գետըն էլ զքի կը տեսնամ, վիր կինա, տիւ չ'ընըս մարդ չը կերը յաղթը:

Գէվուրք էլաւ առից զասքար կինաց դեախ Ստամբուլ. Ստամբուլայ թագաւուր էրկու աւուր ճամբախ էկաւ յէռջիւ. շատ ուրախացաւ:

1) Կոտորեց: 2) Արտեղ: 3) Օգնութիւն:

Սրբի Գեվուրբ անից ուր ասքար, կինաց դէմ կանգընաւ, կը-
ռիւ կէնը:

Շատ նեղիցին. պիրին պոնիցին. պիրին պոնիցին, պիրին տիկ
խանիցին, տարման լցին ինի. էլ Աստուած էսնեց էրաւ, յարաւ.
էլաւ կանգընաւ ուր կռիւ: Կռուաւ շատ ջարտից, զկուսպաշտ
կուտուրից, խլիսուց. տարաւ ան թագաւուրու սնոր. էսգուցայ
յիտ դարձան սրբի Գեվուրբին մէկ անգամ էլ սպանիցին. էլ Աս-
տըծուց յարուածին անից, յարաւ: Եդ էրկիրն էլ բիրադի խա-
յացըցուց, դարձիւց աստուածապաշտ:

Քշից դեան ֆոնգստուն կինաց. Պուղուս-Պիտրուս կ'ասին,
էկէք բիրադի դարձէք կուսպաշտ. էնդեղն էլ Ռուսի թագաւու-
րուծին կէր, Ռուս աստուածապաշտ էր, կինաց էնու էլ բեոմագ,
զկուսպաշտնիր կուտուրից, բիրադի անից:

Էնդեղ սրբի Գեվուրբայ էլ սպանիցին, փիթիցին, թիքայ-
թիքայ էրին:

Ջիւհար իրի Ռուսայ թագաւուրին, ասին:—Սրբի Գեվուրբ
սպանած ին:

Իրան մէկ տղայ էլաւ, տղի անուն իդի Գեվուրբ:

Աստըծու Տրաման էր շատ. էրաղ էկաւ թագաւորին, էսաց.
—Քիւ տղայ Գեվուրբ տանիս սրբի Գեվուրբայ խամար մատաղ
էնիս, էն յարուածին առնը:

Էլաւ ուր տղէն վերուց, լալըլէն, գեոռալէն անից տարաւ
սուփ Գեվուրբայ կերըզմնի վերայ տը մատղէր. Աստուած յըն-
դիւնից, էլ չը մատղից. գլեոն, ջամդաք յըմէն մէկ-մէկ էրկիր ին
տարած, Աստըծու Տրամանքիւ բիրադի Տրիշտակնիր ժողվեցին, պի-
րին. սրբի Գեվուրբ յարաւ, էլաւ կռիւ. կռիւ կանգընաւ, բիրա-
դի սպանից, ջարդից. ինչ որ մնացած էր, դարձըցուց աստուա-
ծապաշտ:

Էլաւ էն տղէն ինչ տ'էնին մատաղ, էրաւ թագաւուր, նըս-
տուց Ռոմիաց քեաղաք:

Ինչքանդար որ մասունք ժողուեր էր, տղին թասլիմ էրաւ:

Ջինք դարձաւ ուրախալէն դեան ուր էրկիր էկաւ. էկաւ
տեսաւ ուր Խայաստան էրկիր բիրադի գէշացած ին. էլած ին
թիրբ, էլած ի բիւրդ, հաւատից էլած:

Դարձաւ էստեղ էնդեղ դարկելով սպանիլով էդա աղգն էլ
կըտրից, դարձիւցից աստուածապաշտ. զինք նստաւ էնդեղ:

Ձիրացիր էր: Ձէն էլաւ Փարաւոնը դեխէն ասքեար կապի-
ցին, էկան Խայաստան բաղքը վերայ. կըուրտան, շատ ջարդիցին,
պոնիցին սրբի Գեվուրբ գրին գետըն, դանակ գրին վեար վզին
տը զինին:

Աստըծու Տրամանքիւ զինք իրիշից էրկինք. տեսաւ Հուգին
սուփ ուր աչիզ էրեաց, ձէն էլաւ, էսաց.—Գեվուրբ, էդ ինչ:

Էսաց.—Իմ Տէր, բեզի այանը ¹⁾, էս տրուս ²⁾ քեզի մեղայ
իմ, ինչ մեք որ գեործիր իմ, քեզի մեղայ կը տամ, էլ չըմ կերի
կռիւ էնի, քիւ տուած ամանաթ ³⁾ առ.

Էսաց.—Գեվուրբ, ինչ կը խնդրիս, ասա, տամ:

Էսաց.—Իմ Տէր Աստուած, էսա կեանք տուիր ձը ախշար
դարձիւցը, իմ մեոնիլիւ յիտիւ վով իմ անուն տայ, ամր էնիս, իս
էն մարդուն խամիմ:

Աստըծուց ամր ի միայ, վով «սրբի Գեվուրբ» կանչը, սրտով
հաստով, սրբի Գեվուրբ էնը կը խասնը, կ'ազատը ինչքան որ
նեղ ընկնը:

Սրբի Գեվուրբայ վեղ կտրիցին: Ինչ էտու մարմին էր, էրին
կտուր կտուր, ցըւրիցին էրկիրբեր, տարին մասունք էրին. ինչ
գլեոնն էր, էն խաւք ինչ խիտ կան կ'գէր, էդուր գլեոն վերուց
իպի բեղար:

Աստըծու խրամանքիւ խաւք էնդեղ մնաց:

Էնդեղ պիրին տեղ փուրիցին, թաղիցին էնդեղ. տաճար շի-
նիցին վերայ:

Մէկ ժամանակ ընցաւ, էրկիր դարձաւ, Քրտուծին շատա-

1) Յայտնի է: 2) Այս անգամ: 3) Գրաւական:

ցաւ. ինչ Բրտուժին շատացաւ, էկաւ Խայուժին առից: Մէկ լիւս-
րար կէր էդա ժամու մէջ, գերըզմը վերայ: Մէկ տէրտէր էլ
գեղը մէջն էր: Բրտուժին շատացաւ, Խայաստան էրկիր առից,
Բրտիր էկան լցուան Բեդարու մէջ. որ լցուան գեղը մէջ, ժամ-
սար կինաց կանչից—Տէրտէր, Տէրտէր, ասաց, էրի խայիր կը տաճ-
կանան, էրի մէկ թագարիք ըմ տիս, խայիր կը տաճկանան, ի՞նչ
էնինք:

Տէրտէր էնդեղէն քրտաւար խուսաց, էլ խայաւար չ'ասաց.
—Հարա վե՛վա, աղ ժի մուսուլմանի (կինա դէն, իս էլիմ տաճ-
կացի):

Ժամսար յախու փախաւ, էկաւ, գլեոխ իտի վեար կերըզ-
մընին քինաւ:

Աստըծու հրամանէիւ էկաւ երազ, էսաց. իլի, զի խան, առ
կինա, մը կանգընը էստեղ մնաս Բրտանաս:

Էլաւ էնդեղէն առից ուր տղէնիր, գեղէն էխան իտի ճամբ-
խու, էսաց.—Տիւ ճամբխը խիտ կեացէք:

Զինք դարձաւ էկաւ վեար կերըզմին, ձեռ իտու կերեզման
քակից, տեսաւ լիւսեղէն գլեոխ գեոյ էնդեղն ի, էխան. էխան իտի
մեանչ պուտկին¹⁾, անուն դրին Պուտկը սըփ Գէվուրք, զինքն
զպուտիկ շէկից էկաւ խասաւ քլիլթին²⁾:

Սարը սուփ Գիւրքն էր զենաւուր
Հատենախաս բող ձիաւուր.
Էլան էկան վզմայ դարէն,
Էլան էկան Մուկաց բաղաբ.
Սարը Սըփ Գիւրքն էր զենաւուր
Ատենախաս բող ձիաւուր.
Էլաւ էկաւ Փուտկը գեալին
Ծառայ կ'ընիմ ձիուդ նալին³⁾.

1) Պուտկ, աման: 2) Ատանիքին: 3) Պայտ:

Աղէկն ասիմ միր Հասանին
Էլաւ ճամբխից էրկու փաղկին¹⁾.
Էլան էկան փուտկը գեալին,
Իկին խասան Նղլի յերիր:

Կէս գիշեր էդ էրկու փաղկին խասան Նղլի յեր. իրիշէիցին
տեսան ժամխար ուր քիլիլթով էնդեղ պառկած, քինած ի, ցուրտ
գիշեր ձմրան կէսն ի:

Իրիշէիցին տեսան լիւս զաղէն պոնիր ի, կեացին տեսան էդա
տեղ, ինչ ժամխար ուր բըլիլթով քինած, քրտնած, շեղագած
ին, էննց տաք ի: Իրիշէիցին տեսան լիւս պուտկից կ'ընը. ինչ-
քան խապրտան ձեռնիր տան պուտկին, չը կարցան մօտ խասնի,
ձեռքիր թուլցաւ:

Էնդեղէն դարձան միր Հասանին խաբար տուին, ասըցին.—
Մարդ գեոյ Նղլի յեր քինիր ի:

Ասաց.— Զանմ, պիրէք, ցուրտ, բիւք կը տանը գիշեր մնան
էնդեղ:

Էսաց.— Մինք մտանք յանդեղ, շուգիւ գեախ ինք պատուինք:

Էսաց.— Յանդեղ կրակ կէր:

Ասաց.— Զը կէր:

Ասաց.— Ապա ի՞նչ կէր յանդեղ:

Էսաց.— Մէկ պուտուկ կէր յանդեղ, լիւս կամար զյէր պըռ-
նիր էր, էնուր տաբուժին, էնուր լիւս էն պուտկից էր:

Էսաց.— Ապա ի՞նչու էն պուտուկ չը պիրիք խիտ:

Էսաց.— Ինչքան ձեռ պարզինք, որ պիրինք, մե ձեռնիր թու-
լացաւ:

Միր Հասան էլաւ խեծաւ զձին, կինաց. կինաց տեսաւ, որ
ինչխ էգունք ասին էղենց ի:

Միր Հասան խասաւ էնդեղ, լիւս պացուաւ:

Միր Հասան էսաց.— Ժամսար, յի՛ւր ա՛րերթաս:

1) Բրդական հոգևոր պաշտօնեաներ:

Ասաց.—Տ'իեամ 1) Խայաստան էրկիր:

Միր Հասան էսաց.—Որ կ'էաս, իս կը կեամքի ճամբխու տինիմ:
Էլան էրկուս իրարու խիտ կեացին, կեացին խասան մէկ տեղ.
ինչ խասան էստեղ պուտուկ ծանրացաւ էտու քեամակ:

Ասաց.—Գեորը ըմ տնիմ գետըն, խանգիմ 2):

Ինչ խտի գետըն վեար քարին, Աստըծու հրամանքիւ քար
ճղուաւ, պտուկ կինաց մէջ. ինչ կինաց մէջ, պիրին էլ ինչ էրին
տիւս չ'էկաւ, որ տիւս չ'էկաւ միր Հասան զիւրըցից, էսաց.—
ժամնար, Խայաստան էրկիր էստեղն ի:

Աստըծու հրամանքիւ միր Հասան ամէն խայու իշխաննիր
ժողովից, առից իպի, ըսաց.—Պիրէք ամէն մէկ-մէկ պան տըւէք,
էդա ժամ շինինք:

Միր Հասան ինքն էլ մասնակից էլաւ:

Պիրին շատ մալ, ապրանք տըւին, ժեամ շինեցին. խայիր կա-
սին «Փուլթիկի սըփ Գիւրք», Գրտիր կ'ասին «խանայ Փուլթիկ»:

Սըփ Գեվուրքայ խաւքը մօտէն աքլեոր տիւս էկաւ. աքլեոր
գեոյ էնդեղ կայ: Սար կայ էնու քեամակ. կաչաղ 3) կ'ըլնը, ցուրտ
կ'ըլնը. պիւք 4) կ'ըլնը, էն ժամանակ որ տեսար ցուրտ ը, պիւք
ը, աքլեոր որ յիրիկընէ կանչից, տիւս իլի սալամաթ կինա. որ
անուշ ըլնը, պարզ ըլնը, աքլեոր չը խուսը, մ'էրթայ. որ մարդ
էրթայ, եա քեամին կը տանը, եա պիւք կէնը կիւեղդըւը, եան
կաչաղ կը կեայ կը լողպը, կ'սպանը. որ խուսաւ կինացըը, պեան
չ'ըլնը սալամաթ կ'երթաս:

Աքլեոր միշտ էնդեղն ի, որ էնու վախճանք կը կեայ, սըփ
Գեվուրք կերթայ մէ մարդու էրաղ, կ'ասի քիւ աքլեոր ընծը խա-
մայ ճամբխը. էն աքլեոր ճամբխից, որ խասաւ էնդեղ, խն 5)
աքլեոր կը վախճանը, որ վախճանաւ, կը պատանքին, ժամով, պա-
տարագեով կը տանին թաղին:

1) Պիտի երթամ: 2) Հանգստանամ: 3) Աւաղակ, փախստա-
կան: 4) Բուք: 5) Հին:

ԱՐԱՐԱՆԻ ԿԵԱՆՔԻՑ

Աբարան այժմեան հնչմամբ և Ապարան 1) մեր հին մատե-
նագրութեան մէջ, մի գաւառ է, որ ընկնում է քառագագաթ Արա-
գածի և մի շարք լեռների Գավաբոյուն, Կուրուբողազ, Սուգագան
և Ալիբէգ գագաթների մէջ, իսկ հարաւային կողմը բռնում է
Արայի լեռուը Արագածի փեշերի հետ: Այսպիսով Աբարանը մի
լեռնահովիտ է կազմում յիշեալ լեռների մէջ, հրաշալի բնու-
թեամբ, մաքուր և կենդանարար օդով ու ջրով: Այդ գեղատեսիլ
հովիտն է կազմում Քասաղ գետի ակունքներն ու վերին ջրաբաշ-
խը. միայն մի փոքրիկ վտակ սկիզբն է առնում Փամբակու լեռ-
ներից: Քասաղ գետի նշանաւոր վտակներից է «Գալիչայը» (գիժ
գետ), որ Արագածի գագաթն աղբիւրներից է կազմուում. Գալի
չայը հոսում է Արագածի մեծ ձորով, ձորի բերանում երեք գլխա-
ւոր առուի է բաժանուում, որոնցից մէկը Շիրաղայայ, Բազարջուղ

1) Հետաքրքրական է յիշել այստեղ ժողովրդի բացատրութիւ-
նը այդ անուան ծագման մասին.—Սա Աբարան չէ, Անպարան է,
պատմում էր Ղազանֆարցիներից մէկը, որովհետև Լուսաւորչի
արտասուբով լիքը կանթեղը երկնքից անպարան կախուած է «Տա-
չաների» (գագաթների) մէջ. դորա համար էլ Ապարան են ա-
սում: Այդ կանթեղը մշտավառ է և միայն արդարներին տեսանելի:

Այս աւանդութիւնը շատ հին է. մեր մատենագրութեան
մէջ ժ.Բ. դարից է յիշուում, բայց ի հարկէ ամենէին կապ չունի
«Ապարան» անուան հետ:

Արագածի գագաթը, Աբարանցիների ասելով, Լուսաւորչի
«Ապարան» անուան ծագմանը տալիս է և ուրիշ բացատրութիւն:
Տես. Այրարատ երես 250.

և Ափնայ գիւղերի մօտով անցնում և Քասաղի մէջ է թափւում: Գլխաւոր վտակներից մէկն էլ Բաշ-Ապարանի բաղրահամ և ջրառատ աղբիւրներն են կազմում: Իսկ միւս վտակը իջնում է Ալիբէգ գագաթից՝ Գամջու գիւղի մօտով:

Աբարանը լեռնոտ երկիր լինելով միանգամայն զուրկ է տաք կլիմայի բուսականութիւնից. բացի ուռենուց և բարդուց ոչ մի ծառ չի կարելի գտնել, դրանք էլ շատ հազուագիւտ են. միայն Արայի լեռան և Սուգագանի հիւսիսային լանջերի վերայ բնական մացառներ կան, որ վերջանալու վրայ են: Հրաշալի է Աբարանը Փայիս և Յուզիս ամիսներում, արօտատեղիները ծածկւում են երփներանգ ծաղիկներով, որոնք իրենց դիւթական յատկութիւններով բազմաթիւ առասպելների նիւթ են կազմում: Ուշագրութեան արժանի են այդ երկրի բոյսերն ու ծաղիկները իրենց անուններով և բժշկական յատկութիւններով:

Աբարանի բնակիչները բոլորն էլ 28—30 թուականների Ռուս-Պարսկական և Տաճկական պատերազմների ժամանակ են գաղթել այս նոր հայրենիքը: Սոցանից առաջ Աբարանի բնակիչները թուրքեր են եղել, որոնց կառավարութիւնը գաղթեցրել է ուրիշ տեղեր, այդ գաւառը Հայերով բնակեցնելու համար. իսկ աւելի հին բնակիչների մասին տեղեկութիւն չունինք. միայն յայտնի է, որ Ջաքարէ և Իւանէ եղբայրների տիրապետութեան ժամանակ այս գաւառը գտնւում էր Աաչուտեան իշխանական տան ձեռքին:

Այժմ Աբարանը 30 գիւղից է կազմուած, որոնք հետեւեալ տեղերից են գաղթել. Ղազանֆար, Բաղարջուղ, Ափնայ (Աթմայ) գիւղ, Աստուածընկալ, ՄԼքի, Ղալաչի Մանազկերտի շրջականներից՝ Բուլանըխից են գաղթել: Ղարաբիլիսա, Չամրու, Հաջիբաղը, Մելիք-Քեանդ Ալաշկերտից. այս երկու տարրը իրենց լեզուով և սովորութիւններով շատ մօտ են միմեանց և միութիւն են կազմում, ուստի և իրենց բազմութեամբ իշխող տարր են կազմում Աբարանում. մենք Աբարանի բարբառ ասելով՝ սոցա լեզուն ենք հասկանում և միայն սոցա մէջ կարողացանք գտնել դիւցաղնա-

կան վէպի վարիանները: Սոքա բոլորը գաղթել են Պասկէիչի ժամանակ նաև Ալաշկերտ՝ և այս Ալաշկերտցիների հետ Աբարան և Սեանայ լճի շրջականները՝ նոր-Բայազետի գաւառը:

Բլխեր, Հիրաղալա, Ալիբուչալի, Մուլլաղասում, Գամջու, Քիւլլուջա և Գիւլափու Պարսկաստանից են գաղթել, բայց չըկարողացայ իմանալ, թէ որ գաւառներից:

Բաշ-Ապարանցիք Աանայ շրջականներից և Գանագիրմաղցիք Գերջանից են գաղթել:

Աբարանցիք պարագում են երկրագործութեամբ չլիսաւորապէս և մասամբ անասնապահութեամբ և խաշնարածութեամբ. ցորենն ու գետնախնձորը հարստութեան գլխաւոր աղբիւրներն են կազմում:

Աբարանը մի առանձին պրիստաւութիւն է՝ չորս տանուտէրութեան բաժանուած, իսկ եկեղեցւոյ վարչական կողմից մի ամբողջ դործակալութիւն է:

Աբարանում ոչ մի ուսումնարան չ'կայ: և ոչ էլ սովորութիւն ունին ուրիշ տեղ աշակերտներ ուղարկելու. ուստի և իրենց տգիտութեամբ Արարատեան գաւառի բնակիչների աչքում կոպտութեան և տգիտութեան նշանակ են:

Առսաւորութիւնից հետո լինելով Աբարանցիք պահել են իրենց նահապետական կեանքն ու սովորութիւնները և այդ կողմից արժանի են խորին ուշագրութեան: Աբարանցու տան կազմութիւնը, նորա հիւրասիրութիւնը յիշեցնում է ականատեսին Քսենեփոնի նկարագրութիւնը. աւելորդ չենք համարում համեմատութեան համար մէջ բերել այստեղ նոյն նկարագրութիւնը Հ. Գաթրջեանի խօսքերով. «գետնափոր իմն էին անկունք նոցա, և բերան էր նոցա իբրև ջրհորոց, բայց ի ներքս էր ընդարձակութիւն, զդրունսն բանային գրաստուց միայն, այլ ինքեանք մարդիկն իջանէին և ելանէին ընդ սանդուղս: Անդէն ի տունս անդ ի մէջ գոմոցն կային մակաղեալ այծ, ոչխար, կով, հաւ և ամեռայն իսկ և ամենայն ինչ պաճար բուծանէր անդէն ի ներքս դալար խոտով»: Աբարանցու տան կազմութիւնը համարեա նոյնն է վերևի նկա-

րագրուածեան հետ. բայց համեմատութիւնը աւելի ակներև անելու համար մի քանի խօսքով նկարագրենք Աբարանցու տան կազմութիւնը:

Աբարանցու տունն ու գոմը նոյն շէնքն ունին. մի երկայն և նեղ միջանցք (կորրիդոր) տանում է բեղ դէպի գոմը. կրկնակի և մինչև իսկ եռակի դռները բաց անելուց յետոյ, վերջապէս երեսիդ է զարնում կենդանիների արտաշնչած տաք և ապականուած օդը. երեսիդ զգալի է խոնաւ օդի ներգործութիւնը, — անտանելի օդ անսովոր մարդու համար: Բայց բիչ էլ առաջ անցիր և ահա աչքիդ առաջ շար ի շար կանգնած են կովերն ու եզնեւորը, գոմէշներն ու ձիերը, իսկ ամեն քայլափոխում պատահում են գերացած արջորներն ու հաւերը, որոնք իրենց համար այստեղ շատ աւելի առատ պաշար են գտնում, բան կարող էին դուրսը գտնել: Ամբողջ ձմեռը, որ վեց ամսից պակաս չէ լինում, կենդանիները փակուած են լինում գոմում. այնտեղ են կերակրում և ջրում նոցա. իւրաքանչիւր գոմ իւր ջրհորն ունի. իսկ յարդն ու խոտը բերուում է դէզից և դարմանոցից: Մի առանձին դուռ էլ տանում է դէպի ոչխարների գոմը. բայց թողնենք այս մասը, անցնենք մարդկանց բաժանմունքը. դուք սկզբում ոչինչ չէք տեսնում, խաւար է այստեղ ինչպէս և ամբողջ գոմը, միայն յօդայի փոքրիկ բացուածքից՝ երգիկից ներս է թափանցում լուսոյ մի փոքրիկ շերտ, որ աղօտ կերպով լուսաւորում է օդայի պատերը. օդայ կամ յօդայ է կոչւում գոմի այն բաժանմունքը, որ մտրդկանց համար է որոշուած: Ահա յօդայի խօսիներով և թաղիքներով ծածկուած թումբերի վերայ նստոած են զանազան հասակի մարդիկ. ծեր, երիտասարդ, պատանի: Յօդէն Աբարանցու «կլուըն» է, այստեղ են հաւաքուում տան արական անդամները, հարեանները, հիւրերը: Չմեռ ժամանակ անգործ գիւղացիք խմբւում են յօդաներում խօսակցութեամբ ժամանակ անց կացնելու. որքան հետաքրքիր խօսակցութիւններ գիւղական կեանքին ծանօթանալու համար: Առօրեայ կեանքի խօսակցութիւններից շատ՝ այստեղ են պատմուում անցած դնացած դէպքերը, ծե-

րունիները թափ են տալիս իրենց յիշողութեան տոպրակը անցեալի մասին, անշուշտ բաղդաւոր և շնաշխարհիկ գոյներով ներկայացնելով անցեալը: Իւրաքանչիւր գիւղ մի կամ մի քանի նշանաւոր յօդաներ ունի, որտեղ միւսներինց աւելի բազմութիւն է հաւաքուում. պատմուում են զանազան հեքիաթներ, Գաւիթ-Մհերի և Ռոստէմ-Չալի քաջագործութիւնները, որոնք իրենց կախարդական բնաւորութեամբ մեծ ներգործութիւն են անում հասարակ ժողովրդի վերայ: Յօդէն է Աբարանցու հիւրատունը, այստեղ են քնում տան պատուաւոր անդամները և հիւրերը:

Ետ դռնանք նոյն ճանապարհով և նորից մտնենք միջանցքը, որ մեզ ուղիղ դէպի տունն է սանում. ահա թունդրան շրթին նստել են կանայք, աղջկերք, երեխաներ...: Տունը իգական սեռի և առհասարակ փոքրների բնակարանն է. տունն է նաև գիւղացու խոհանոցն ու փուռը. այստեղ, թունդրան վերայ տանտիկիներ կերակուր է պատրաստում. այստեղ է թխւում ուտելու օրական հացը: Թունդիրը ոչ միայն խոհանոց է, այլ և սրբութիւն, օջախ է նորա համար, — երկու միանգամայն տարբեր, բայց արմատով միացած գաղափարներ: Թունդիրն է նաև Աբարանցու վառարանը. մի փոքր հովանալուց յետոյ՝ նստում են թունդրան շրթին և ոտները կախ անում տաքացնելու համար:

Աբարանցու տան յատակը համարեա քառակուսի է, չորս կողմից բարձրացած են երկու կամ երեք արջինաչափ ուղիղ պատեր, որ հիմք են դառնում առաստաղ կազմող գերանների համար. առաստաղի հիմքը մի քառակուսի է կազմում պատերի ուղղութեամբ, ապա շարունակուած են միմեանց վերայ պատերի ուղղութեամբ հաստ գերաններ, որոնք բարձրանալով հետզհետէ սեղմում և փոքրացնում են քառակուսիները, վերջապէս տան յատակի կեղրոնի՝ թունդրան գիմաց մնում է բաց մի փոքրիկ բառակուսի՝ երգիկ, որ թէ ծխնելոյլ է և թէ լուսամուտ: Տանը կպած է և մառանը:

Ահա մի քանի խօսքով Աբարանցու տան ներքին կազմութիւնը. իսկ գրսեց այդ բոլոր բաժանմունքները անկարելի է զանա-

զանել, որովհետև բոլորի կտուրները միացած են միմեանց հետ-
 հարթ կտուրներից զանազանուում է տան կտուրը, որ կոնաձև
 բարձրանում է միւսների միջից: Աբարանցոց տները բոլորը մի-
 ցած են միմեանց հետ և գետնից շատ աննշան բարձրութիւն ու-
 նին. սխալուած չենք լինի, եթէ գետնափոր անուշը տանք այդ
 հիւղերին:

Աբարանցու ընտանեկան կեանքը նահապետական է. տան
 գլուխը ընտանիքի հայրն է և իշխանը. մենք ակնառտես էինք մի
 ընտանիքում, թէ ինչպիսի համեստ և խոնարհ յարաբերութիւն
 ունէր յիսուն տարեկան որդին դէպի իւր հայրը:

Իգական սեռը շատ համեստ է և ամօթխած և չունի այն
 հարեմական կեանքը, որ յատուկ է շատ տեղի հայերին:

Մենք միջոց չունենալով մանրամասն ուսումնասիրելու Աբա-
 րանցոց կեանքն ու սովորութիւնները, աւելորդ չ'համարեցինք
 այստեղ նկարագրել և այն մի քանի սովորութիւնները, որ ըն-
 տանեկան կեանքին և ժողովրդական բարքերին են վերաբերում:

Ընտանեկան կեանքի մէջ հարսանիքը ամենանշանաւոր կէտն
 է. հայրն ու մայրը իրենց զաւակի, տան բաղբաւորութիւնը որ-
 դու ամուսնութեան մէջ են տեսնում, ուստի և աշխատում են
 որքան կարելի է շուտ բաղբաւորեցնել իրենց որդուն, մի հաբալ
 կաթնակեր գտնելով նորա համար:

Հարսանիքը ընտանեկան կեանքի նշանաւոր երևոյթներից
 մէկը լինելով՝ ժողովուրդը աշխատել է նորան մի ձև տալ իւր
 ուրախութիւնը արտայայտելու համար. զարդարել է զանազան
 արարողութիւններով:

Հարսանիքից առաջ կատարւում է նշանագրութիւնը, որով
 փեսան և հարսնացուն կապւում են առաջին անգամ պաշտօնա-
 պէս. փեսան հարսանիքների մէջ, ուստագնացութեան ժամանակ
 արդէն տեսած, հաւանած է լինում իւր հարսնացուին և ահա
 մի օր «հարսնուզնկան»-ները գնում են հարսնացուի ծնողներին
 մօտ հարսնախօսութեան: Ծնողների կամքից է կախուած համա-
 ձայնութիւնը. շատ քիչ անգամ է պատահում, որ աղջկան յաջո-

ղուի դիմադրել ծնողների կամքին: Ծնողների համաձայնութիւնը
 մեծ մասով կախուած է «ղալան»-ի քանակութիւնից. «ղալան» է
 կոչւում այն տուրքը, որ փեսացուն վճարում է հարսի ծնողնե-
 րին: Հարսնուզնկաններին պատիւ են տալիս, բայց նոքա հացին
 ձեռք չեն տայ, մինչև չ'վերջացնեն իրենց գործը: Տանուտէրը
 ստիպում է հաց ուտել, բայց հարսնախօսներից մէկը յայտնում
 է գալստեան նպատակը. — Մենք էկեր ինք, քրտնէն բարեկամու-
 տեն կ'ինդրինք, էկեր ինք, օր ձեր օջախից ճրագ մի վառինք մըր
 օջախի մէջ:

— Հաց կերէք, թ'Աստուած շիներ ա, մարդ չ'կարայ քան-
 դայ, պատասխանում է տանուտէրը, — սա արդէն համաձայնու-
 թեան նշան է: Շատ անգամ պատահում է, որ հարսանիքը գը-
 լուխ չի գալիս, եթէ որևէ անհամաձայնութիւն է լինում զա-
 լանի պատճառով: Այդ սովորութիւնը, — որ իսկապէս մի բնական
 սովորութիւն պիտի լինէր, որովհետև հայրը աղջկան մարդու
 տալով՝ զրկւում է մի աշխատող անդամից, — երբեմն մեծամեծ ա-
 ղէտների պատճառ է լինում: Փեսան չ'կարողանով հատուցանել
 զալանը՝ յափշտակում է հարսնացուին, և շատ հազուադիւտ է
 լինում գործը հաշտութեամբ վերջացնելը: Ղալանը՝ նայելով երկու
 խնամիների վիճակին՝ զանազան է լինում. այժմ ամենահարուստնե-
 րն անգամ հարիւր ըուրըւց աւելի չեն տալիս, բայց առաջ,
 ինչպէս պատմում են, երկու հարիւր և աւելի էին տալիս, որ
 գիւղացու համար շատ դժուար էր, իհարկէ: Հարսնուզնկան-
 ների և խնամու համաձայնութեամբ զալանի հարցը վերջանալուց
 յետոյ՝ մատանի են անց կացնում հարսնացուի մօտը, իսկ հօրը
 վճարում են զալանի մի մասը:

Գալիս է հարսանիքի ժամանակը, նորից զարթնում է «ղա-
 լան»-ի հարցը. պէտք է «հատուկտոր կնին», այսինքն վերջնա-
 կանապէս որոշեն զալանի քանակութիւնը: Իրէպ է այստեղ յի-
 շել, եթէ հարսը սյրիանալուց յետոյ նորից ամուսնանայ, պէտք
 է նոր ամուսինը զալան վճարէ, բայց ոչ հարսի ծնողներին, այլ
 նախկին ամուսնու ընտանիքին: Հարսի և փեսայի ծնողները շու-

կայ են գնում հարսանիքի համար հագուստ գնելու, երկուսի համար էլ փեսայի հայրն է առնում, բայց պատահում է երբեմն, որ լաւ ընտանիքները իրենց աղջկայ համար մի ձեռք չոր են առնում, որ մեծ զոհողութիւն է համարուում:

Հարսանիքից մի քանի օր առաջ փեսան «զախիրա» է ուղարկում. այդպէս է կոչուում այն նիւթը՝ գինի, օղի, միս, բրինձ, իւղ, որ փեսան ուղարկում է հարսին հարսանիքի ճաշ պատրաստելու: Հարսանիքի նախընթաց օրը փեսան իւր քաւորոջ ընծայ է տանում կարողութեան չափ. սովորաբար տասն րուբլու արժողութիւնից բարձր չէ լինում այդ ընծան. անուշով է միայն ընծայ, որովհետեւ հարսանիքի ժամանակ քաւորը շատ ծախսեր է անում, կրկնակի տուժելով իւր ստացած ընծայի համար:

Այս նախապատրաստութիւնները տեսնելուց յետոյ սկսուում է «Թաքլիֆ»-ը՝ հրակէրը: Մի երիտասարդ գինի և բաժակ վերցրած՝ փեսայի հետ պտըտում է ամբողջ գիւղը. իւրաքանչիւր տան մեծ անդամին մի մի բաժակ գինի են տալիս, — դա հրակիրելու նըշանն է. եթէ տան տէրը ցանկանում է նեկոյ լինել հարսանիքին՝ գինին խմում և բարեմաղթութիւններ է անում, իսկ եթէ ոչ՝ շնորհակալութիւն է յայտնում առանց գինուն ձեռք տալու: Հասկանալի է, որ բարեկամները մերժել չեն կարող:

Նոյն երեկոյ պէտք է մորթուի «մսացուն»՝ ազգականները մի-մի բաժակ գինի խմելուց և շնորհակալելուց յետոյ՝ բոլորի ներկայութեամբ մորթում են մսացուն՝ դճոլ-զուռնայ ածելով:

Այս երեկոյ են պատրաստում «Ուրցը»: Ուրցը պատրաստում է գոյնզգոյն մետաքսի թելերից, խաչաձև. ծայրերին փնջեր են կախուած: Ուրցը «Թագաւորի» նշաններից մէկն է համարուում, ինչպէս և Թուրը:

Միւս օրը, «տաշտագրօնք» է. փեսայի տնից մի կին մի երիտասարդի հետ գինին և բաժակը ձեռքին՝ նորից պտըտում են տըները՝ «տաշտաղոնք կ'ցրուին»: Այսօր կանանց են միայն հրաւիրում. էլի մի մի բաժակ գինի տալով հրակէր ընդունողներին: Հրակիրուածները (իւրաքանչիւր տնից մի կին) վերցնում են մի

աման իւղ, կամ բրինձ և 15—20 կոպէկ փող, «տաշտագրօնք» են գնում: Հարսանիքի տանը մի տաշտ է դրուած, եկողները իրենց ամանները տաշտի մէջ են դատարկում, այսպիսով փեսային ազատելով մեծամեծ ծախսերից իւղի կամ բրնձի համար: Երբ բոլոր կանայք հաւաքուում են, հարսնացուի ծնողները ճաշ են տալիս կանանց. մինչ կանայք հացի են նստած, սկսում է «կոնիսկան»-ը: Նորատի աղջկերքն ու հարսները դճոլ-զուռնան առաջները ձգած պտըտում են տները «իւղ ու ձաւար» հաւաքելու, իւղը հարսանքատիրոջ, իսկ ձաւարը «դճոլուեն»: Աղջիկները որ տունը մըտնում են՝ նախ կարգով համբուրում են տան աւագ անդամների ձեռքերը և իւղն ու ձաւարը ստանալուց յետոյ՝ դուրս գալիս: Տաշտագրօնքի կանայք ցրուելուց յետոյ, հարսն ու աղջիկն է նստում հաց ուտելու:

Մինչայս-մինչայն՝ մութն ընկնում է. փեսայի տանը տեղ է են պատրաստում պարելու. երիտասարդներ, կանայք, աղջիկներ շարուում են պատի տակ միմեանց ձեռքից բռնած, սկսում են պարը՝ «եալլին». իսկ միւսները նստում են տան մէջ, խմբերի բաժանուելով, և խօսակցութեամբ կամ գինի խմելով են ժամանակ անց կացնում:

Իսկ Թագաւորը իւր «ազար»-ներով (Թագաւորի մանկունք) հաց ուտելուց յետոյ ձեռքները մի-մի մոմ բռնած՝ ընկնում են տները, Թագաւորից անբաժան է նրա քաւորը, որ Թագաւորի Թուրը բռնած ձեռքին՝ հետևում է նրան. երբ հասնում է որևէ բարեկամի դռան, ազաբները գոռում են.— Թաւոն ի Թագաւորին: Մի ուրիշն էլ պատասխանում է.— Աստու զաւոն ի Թագաւորին: Յուն մտնելուց յետոյ՝ նախ Թագաւորը և ապա միւսները համբուրում են տան աւագ անդամների ձեռքերը, և մի ընծայ՝ «արաղէի», Թաշկինակ կամ մի հաւ և մի աման միրգ ստանալուց յետոյ՝ դուրս են գալիս: Ազաբներից մէկը խուրջին ունի ուսին, ստացած ընծաները մէջն են լցնում: Ամենից վերջը գնում են քաւորի տունը, քաւորը «խալաթ» է տալիս փեսին, մի բաձկոն կամ մետաքսի Թաշկինակ: Ապա ազաբները լողացնում են Թագաւորը:

ւորին, մերկ թուրը դնում են տակը, իսկ «խամէն» աղաքներից մէկը բռնում է գլխին:

Հարսանքատանից մարդ է գալիս թագաւորին իւրայիններով կանչելու. նորից դռան առաջ աղաքները գոռում են. — Թառն ի թագաւորին: Թագաւորի աղգական հարսներն ու աղջիկները լսելով այդ բացականչութիւնը՝ դուրս են գալիս թագաւորի առաջ և պարելով ներս են տանում, նստեցնում պատրաստած քուրսու վերայ. նորից գոռում են. — Թառն ի թագաւորին: Գաղարում է պարը, լուծ են ամենքը, սկսում է «ըստասն»-ը. վարսաւիրը «կնդում» է թագաւորի երեսը. ապա կիսատ թողնելով՝ թագաւորահօրը, մօրը, քաւորին և միւս աղգականներին հրաւիրում է թագաւորի երեսը «պարզ էնել», նուէր տալով վարսաւիրին, որը իւրաքանչիւրի համար շնորհակալութիւն է յայտնում թագաւորի անունով:

Բոստանից յետոյ սկսում է «ծաղկոց»-ը կամ «թագաւորի գուլը»-ը. աղաքներից ձայնեղները կանգնում են թագաւորի աթոռի շուրջը և ակորժելի եղանակով երգում են հետևեալ երգը.

Թագաւոր բարով, հազար բարով,*)

Դուն վարդ ես կանանչ տերևով,

Էջմիածին զարևդ օրհնէ

Մէկ Աստրծու զօրութենով:

Թագաւոր բարով, հազար բարով,

Դուն վարդ ես կանաչ տերևով.

Երուսաղէմ զարևդ օրհնէ

Մէկ Աստրծու զօրութենով:

Թագաւոր բարով, հազար բարով,

Դուն վարդ ես կանաչ տերևով.

Սըփ Կարապետ զարևդ օրհնէ

Մէկ Աստրծու զօրութենով:

*) Այս գովքը մեր խնդիրքով ձայնագրել է շնորհունակ Սողոմոն Սարկաւազը: Տես Յաւելուած:

Թագաւոր, ի՞նչ բերեմ քե նման,

Քո կանաչ արև քե նման,

Էն աղօթրան օր բացուէր,

Բացուէր արևուդ ի նման:

Թագաւոր, ի՞նչ բերեմ քե նման,

Քո կանաչ արև քե նման,

Էն արեգակն օր բացուէր,

Բացուէր արևուդ ի նման:

Մեր թագաւորն էր աջ,

Աջոց խաչ ու մաչ.

Պսակն էր կարմիր,

Արևն էր կանաչ:

Մեր թագաւորն էր աջ,

Աջոց խաչ ու մաչ,

Բինիչն էր կարմիր,

Արևն էր կանաչ:

Գացէք, բերէք թագաւորայ բաւոր,

Օր գայ նստի դարբազ անայ,

Չընկնիկ զարկէ սըփ սեղանին,

Հրամեց բարի թագաւորին:

Գացէք, բերէք թագաւորայ հէր,

Օր գայ նստի դարբազ անայ,

Չընկնիկ զարկէ սըփ սեղանին,

Հրամեց բարին թագաւորին:

Մեր թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունաց,

Ծաղիկն էլ չինի պիտէր ծաղկունաց.

Քաղէնք, բերէնք մեր թագաւորին,

Օր փաթըթէր ճութն ու տերև հետ ուրանց:

Մեր թագաւորին ծաղիկ պիտէր ծաղկունաց,

Ծաղիկն էլ համասփիւռ պիտէր ծաղկունաց,

Քաղէնք բերէնք մըր թագւորին,
Օր փաթըթէր ճուծն ու տերև հեռ ուրանց:

Էրկնից գետնից զօրուտենով

Էդ ծառն ծաղիկ էր՝

Ծառ ծաղկեցաւ,

Ճուղ կայնեցաւ կանաչ կարմիր:

Մեր թագւորին ի՞նչ պիտէր,

Օր թագը շուռ գէր

— Մեր թագւորին քաւոր պիտէր,

Օր թագը շուռ գէր:

Մեր թագւորին էլ ի՞նչ պիտէր,

Օր թագը շուռ գէր

— Մեր թագւորին հէրիկ պիտէր,

Օր թագը շուռ գէր:

Մեր թագւորին էլ ի՞նչ պիտէր,

Օր թագը շուռ գէր:

— Մեր թագւորին մերիկ պիտէր,

Օր թագը շուռ գէր:

Նորից սկսուում է պարը, որի ժամանակ թագաւորը իւր ազաւաններով մատները «հինայ» է դնում. իսկ նորահարսներին և աղջիկներին հաւաքում են աղջկայ տուն՝ հարսի գովք անելու: Բոլորը խմբուում են հարսի շուրջը, որ նստում է իւր վարպետի առաջ («ուստայ» է կոչուում այդ կինը, որ նորան կար անել, գուլբայ գործել է սովորեցրել): «Ուստէն» սանրում, հիւսում է հարսնացուի մազերը, մեխակ և չամիչ շարելով հիւսերի մէջ փեսայի հոտառուութիւնն ու ճաշակը պարարելու, իսկ աղջիկները այս «գովքն» են երգում.

Գուն հալալ, մերիկ, գուն հալալ.

Գուն հալալ, քուրիկ, գուն հալալ.

Մի՛ թափի, քուրիկ, մի՛ թափի,

Թափելուն գուն հայեամ չիս:

Էկաւ արանայ քամին,

Ղարիք ժողվեց, լցեց գեամին.

Ես մեռնիմ քու ղարիք ջանին,

Էկած կըռկէն՝ տանին:

Աղլամա, քուրիկ, աղլամա

Ուստագին բաշի բաղլամա:

Մի՛ ժաժա, ծառնիկ, մի՛ ժաժա,

Ժաժալուն գու հայեամ չիս:

Ախ արեն էլաւ,

Աստղեր ցոլաց.

Ախ արեն էլաւ,

Աստղեր ցոլաց,

Աղջիկն էլ մօրից գնաց:

Հէրդ խաբին թաս մի գինով,

Մէրդ խաբին մատ մի խինով,

Սրտիդ հանգուրց յարձըկեցին,

Տեխ ու բարձգ դարդըկեցին:

Իրիկալ զանգեր ղարկեցին,

Աղջիկն էլ մօրից ջոկեցին:

Աստղեր ցոլաց,

Էրկուս մնաց,

Արեն էլաւ,

Մէկ էլ գնաց:

Ախ գուն հալալ, մերիկ, հալալ,

Քու ծծի կաթ ընձի հալալ:

— Ախ թըղ հալալ, որտի, թըղ հալալ:

Գուն հալալ մերիկ, գուն հալալ:

Քու տըռուկ ամագ ինձ հալալ:

— Ախ թըղ հալալ, որդի, թըղ հալալ:

Ախ գուն հալալ հէրիկ, գուն հալալ,

Գու Էրուկ հալաւ ինձ հալալ:

— Թըղ հալալ, որդի, թըղ հալալ:

Էկաւ, էկաւ իրկըւայ քամին,
Աղջիկ ժողվեց, լցեց գեամին,
Ես մեռնիմ քու զարիք ջանին:

Մի թնդա, շեմկիկ, մի թնդա,
Թնդալուն ես իմ, մի թնդա.
Մի ցոլա, աստղիկ, մի ցոլա,
Ցոլալուն ես իմ, մի ցոլա:

Գովքն անելուց յետոյ՝ սկսում են տղջիկներն հինայ դնել, որով և վերջանում է այս գիշերուան արարողութիւնները:

Լուսադիմին կանայք իրար են խառնուած. «հրիսայի» պատրաստութիւն են տեսնում. նախ քան պսակի երթալը աղջկայ հայրը «հրիսայ» պիտի տայ: Հարիսան հայկական հին կերակուրներից մէկն է. հարսանիքի և ննջեցելոց հացի սովորական կերակուրը: Երեկոյեանից արդէն հարիսայի պղողը՝ (փոքրիկ կարաս) դնում են թոնրի մէջ, մինչև առաւօտ հաղիւ հազ եփւում է: Ահագին քանակութեամբ իւղ են գործ ածում հարիսայի հետ: Հարսանիքաւորները նորից հրաւիրւում են. պատուաւորներին թագաւորը ինքն է «գհոլ—ղուռնով» մինչև աներոջ տունն առաջնորդում: Հարիսայի շարուած կարասները դարդակւում են միմեանց յետևից, բայց լուռ է հացկերոյթը, որովհետև գինի չ'կայ. հարիսայի հետ գինի չ'են տալիս: Ճաշից յետոյ քահանան օրհնում է նշանը, հարսի և փեսայի շորերը և հիւրերը «իրես սիւտրկուտին կըսին», այսինքն շնորհակալութիւն են յայտնում խնամիները միմեանց՝ արած ծախսերի համար:

Ճաշից յետոյ պսակ երթալու են պատրաստւում. փեսան իրենց տնից ազգականներով հարսի տունն է գնում՝ հարս հանելու. ազգականները, տղայ, աղջիկ, միմեանց ձեռքից բռնած շար-

ւում են փողոցի երկարութեամբ. պարելով դնում, կանգնում են հարսի տան առաջ: Փեսան իւր ազգաներով կանգնում է շեմքում. իսկ «ուստէն» քաւորից «գլուխ կապելէն» առնելուց յետոյ միայն թոյլ է տալիս հարսին տեղից շարժել. «ուստէն» գլուխ կապելէն ստանալուց յետոյ (ամենաշատը մի րուբլի) իւր կողմից մի զոյգ գուլթայ է ընծայում քաւորին:

Հարսի եղբայրներից մէկը «գօտին» ձեռքին բռնած, չի կայում հարսի մէջքը, մինչև «ախըրգօտին» չ'է ստանում. միւս եղբայրը նստում է սնդուկի վերայ, որի մէջն է «բաժինք»-ը. «ղուլթու նստելէն» առնելուց յետոյ՝ ազգաները գոռում են «տարան»: Սկսում է մնաս բարովը, լացն ու կոծը. հարսը համբուրում է հօր ու մօր ձեռքերն ու ոտները, ծնողները օրհնում են. — Գէլ իս, գաւ դառնաս, Աստուած քու օտէն շատ խեր տայ, մէկ ձեռք ի եղ եղնի, մէկ մեղք, շանք իրիկուն ցըւրիս, չ'պարապիս...»:

Շարժւում է թափօրը. հէնց որ հարսը ոտը շեմքից դուրս է դնում, ազգաները գոռում են՝—

Երկաթ էռացնեմ,
Ծէր կեռացնեմ,
Գոստ ուրախցնեմ,
Գուշման պատոցնեմ:

Խնամիները շնորհակալութիւն են յայտնում հարսի ծնողներին:

Նորից կազմւում է պարողների մի ահագին շարք և հարսանիքաւորները շարժւում են դէպ եկեղեցի. ժամհարը փակում է դռները զոյգի առաջ, քաւորի ընծան է բաց անում դռները. եկեղեցում կատարւում է խորհուրդը. քաւորիկինը պատրաստած «նարօտ»-ները ձգում է մէկը հարսի և միւսը փեսայի պարանոցը: Խորհուրդը կատարուելուց յետոյ նոյն կարգով փեսայի տունն են գնում, բակում ազգաներից մէկը թրով թոցնում է մի հաւի գլուխ, — «հաւ թոնը» է կոչւում սյդ արարողութիւնը: Փեսայի մօտիկ ազգականներից մէկը մի աման միրգ ձեռքին՝ բռնով շարու-

նակ շարտում է փեսայի և հարսի գլխի վերայից. ակնատեսը իսկոյն յիշում է ժողովրդական հին վէպի տողերը.

«Տեղ ոսկի տեղայր ի փեսայու-թեան Արտաշիսի,
Տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սաթինկան»:

Հարսանիքաւորներից մէկը փեսայի մօրը դուրս է կանչում երգով.

Դ՛ուս արի, հայ, դուս արի,
Թագաւորի մէր, դուս արի: *)

Մայրը դուրս է գալիս չորս լաւաշ (լօշ, հաց) ձեռքին՝ պարելով դնում թագաւորի և հարսի առաջ. լաւաշները խաչաձև հարսի գլխին ձգելուց յետոյ՝ համբուրում է և տուն առաջնորդում: Հեմքի վերայ մի հողէ գաւաթ են դնում, փեսան մանկէիս ոտով խփում, ջարդում է, իսկ աղաբները գոռում են՝

«Վոտրաւ քասէն,
Ապրաւ փեսէն»:

Հարսին երեք անգամ թոնրի շուրջը պտըտեցնելուց յետոյ, տանում են «փարդի էյլե» առագաստը:

Թագաւորը հիւրերին հաւաքում է հարսանեաց ճաշ տալու, պատուաւորներին միայն ինքն է կանչում. երբ բոլոր հիւրերը հաւաքւում են, սկսւում է «ուսնուկ»-ը, այսպէս է կոչւում այնուհիւրաբերութիւնը, որ գիւղացիք անում են փեսայի ծախքը թեթեւացնելու համար: Քաւորը տալիս է 10—15 ըուբլի, մօտ աղգականները 2—5, իսկ միւսները մի-մի ըուբլի, մինչև իսկ յիստենական կոպէկ: «Սաճուկ»-ից յետոյ սկսւում է հացկերոյթը. շատ հազուադիւս է, որ հիւրերից հարբողներ չլինեն,—օղի, գինին անչափ են գործածում. գինու առատութիւնը հարսանքատիրջ պարծանքն է:

Հացկերոյթը վերջանալուց յետոյ թագաւորը իւր աղաբներով

*) Տես «Քնար Մշեցուց և Վանեցուց»:

է գնում «զոքանչ»-ի տունը, ընծաներ տանելով զոքանչի, բենինների համար: Նոքա էլ ընթրիք են տալիս, բայց փեսան ոչինչ չի ուտում, խռովում է, զոքանչը հասկանում է փեսայի միտքը, բերում է «ակրաժաժելուն» մի «արեսալուզ» կամ «չուեսայ». փեսայի ախորժակը բացւում է:

Ընթրելուց յետոյ փեսան իւրայիներով վերադառնում է հարսանքատուն՝ «Թագաւորի պար»-ը սկսելու, որով և վերջանում է այդ օրուայ գործը:

Միւս առաւօտ «Նաւախտ» է. թագաւորը քաւորին հիւր է գնում. քաւորի բակում երևում է ըմբշամարտը՝ «գուլաչին». աղաբներից մէկը կամ պէտք կոխ պրծնի կամ քաւորը ընծայով պիտի շահէ սիրտը: «Ուրց կտրելու» պատրաստութիւն են տեսնում փեսայի տանը. քահանան վերցնում է նարօտը, «Թագը վերցնում» է. քանդում են «ուրց»-ը և աղաբներից իւրաքանչիւրը մի-մի բան յիշատակ է վերցնում: Սկսւում է վերջին պարգեւաբաշխութիւնը. «հարսնախօր» մի մի հրացան կամ չուեսայ են ընծայում, որ սովորաբար իւր քրոջն է ընծայում, եթէ համապատասխան ընծայ չէ տուել փեսային. «հարսնաքրոջ», որ անբաժան է հարսից պսակ գնալու ժամից սկսած, նոյնպէս մի ընծայ են տալիս. իսկ աղաբներին գոհացնում են մի-մի «արաղչի»-ով: Այսպէս ամենքին գոհացնելուց յետոյ՝ վերջին հացկերոյթին են նստում, որին միայն աղաբները և ամենամօտ աղգականներն են ներկայ լինում, հարսանիքը այս ընտանեկան ընթրիքով է վերջանում:

Ծննդկանի մասին շատ սնոտիապաշտութիւններ կան ուշադրութեան արժանի. դժուար ծննդաբերութիւնը «չարոց»-ով են բացատրում: Պառաւները հաւատում են, թէ չարը գալիս «տղացկան»-ի փորն է մանում, լեարդերը իւր ձագերին կերակուր տանելու: Պառաւներից մէկը իբրև իրողութիւն հետևեալ առասպելներն էր պատմում. — Մէկ մարդ ճամբորդ կ'էղնի. կիզայ մէկ պլպլած խան կ'մնայ, օր լուսուն էրթայ: Գիշեր կ'իմնայ, օր դըմֆ

գըմֆ դ՛ոլի ձէն կիգայ, աչքեր կ'բանայ, օր դնու կ'զարկին կ'խաղան, հմալ զարտըրուորած ըդոնց օղուշաղ: Իգա ախքատ լէ պապիլոս կ'քաշայ, կ'տանայ մէկ ջուբին կրակ կգնայ վըէն, կ'է-
րիցայ: Վտեսնայ՝ օր չարերու էրեխէք կիլան. ըդոնց մէր կ'ըսայ. «մի լէք, ես էրթամ Ֆլան մարդու հարս տղայ կ'բերայ, ընդոր ջեդրներ բերիմ, կերէք»:

Էդ մարդ կ'իմնայ, կ'էլնի լուսուն շուտ կիգայ էդ տուն, կ'ը-
տենայ մէկ «տղացկան» կայ: Վըսին — գնա՛, գնա՛: Չ'երթայ, կ'պառկի
թունդրան շուրթ:

Սահմանք կայ, տղէն օր կբերայ տղացկան, հաց ու սոխ կըդ-
դնին բերան. թշնամին էդ վախտ կ'էղնի մաղի նման, մանի մըչ էն
բրդըջին, ախքատ ղէն բրդուջ կ'առնի, կ'դնի մըչ ուր հաբնին,
հեղ ըմ լէ ուրիշ բրդուջ կ'իտան (ընդոր վնաս չկայ): Մէկէլ
տեսան, օր հաբան կ'ուռի հաբան կ'պատուի (թշնամին մըչ էդ
հաբնին էր): Տղացկան կ'աղատի:

Ծննդկանին այդ վտանգից աղատելու համար զանազան հը-
նարներ են գործ դնում պառաւները: Ծննդկանի փէշերի վերայ
գարի են լցնում, սպիտակ ձի բերում, որ գարին տեսնի, խրխըն-
ջայ, չարերը հեռանան: Հրացան են արձակում «թունդրան ալ-
նից», որ չարերը գուրս փախչին (թոնրի ալ այն անցքն է, որով
քամու հոսանք է առաջանում և թոնիրը՝ վառում է. տան մէջ թոնրի
ակը չարերի բնակարան է համարում): Ծննդկանի գլխի տակ
«խամայ»-են դնում, թրով գլխի վերայ օդում հարուածներ են տա-
լիս և վազում առուի ջրի երեսին խփում, որով հետեւ չարերը ջրի
մէջ են կենում. կամ երբ լեարդերը հանում են, տանում են ա-
ռուն մաքրելու: Պարանով ծննդկանի անկողնի չորս բոլորը պա-
տում են, որպէս զի չարերը տեղ չ'ունենան մօտենալու: Ծնընդ-
կանի ականջների ներս գնալը նշան է, թէ չարը քաշում է լեար-
դը, ուստի իրանք էլ ականջներից են քաշում արգելելու համար,
չառ անգամ վերաւորելով ծննդկանի ականջները: Ծննդկանի ա-
նունը չեն տալիս, այլ Աստուածածնի — Մայրամ, մը՝ վախենայ —

կրկնում են շարունակ, որպէս զի չարերը Աստուածածնի անունը
լսելով չհամարձակուին մօտենալ: Աստուծոյ անունն են տալիս,
աղօթք են անում, որոնցից մի քանիսը դնում ենք այստեղ:

Տուն մի կէր էրկաթ էր,
Պատեր յըմէն պողպատ էր.
Սըփգուն ի քուն էր,
Սըփ կարապետ արտուն էր:
Թաժի հացի հոտ էկաւ,
Էլէք տեսէք ո՞րն էկաւ:
Մէկ Յիսուս, մէկ Քրիստոս,
Մէկ ընձանեց Աստուարածին:
Էլաւ դարով, շըջաւ ձորով:
— Մեր Տէր, դո՞ր կերթաս օրով ջորով:
— Կերթամ դուռն ի հիւընդին,
Ջնջիլ բերիմ, բոլոր պատիմ,
Չանգալ թալիմ, վերե բարձիմ,
Չգողայ սիրտն ի փորին:

Էկաւ, էկաւ բող ձիաւոր,
Իրեք կանանչ կապաւոր.
Մէկ Յիսուս, մէկ Քրիստոս,
Մէկ սև անտարոց Աստուարածին:
«Մեր Տէր, դո՞ր կերթաս օրով ջորով»:
— Բարնիս թալիմ բուրի բարձիմ,
Չգողայ սիրտն ի փորին:

Խօսելով ծննդկանի մասին եղած անտիպապաշտութիւնների
մասին, շոշափեցիներ նաև «ոգիների» գոյութեան հարցը. որպէս
զի միութիւն լինի, կցում ենք և այն մի քանի հատուկտիր հա-
ւատալիքները, որոնք անշուշտ հեթանոսական կրօնի հետքեր են:
Աբարանցի կանայք գիշերը բակը ջուր չեն թափում, որով-

հետև ջուրը կարող է թափուել չարիքի սեղանի վերայ և նորա վրէժ կը հանեն «սև վարդով» հարուածելով: Պառանքերից մէկը հետևեալ դէպքն էր պատմում այդ մասին.

— Զհէլ ժամանակ ջուր տարայ, թափեցի դուս. քիռեր էր ընդոնց սեղին, զարկին գլխուս. թուխթ էրեցին, սաղցուցին:

«Չարերը ջրի արանք կպտտին, ասում էր նոյն պառաւը, օր մէկ մարդ ընցնի գիշեր վախտ, անուն Հօր և Որդւոյ չ'էնի, կ'ըզարկին սև վարդով»:

Հետաքրքիր է մէկ ուրիշ ոգու գոյութիւնը ժողովրդի երեւակայութեան մէջ, որին «ըովլաթ» անունն են տալիս: Գովլաթն է տան յաջողութեան, հարստութեան պատճառը, ուստի և ամեն կերպ աշխատում են չ'վիրաւորել նորան: Օր մուղաթ էն տան չ'կենան, մէկ խօսք չ'էղնին, մեծի խօսք չ'լսին, խունկ չ'ծխին, թամուզ չ'պահին տուն, ճրագ շուտ չ'կպուն, կ'երթայ դովլաթ:

Պառաւ նանին իւր կեանքից մի դէպք պատմեց իւր ասածը հաստատելու համար.— Գացի թաւէն տաւար կտելու, տեսայ մէկ սիւտակ շորով նստուկ էր յօդէն, ընձի կ'ըսէր. «էլի տիս, տաւար թամամ էկա՞ծ ա»:

Ես լէ ըսեցի.— Գու ի՞նչ իս, դ՛ու գնա տես տաւար թամամ ա (ես գիցայ իմ մարդն է):

Մտաւ թաւէն, նստաւ գրմշու մտուր. վախեցայ, դուս էկայ. նոր ետնայ ըսին թէ— գովլաթ ա, մը վախինայ:

Այժմ անցնենք սովորութիւններին, որքան յաջողեցաւ մեզ ծանօթանալ:

Ծննդեան և Զատիկին Աբարանցի երեխաները «ալէլուիա» են ման գալիս, երգիկից մի գուլայ են կախ տալիս և երկար ոտանաւոր են ասում, որի վերջին տողերը միայն յաջողեցաւ մեզ գրի առնել:

Ձեր տղի անուն ի՞նչ ա: —

(Աւետիս) հեծի կապուտ քուռակ,
Մէջքն ա զարկի պողպատ ուրագ.
Քուլնգներ թողի բուրակ բուրակ,
Սըփ կարապետ տայ ուր մուրագ:
«Տօնին» (այսպէս են կոչում Աբարանցիք ծննդեան տօնը) միրգ և զատկին կարմիր ձու են դնում գուլայի մէջ և երեխայքը վեր քաշում:

Նոյն սովորութիւնը կայ նաև Մոկաց մէջ. Մոկացիք երգում են մի ոտանաւոր *). վերջին տան համեմատութիւնը ցոյց է տալիս, թէ տարբեր պէտք է լինին բովանդակութեամբ Մոկաց երգը և Աբարանցոց ոտանաւորը: Ճրագալուցի երեկոյեան Աբարանցիք ձաւարից մի ճաշ են պատրաստում, լոբի և սիսեռ լցնելով ճաշի վերայ. այդ ճաշը «Մայրամայ ճաշ» է կոչուում:

Սուրբ Սարգիսն ու Գէորգը Հայոց ժողովրդական սրբերն են, ուստի և դոցա անունով շատ արարողութիւններ և երգեր կան: Գայլի բերանը «Ս. Սարգսի ձիու ձարով» է կապուում. նորա անունով է կոչուում առաջաւորաց պասք: Աբարանցիք ծով են պահում այդ շաբաթ, որպէս զի Ս. Սարգիսը իրենց «մուրազը» կատարէ: Այդ շաբաթն են պատրաստում նաև «փոխինդը», որ ընդհանուր Հայոց մէջ տարածուած սովորութիւն է: Յորենը բովում են, աղանձ են շինում, ապա աղալուց յետոյ «մաթ»-ով շաղախում դնում են տաշտի մէջ մառանում, «օր Ս. Սարգիս ջըհուգի ախշիկ թարքին իգայ, ձիու նալով կոխի»: Պառաւ «Զօջոն» փոխինդը մառանում դնելիս աղօթում է. «Մեռնիմ քի, ասենահաս բող ձիււոր Սըփ Սարգիս, դու իգաս քու ձիու օտ զարկիս մէջ»: Պայտի հետքը յաջողութեան նշան է, ուստի դեռահաս պատանիներն ու աղջիկները դորանով փորձում են իրենց զուգակից ընտրելու բաղդը:

*) «Ցնծացէք, ուրախացէք, ալէլուիա». տես նաև «Քնար Վանեցոյ և Մշեցոյ»:

Տէրընդէզը կրակապաշտութեան հետ կապ ունեցող մի սովորութիւն է, մեր պապերի դէպի կրակն ունեցած յարգանքը դեռ ևս բոլորովին չէ անհետացել. «տէրնդէզի» ծխի ուղղութեամբ գուշակում են տարուայ բերքի առատութիւնը, ծուխը դէպի որ կողմըն որ թեքուեցաւ, այն երկիրներում էլ առատ կ'ըլինի բերքը: Ամեն մի Աբարանցի պարտաւորութիւն է համարում եկեղեցու առաջ վառած տէրնդէզի կրակ տանել և իւր տան կտրի վերան նոր տէրնդէզ վառել: Այդ երեկոյ ճրագները տէրնդէզի կրակով պիտի վառեն անպատճառ, խանձում են ճակատի մազերը, խոնջանները. տէրնդէզի կրակից ցրւում են գոմում, որպէս զի անասունները «ցաւ ու չոռից» աղատ մնան: Այդ երեկոյ էլ «փոխինդ» են պատրաստում և նորահարսներին «դհուլ-զուռնով» կըտուրներն են հանում, հրացան են ձգում:

Տէրնդէզի մասին առանձին ասացուած կայ, որով հասկացնում են, թէ ձմեռը անցնելու վրայ է, երկիւղ չունին այլ ևս խոտի պակասութեան համար.

«Տէրնդէզ,
Գարման կէս,
Առնիմ չուան,
Վազնիմ թըն դէզ:

Մեծ պասի երկուշաբթի օրը Աբարանցու տունը մեծ փոփոխութեան է ենթարկւում. ամենայն ինչ մաքրւում է. առաստաղի գերանները զարդարում են զանազան ձևերով՝ ալիւրով նախշում են գերանները, ի նշան պասի գալստեան:

«Ջոջոյի» հրամանով փոքրիկները բարձրանում են, նստում տանիքի վերայ, երգիկի մօտ, և երկու քար երկանքի նման իրաք շփելով՝ հարցնում են. «Աղամ, աղամ, ի՞նչ աղամ»: Տանտիկինը պատասխանում է. «մուկն աղա»: Նորից հարցնում են երեխաները. «Աղամ, աղամ, ի՞նչ աղամ»:

— Կատուն աղա, կիտուրն աղա... և այլն:

Այսպիսով մէկ-մէկ աղալ է տալիս բոլոր վնասակար միջատ-

ներն ու կենդանիները, հաւատալով՝ որ դորանով կ'ազատուեն ապագայ չարիքներից:

Այդ օրը Աբարանցի կինը հաց չի թխում իւր ամենօրեայ սովորութեան հակառակ. իդէպ է այստեղ յիշել, որ բացի այս օրուանից, տարուայ մէջ միայն ծննդեան և զատիկի կիւրակի օրը հաց չի թխում, մնացած ժամանակ՝ օրը թխում, օրը ուտում են: Մեծ պասի երկուշաբթի օրուայ համար բաղարջ հաց են պատրաստում, որ «խուզլի» բաղարջ է կոչւում: Իսկ կերակրի տեղ «հատիկ» (խաշած ցորեն) են պատրաստում, որից բաժին են հանում և մկներին. «իդա լէ մկներու բաժին» ասելով ցրւում են տան անկիւնները: Բաղարջ հացի և հատիկի համար այսպիսի ասացուած կայ.

Խուզլի հաց ու հատիկ,
Բարով իգայ մեր զատիկ:

Տանտիկինները երգիկից պարան են կախում և կշուում են. ծանր տանտիկնոջ իւղը շատ կ'ըլինի:

Այդ օրն են երգիկից կախում «Ուրուջ Բէգը» կամ «Ակլատիգ»-ը. «Մէկ սոխ կ'վերցուն, սոխի բոլոր բըբկըներ կ'շարին, եօթ բբուկ, իրեք սիւտակ՝ չորս լէ սև (էդ իրեք ան նշանակով կըզարկին. չանք էն իրեք շաբաթ էրթայ, գետին կ'սենայ), փէտ մի լէ կ'զարկին սոխի օրթալըն, թել կ'կապին էն փէտից, կ'կախին էրգիկի «բնակ»-ից: Կնկտիք ուրանց ճժերուն կըսին. — Պաս կերեր իս, Ուրուջ Բէկ վերեանց, քար լցի ջէք, կ'զարկայ:

Ծուխն օր կիտայ՝ Ուրուջ Բէգ կ'զըւընայ, ճժեր գինան թէ՛ ուղորդ օր կ'զարկայ, էլ պաս չըն իշխնայ ուտի: Ամեն կիրակի մէկ բբուկ կ'թալին թունդրան մէջ:

Երկուշաբթի օրուայ համար մի այսպիսի մնասալ (առակ) կայ Աբարանցոց մէջ. պառաւ մայրը երկուշաբթի օրը ձու է խաշում իւր որոցոց համար: Որդիքը յիշեցնում են թէ պասը նոր են բռները

Մայրը պատասխանում է.

«Լա՛օ, ի՛նչ մնաց,—
Մնաց հինգ օրիկ,
Վեց շաբթիկ,
Ծառ-զարդար,
Զրոյմա գատիկ:

Առաջին չորեքշաբթի օրը մի կերակուր են պատրաստում բոլոր աներում, որ «Օձու թթու» է կոչւում:

«Միջինք»-ին էլ առանձին սովորութիւններ ունին Աբարանցիք: Զորեքշաբթի մի մեծ հաց են պատրաստում, որ «միջինք» է կոչւում օրուայ անունով, մէջը մատանի, կամ մի այլ բան են դնում: Հինգշաբթի երեկոյեան ժամերգութիւնից յետոյ ժողովւում են տան բոլոր անդամները. ընտանիքի հայրը «միջինք»-ը կտրատում է տան անդամների թուի համեմատ, երբեմն էլ մի կամ երկու կտոր աւելի անելով սիրելի գումշի կամ եզան անունով: Կտորները բաժանում են, որի բաժնի մէջ դուրս եկաւ մատանին, նշանակում է տարուայ յաջողութիւնը նորա բաղդից է կախուած: Երեխաները իրենց բաժինն ստանալուց յետոյ՝ սկսում են աղօթք անել. քառասուն անգամ քառասուն ծունր են դնում հետևեալ խօսքերը կրկնելով՝

Աստուած, դուն էս օղորմանով օղորմանաս.
Քառսուն մանուկն ի լէչկին.
Տաս էս թաս, տաս էս պսակ,
Օր տըւեցիր բաղնապանին:

Փոքրների համար այդ օրը «խարզան» են թխում. աղջիկների համար «բերի պղիկ», կանանց՝ ծըծում, որ առատ կաթ, իւղ լինի: Խմորից գնդեր են պատրաստում, մէջը «կոնամբ» լցնում և դրսից մէկին ցորեն՝ միւսին աճար, միւսին գարի կպցնում. որպէս զի նոյնքան հոր բերք ունենան ամեն տեսակից,—այդ գնդերին «հոր» են ասում:

Ծաղկազարդին՝ «կիրակի լուսուն կերթան ժամ պաշտում. խուրձ մի ուն դրուկ ա ժամու սեղան, կ'օրհնեն ու ժամէն էլ լան, ժամու դուս կ'ցըւրին: Ամէկ ուրին կ'տանի. կ'տանին զարկին ծըծմներ, օր եղ շատ էղնի, մատնիկ կ'էնին (աղջիկները) իցկին մատներ ուրանց, կ'զարկին գառներուն, օխչըին, օր ցաւ փախնի:

Մանգր երեխէք ծառզըրդին կ'երթան բարեկամներս աներ, հաւկիթ կ'ժողվին սւ կ'ըսին:

Կարկաչայ գարին աչայ,
Սև էզան սև սամեթեռ,
Կարմիր էզան օղն ու կոճակ.
Կիտաք իմ կարկաչէն՝ տըւէք,
Թէ չէ՛ կ'երթամ Պոլադ իրիցուն կըսիմ,
Գայ թողայ ձըր էղի պղիկ:

Աւագ հինգշաբթի օրը Աբարանցի երկրագործը իւր «խարզան, սամի, սամեթել լէ հետ» տանում դնում է եկեղեցւոյ գըրքակալի առաջ, որպէս զի օրհնուին իւր գործիքները: Այս սովորութիւնը վերանալու վայ է:

Մեծ պասի վերջին շաբթուայ ծանրութիւնը ցոյց տալու համար, ժողովուրդը հիւսել է այս երկտողը.

Քարքաշան, քարքաշան,
Ճժեր հալան ու մաշան:

Իսկ երկար ժամերգութիւնների վերջանալու համար ասում է.
Քրիստոս յարաւ,
Ժամեր տարաւ:

Համըարձման գիշեր Լէյլի Մաջլում կիգան օղջում կ'առնին, էն վախա քար ու թուփ, ծաղկունք բիրադի օղջում կ'առնին, կէշին լեզու: «Էն վախա որն օր տեսնի, ինչ օր խնդրայ, կ'կատարի»:

Կնկտիք, մարդիք ուրանց կ'թալին մըչ ջրուն, լողկընան, օր

ցաւ էլնի ջանէ ուրանց: Օր լուսցաւ, կ'ըբերեն կանանչ կ'թալին մըջ ջրուն, կ'տաքցուն, ճժեր կ'լողկըցուն:

Ձորերքշաբթի օր ախշիկներ կ'երթան ծաղիկ կ'քաղեն, կապուտ ծաղիկ, ախբրանց, շուշան կ'քաղին, կ'չքին «վիճակ», կ'ըզարկին պուլուկի մի բերան, կ'ըբերին, կիտան տէրտրներ օրշնին, տէրտրներին հաւկիթ կիտան: Ատանին եօթ ախպրէն, ամէկ ախպրէն եօթ ճանգ ջուր կըլնան, եօթ քար լէ կ'թալին մէջ, ամէկ ախպրէն մէկ քար. ու դնին դուռ, աստղեր: Լուսուն կ'էլնին զարտըրուրին, եղ կ'ժողվին, հառախ կ'ժողվին, կտանին կ'էնին ուրանց կերակուլ, կուտին:

Այսօր բոլոր տներում «կաթնով» կաթով ու բրնձով ճաշ են ուտում, իսկ աղջիկներն ու հարսները հաւաքուում են միասին և «ջան գիւլում» ասում:

Ջան գիւլում ջան, ջան,

Ջան ծաղիկ ջան, ջան:

Ջանջոխանի դռանը,—

Ջան գիւլում ջան, ջան,

Խամուր կուռքի կռանը,—

Ջան ծաղիկ ջան, ջան:

Փէտէ փէտէ մարդիքը...

Էրկըթէ կնանիքը...

Փունջ մանիշակ հարսըներ...

Խոշխոշ էղան ախշիկներ...

Ախշի դու խի ես լալում...

Իրեսդ սրտուռ գալում...

Դալու բաբէն ամպեր ա...

Ախպեր ուր ձին թամբեր ա...

Էլի մէյգան խաղեր ա...

Անձրեն էկի թրջեր ա...

Անձրեն էկի թրջեր ա...

Արեն զարկե՛ չորցեր ա...

Արև զարկե՛ չորցեր ա...

Քեաֆուր վարդից բացուեր ա...

Դուռ բաց մե՛ բարի մարդ ինք...

Մի թաս լանգուի վարդ ինք...

Իմ ախպերը սարուճ ա...

Շուրիկ չուխի ծալում ա...

Ախպեր, շուրիկ աճա...

Քու քուր Լուայ քարին ա...

Խուշը վերևով ընցաւ...

Սինին խնձորով լցուաւ...

Ընի ախպեր տուն դարձաւ...

Ախպերս վերևով ընցաւ...

Խաբար էկաւ՝ նաչաղ ա...

Մարալ էզը մատաղ ա...

Ջաղացի աչի կուռը...

Վ'ցնձայ միջի գիւլը...

Վայ իմ մէկիկ ախպորը...

Քաշած ա մէջքի թուրը...

Թագաւորիս դատ կ'էնէք...

Իմ ախպեր ըզատ կ'էնէք...

Էկաւ աշունի վաղգէն...

Կտրաւ տամբուդի փարդէն...

Աշըղ չէ՛ր, աշըղ դարձար...

Թուխ քանգուլ Գէվոյի դարդէն...



Ամպեր ա ամպի նման...

Շաքարի զանդի նման...

Տեխ իմ քցե՛ փոնթ կիգայ...

Բարձի տկից հոտ կիգայ...

Մեռնիմ քու քանդուխերուն...

Միջէն խնդան հոտ կիգայ...

Բարձ մի ունիմ՝ գրուկ ա...

Ախպեր վռէն քնուկ ա...

Արևն էլաւ, հոյ՞ք ընկաւ...

Մարալ էլաւ, ծոյ՞ք ընկաւ...

Ախչի, քու էտեն իշկա...

Քու արաղչու մոյ՞ք ընկաւ...

Ծաղկավանքը ծաղկեր ա...

Ծամեր գլխիդ թաղկեր ա...

Իմ մեր ընձի ո՞նց պահեց...

Ծալուկ գիւլբանդի նման...

Ծաղկը՞քու ձորէն ինք...

Մեծ բաղի խնձորէն ինք...

Ծաղկը՞քու ուխտ եմ էրի...

Շէկ ծամեր ջուխտ եմ էրի...

Այ տղայ խօսալ չուգայ...

Քե համար թուղթ եմ էրի...

Տաշալ դրեր իմ լուացք...

Սագոնդ էր ոսկէջրած...

Ի՞նչ էնե քու հէր ու մեր...

Քու ճակտի գիրն էր գրած...



ՏՂԱՅ ԽԱՂԱՑՆԵԼՈՒ ԵՐԳ

Թուէ, թուէ, թուցընեմ,

Սև հաւու միս կերցընեմ,

Արաղ, գինի խմցընեմ,

Կարմիր շորեր հագցընեմ:

Արև դու, արև քու հէր,

Արևու ճոթն ա քու մեր,

Օսկի բառն ա քու քեռին,

Կաթի մրջան քեռնկին:

Կճատ մեղուն, հա՛ կճատ մեղուն,

Կճատ թևեր վի վերու,

Սարէ սարն թռնելու,

Անթառան ծաղիկ բերելու,

Թառ քարբուռն յողորկելու.

Դու թառ, քարաբ թառ,

Մեռնիմ քրդի, քու քարբուռն.

Կնքեր ա՛ տուն ա բերի,

Զ՛թողեր ա կատուն ուտի:

Մեռնիմ, մեռնիմ մեռնելով,

Քեռին էկաւ բեռներով,

Բեռներ լիք քարուբար,

Բեռան վռէն սար ու բար:

Ես քե կուբան, ես քե շուն,

Ի՞նչ իս բարձի քու իշուն:

— Խունգն ու հինէն արբշում:

— Խունգ գո՛ր կ'տանիս — Պառւրճերուն,

Արբշում հարսներուն,

Հինէն ազաբ ախչիկներուն:

Սրտիդ մեռնիմ, սէհրով ա,
 Աչքերուդ մեռնիմ, լուսով ա,
 Էրտիդ մեռնիմ, ջոհրով ա,
 Գլխուդ մեռնիմ, խելքով ա:

ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳ.

Ամանները, երբ մանուկները լողանում են և ամպամած է լինում, իբրև աղերս հետևեալ տողերն են ասում արեգակին.

Արև, արև, էլի դուս,
 Թուր ու թվանք թալիմ թևս,
 Թափտայ շապիկ վըր թևերուս,
 Օսկի արքջան հանիմ դուս:

Շուտ լողացողները դուրս են գալիս, երկու քար իրար են խփում, ձգում ջրի մէջ՝ ընկերներին բարկացնելու համար այս տողերն ասելով.

Կրօ-կրօ ձէն էրա,
 Վարդըլուորի ձու էրա.
 Քեռնկինդ առայ:

Միմեանցից բաժանուելիս այս տողերն են ասում.

Ամէկ ուր տուն,
 Լազլազ ուր բուն,
 Խաչ գաւազան իմ բեռու տուն,
 Մուկն ու կատուն ժախմրի տուն:

ՊԱՌԱՒԻ ԱՂՕԹՔ

Սըփ կուս Աստուրածին,
 Իջաւ նեղ տապանին,
 Չարկեց կեռ գաւազանին.
 Հալալոց, թալալոց *)

*) Այս տողը միանգամայն անհասկանալի է:

Վապն ի դռան սըփ Սեփանոս,
 Վապիս գող գիշերին.
 Ցերեկ'ւայ հարամին,
 Չուր լուս բաց'ւի Քրիստոսին:

Լուսացաւ, լուսն ի բարին,
 Հաւատով Տէր կենդանին,
 Երկինքը ծով ծիրանին *),
 Սըփ կուս Մայրամ նստաւ սըփ սեղանին,
 Աստուածաբան ուր բերանին:
 Օղջուն, Մայրամ, դու կուս իս,
 Հոգւով մարմնով դու լուս իս,
 Լուսեղէն կամար իս կապի,
 Հոգիս քեզ համար իս պահի,
 Էրթամ, գործիմ քու բարուտեն.
 Հոգիս տանիս արքաուտեն:

Օղջուն, Մայրամ, մայր Աստրծու,
 Կուս գթած առ բարեխօս,
 Այժմուն ժամուս, մահուն, մեռելոցին, ամէն:

Էրնէկ էրնէկ էս տարին,
 Օր շիքեցին Էրուսաղէմ,
 Օր թմեցին Էրուսաղէմ,
 Մտան տուն Մոսէսին,
 Հագան սուրջալ Քրիստոսին,
 Գացին մէրին, կտրին ծառ խնգենին,
 Բերին, քաշին սըփ սեղանին:
 Մըր Տէր բանձրու գնաց Էրուսաղէմ.
 Շատ էրէց կէր ժամուն,

*) Ժողովրդական բանաստեղծութեան հին նշմարներից մէկն է, «երկնէր երկին և ծիրանի ծով», երգում էին Խորենացու ժամանակ և ո՞վ գիտէ՝ ո՞րքան էլ նորանից առաջ:

Քաղիսկոպոս պատարագին,
 Ճգնաւորներ կ'աղաղակին,
 Մըր Տէր էլաւ ամբ խաղաղած,
 Քրիստոսի գանձն էրեաց.
 Հրամեցաւ ուր լուս բերնով.
 Խուր իմ խրըշտըկով,
 Օտաւան առաքելոց...

Աչ ու մաչ Քրիստոսին,
 Գաւազան Մոսէսին,
 Քսան ու չորս տունն Ներսէսին.
 Սըփ առաքելոց աղօթք,
 Պահան հրեշտակ,
 Պահապան էղնիս իմ հոգուն, իմ ջանին:

Գ Ո Ւ Թ Ա Ն Ի Ե Ր Գ

Յառաւել ա մեր գութանին, ձեր գութանին,
 Շէկիկ բուղէն կոտրեց սամին,
 Վըր Պօղոսին, վըր Պետրոսին,
 Վըր հէրընէկ Յովանէսին,
 Կարմիր գլոխ հորէվորին,
 Մուկն ի բերան մկանւորին,
 Փոշին գլխուն փոշեւորին,
 Խնձոր գօտին խնձորւորին,
 Խարզան ձեռին խարզանւորին,
 Ուժով ախշիկ ուժուորին
 ... ու քերիչ մըրդըրւորին,
 ... պանիր աժուորին,
 Սերն ու մածուն մանջըկլին:

Հայկական գութանները շատ մեծ ու ծանր են. ուստի և մի

քանի զոյգ են լծում տեղից շարժելու համար, իւրաքանչիւր զոյգը իւր անունն ունի, Հորեւոր, Մկնտուն, Փոշեւուն, Խարզնտուն, Խնձորտուն կամ Քնձորտուն, Ուժտուն, Մուրգաւտուն, Համու:

Աւելորդ չենք համարում կցել և գութանի միւս մասերը մանրամասնութեամբ. ձկապ, լուծ, սամիք, սամնթեռ, փոկ, քնադայ (շղթայ), ճամբարակ, ձեւիչ, խոփ, գործեւոր, արմընդայ, փամպալ, լուէք, բարձ, դողեր, ակներ, սոնի, խարզան, մանջըր, թուր, տախտակ, կաքաւ, մանջախպէր, մանջ, առատամ:

Չ Ո Ւ Ա Ր Ի Ա Լ Ի Ք

Օրհնեսցի սեղանս,
 Բոլորի բերեղանս,
 Չարչի խորախան,
 Թաքարլուայ Էզոխան:

Էլայ, գացի,
 Գհոլ թեւէս կախ էր,
 Հարս կիսրոջից դախ էր,
 Աստուած օրհնէր, շէն պահէր:

Էլայ, գացի բաղնիս,
 Ռէս Սարգիս կայնուկ էր տանիս,
 Ըսեցի. — Ռէս Սարգիս,
 Տեխ ըմ տաս իմ զուփարիս:
 Ըսեց. — Գնա ձիթխաց տաք ա քընց բաղնիս:
 Գացի բաղնիս, տեսայ քառսուն ծակ ունէր՝ թըղ զերդիս.
 Չնկլորակով զարկին վըր վզիս,
 Օտներս էղաւ աղլատիզ:

Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

Էն ի՞նչ էր, քանի սաղ էր,
Ինք իրեն ման կիգէր,
Օր կ'մեռնէր, մարդու գլխու վրէն:—
— Գառան մորթին:

Մէջի մէկ դար մ'ունէնք,
Գարի գլու մէկ գոլ կայ,
Գոլի մէջ մէկ օձ կայ,
Օձի բերան մէկ վարդ կայ:—
— Ճրագ:

Եղ մ'ունիմ անգին,
Խօսք ու խաբար գագթին,
Ջուր հոգին, սիւտակ մարմին:—
— Ջաղաց:

Քարէ գոմ,
Տրծիկուն իծւան:—
— Աղանձ:

Ձորս օտ վըր հողին,
Էրկուս վըր ձողին:—
— Ձի:

Լու մի թռաւ լուս կարպետից,
Ջրվտիկ տըւեց դիւանխանէն,
Սուն մի կոտրեց Հնդստանէն:—
— Կէծակ:

Մէկ թոփ կտաւ
Էրգսից կախ:—
— Շողք:

Էրկու բորոն
Մէկ դարից կախ:—
— Կնոջ ծծեք:

Էրկէն արտ, կարճ գարի,
Տմբլիկ դու գնա, արի:—
— Մկուկ (կտաւագործի):

Էն գիէն դար,
Էս գիէն դար,
Մէջն անդադար:—
— Առու:

ԱՆԷԾՔ Լ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ժուռ ու մուռ մեռնիս:
Թամբդ ի դարդըկուի:
Հաց եղնի պողպատ, ահուքդ ի ցօլ:
Շատ դատիս, քիչ ուտիս, էն քից լէ մահրում նստիս:
Ինչ գատիս՝ բարձի տակ ուտիս:
Քու կանանչ կարիճ մուրաղին չ'հասնիս:
Քու կանանչ կարմիր չ'կապինք:
Քու կանանչ արևուդ մահրում նստիս:
Հող տամ արևուդ ի վրէն:
Քու արևը մեռնի:
Գրող գնիմ վըր արևուդ ի:
Գրողս բե տանի:
Վարամ գնիմ բու գլխուն:
Վարամ թալիմ:
Վարամ առնիմ բերնէդ ի:
Կերցաւ ընգնի բու ջան:
Քու ջանի բալէն ընգնիս:

Խեր չ'տեսնիս քու ջանէն:
Վատղիս, ակռէքդ ի թալիս, միսդ ի ուտիս:
Քու աչք քու մուրազ մնայ:
Ինչ օր խնդիրք դրեր իս սրտիդ, Աստուած չ'կատարայ:
Բաղդ տնկիս, բարիկ չ'ուտիս:
Յորեն ցանիս, տատաշկ բուսի առէչդ ի:
Արնոտ շորերդ ի տուն գայ:
Վարիմ պատանքդ ի:
Նաշդ ի էջնի:
Թագայ մեռել էղնիս, բարթու հիւանդ:
Ծամերդ ի կտրիմ:
Մէկ սօլով եօթ տուն մանիս, եօթ տնից լէ մահրում նստիս:
Աղամեն աղ առնիս,
Տաք տաք ցաւ առնիս:
Օրհնիմ, օրհնիմ օղաձկիս,
Օտնէ գլուս պղոձկիս,
Էյնես հաւէն, պաղիս թաւէն,
Չպրծնիս մանդր ու պետ ցաւէն:
Աստուած բախշա քու արև:
Թաժսյ նուբար քու տղի արև:
Եօթն օրդով սեղան նստիս:
Դոր էրթաս՝ կանանչ բուսի առէչդ ի:
Քու կանանչ արև ծաղկի:
Աստուած քու ձիան օտ բարի չ'ղարկայ:
Անդատել հաց ուտիս:
Քիչ դատիս, շատ ուտիս:
Տունդ շէն մնայ:



Ճ Է Ք Ի Ա Թ Ն Ե Բ

ԱՐԵՒԵԼՈՑ ԹԱԳԱՒՈՐԻ ՏՂԵՆ

Մէկ թագաւոր կ'էղնի. մէկ տղայ կ'էղնի թագաւորին, անուն լէ Փահրատ: Վազիրին լէ մէկ տղայ կ'էղնի, անուն Փահրամազ: Թագաւորի տղէն ու վազրի տղէն ախպեր կ'էղնին:

Փահրատն ու Փահրամազ ամէկ ձի մի սարքեցին ու գացին ավըղուշ էնելու. ավըղուշից ետ դարձան, էկան, տեսան, օր մէկ պառաւ կուժ թւեր էր ու ջրից կիգէր:

Փահրատն ըսեց.— Փահրամազ, ես պգի զարկիմ իմ նետ ու անեղ կժի կանթով ընցում:

Նետ ու անեղ զարկեց, առաւ կժին ու կոտրեց կուժ:

Ու պառաւ դարձաւ ըսեց. ըսեց.— Թագաւորի տղայ, քրդի չըմ խըմիշի անիծի, դու մէկ ու ճար իս, Գլե թագաւորի ախչիկ կայ, ընդոր սէր քու սրտի մէջն էղնի:

Տղէն, էգ որ ըսեց, ինչ օր կրակ մի ընկնի ուր սրտի մէջ:

Գնաց ուր տուն, իջաւ ձիուց ու մտաւ ուր տեղաշորի մէջ ու քնաւ:

Լուսուն Փահրամազն էկաւ ու տեսաւ, օր ուր ախպեր ընկնաւորներ էր. փրփուր տուեր էր բերնի վըէն. գնաց թագաւորին յայտնեց:

Թագաւորն ուր կնիկ էկան, տեսան, օր տղէն բէյուշ էղեր է. թագաւորն ուր կնիկ առան լալ:

Գացին շահրաղայ մարդիկ առան, էկան, ու հարցուցին թէ — Յորի էղմալ էղիր մեր տղէն:

Ըսեցին թէ — Թագաւոր, մենք չընք գինայ:

Ըսեց.— Գացէք բաղքի ֆլան քոշէն պառաւ մի կայ, անուն Պօնա-Խաս ի, գացէք ընդոր բերէք:

Գացին Սօնա-Խասին առան, էկան:

Ու թագաւոր խնդրուաւ Սօնա-Խասի մօտէն թէ՛—Իլլաջ մ'էնիս՝ քու կշռանով մէկ օսկի կիտամ:

Ըսեց.— Թագաւոր, եղի սիրու է ուստ էկի, մկայ կհնչիրնայ:

Մէկ սհաթ յետոյ տղէն իմցաւ:

Հարցուցին թէ՛—Էդ ի՞նչ էր քրղի ուստ էկաւ:

Տղէն ըսեց թէ՛— Թագաւոր, կ'երթաս Գե թագաւորի ախ-
չիկ ընծի կուզես, ըսեց, կուզես, կուզես,—չըս ուզի, ես կ'մեռնիմ,
իլաջ չունիմ:

Թագաւոր ըսեց.— Ո՛րտի, ես կարողուտեն չ'ունիմ էն ախ-
չիկ ուզիմ. էն Գե՛ ես հողածին, չըմ կեարնայ էրթամ. ինչխըդր
օր խօշուն տանիմ, էնի կ'չարտայ:

Տղէն ըսեց.— Թագաւոր, դու չըս կեարնայ, ես կ'երթամ:

Ու տղէն էդ տեղէն էլաւ ու գնաց սայիսխանէն, մէկ լաւ
ձի մի ջոկեց ու հանեց դուս, ու թամբեց ու դամեց, հեծաւ, սի-
լահ կապեց վրէն, խուրջին մի օսկի լէ հետ վերուց, վազրի տղէն
լէ հետ, գնաց: Գնաց, շատ ու բիչ Աստուած գինայ, գացին մէկ
մէշի մէջ ախրրի մի վրէն իջան ու ձիանք թորկեցին արծըլու ու-
րանք նստան հաց ուտելու:

Մուտ տուեց, ճրագ-վառոց էր, տեսան,՝ օր՝ մէշի մէջ մէկ
ճրագ մի կ'երեւայ, ու թագաւորի տղէն վազրի տղին ըսեց.— Անցի
ձիաներու կուշտ, ես էրթամ տեսնամ էդ ի՞նչ ճրագ է:

Թագաւորի տղէն էլաւ ու գնաց ճրագի կուշտ, տեսաւ, օր
մէկ հալիւոր մի նստուկ էր, գիրք ձեռ կ'կարտէր:

Ու բարեւ տուեց հալիւորուն, հալիւոր լէ բարեւն առաւ:

Ըսեց.— Փահրատ, դ՞ո՞ր կերթաս:

Հարցուց թէ՛— Գու ի՞նչ գինաս, ես Փահրատն իմ:

Ըսեց.— Գինամ օր դու Փահրատն իս ու թագաւորի տղէն իս,
կերթաս Գե թագաւորի ախչկան:

—Օր, ըսեց, հմալ է, մէկ խրատ մի տու, էրթամ Գե թա-
գաւորի ախչիկ բերիմ:

Ըսեց.— Լուսուն կ'երթաս քարի մի ուստ կ'իգաս, էն քար

ճղուկ է, էն քարի մէջ մէկ վիշապ մի կայ. էն վիշապ ետրալու է
ու իդա գիրք կ'առնիս ձեռդ ի ու կ'կայնիս վիշապի վրէն, գիրք
կրանաս ու իդա գլուս կ'կարտաս. իդա գլուսն օր կարտըցիր, պըր-
ծար, մէկ ճանկ հող կ'վերցուս գետնէն, կ'թալիս ընդոր ետրի
վրէն. էն հողն օր թալիր, պրծար, կհեծնիք ձիանք ու կ'երթաք:
Գացիք՝ խանդակ մի ուստ կիգայ, ընդոր մէջ հաւք մի կայ, ետ-
րալու էղի ու ընկի խանդակի մէջ, էն գիրք կրանաս ընդոր վրէն,
էն մէկէլ գլուս կ'կարտաս հաւքու վրէն. էն գլուսն օր կարտը-
ցիր, թըմար, ճանգ մի հող կ'վերցուս գետնից ու կ'թալիս ընդոր
ետրի վրէն: Աընցնիք, կ'երթաք, մէկ ջոջ ջրի մի ուստ կիգաք, կեր-
թաք, կնստիք ջրի վրէն՝ կուացուիք ու հաց կ'ուտիք ու գիրք կը-
հանիս էն մէկէլ գլուս կ'կարտաս, ջուր կ'էղնի բարակ առու, ու
էն ջուր կ'ընցնիք էն դէն. ջուրն օր ընցաք էն դէն, դեւեր կ'ի-
գան առէչ ձըղի, կուզին օր ձըղի սպանին: Գու էլի էն գիրք
ծոցից կհանիս ու կառնիս ի ձեռդ ու մէկէլ գլուս կ'կարտաս,
կառնին ձըղի ու կերթան Գե թագաւորի դիւան:

Իմալ օր հալիւոր ըսեց, հալիւորու ըսածի պէս էրեցին.
էկան դեւերու կուշտ, դեւեր եդոնց վերցուցին ու աարան թա-
գաւորի դիւան. ընդոնք թագաւորին գլուս իջուցին ու կայնան
թագաւորի առէչ:

Թագաւոր հարցուց թէ՛— Գուք հողածին, մենք դեւ,— իդա
տեղ ի՞նչ բան ունիք:

Տղէն ըսեց.— Թագաւոր, էկեր իմ քու ախչիկ տաս ընծի,
էրթամ, իմ բուրթալուն է, գիշեր ու ցերեկ քու ախչկայ դէմ կը-
վառիմ ու կ'էրեցիմ:

Ըսեց.— Օր հմալ է, ես ու օձու թագաւոր կուիւ ինք էրի,
իրարու մէջ շատ մարդ է սպանուի, իմ կնիկ խլեց, առաւ գնաց,
իմ վրէն զօրնդեղ էր, գնա՛ իմ կնիկն առ բի, իմ ախչիկ տամ քըղի
առ գնա:

Ու տղէն ըսեց.— Ես ճամբախ չըմ գինայ, օր ես էրթամ:
Գեւերուց էրկու Գե թագաւոր գրեց հետ ուրանց, ու տա-
րան Օձու թագաւորի սինոռ:

Դեւեր ետ դարձան, էկան ուրանց տեղ:

Վաղրի տղէն ու թագաւորի տղէն էդ տեղէն էլան ու ճամբու Տեա գացին: Օձու թագաւորի մարդիկ էկան էդոնց առէչ, Տրմա Օձու թագաւորի տղէն, օր ետարալու էր ու սաղցաւ, էն լէ էկաւ էդոնց առէչ. տեսաւ, օր էն տղէկներն ին, օր ուրին սաղցուցին, ընկաւ տղէկներու առէչ, տարաւ ուր քօշկ ու սարի դուռ:

Մտաւ ներս, օձեղէն շապիկ հանեց ու հագաւ մէկ լաւ ձեռք թագաւորկան լայրղի շոր, էղաւ մէկ թորընդաղ ջՏէլ մի ու էդոնց թուից բռնեց ու առաւ գնաց ներս:

Տղէկներուն ըսեց թէ՛—Մը վախընէք, ինչ բանի օր էկեր իք, ըսէք, ես ձեր կուշտն իմ:

Ու առաւ, գնաց թագաւորի դիւան: Տղէկներ գլուխ իջուցին թագաւորին ու կայնան առէչ:

Ու թագաւոր ըսեց.—Դուք հողածին, մենք օձ,—իդա տեղ ի՞նչ բան ունիք:

Ըսեցին թէ՛—Թագաւոր, շտա՛ էկեր ինք, վերի դէն Աստուած, ներքի դէն դու, մըղի մէկ իլաջ մ'էրա:

Թէ՛—Ի՞նչ մտքով իք էկի:

Թագաւորի տղէն ըսեց.—Էս Դեւ թագաւորի ախչկայ բուժալուն իմ, էկեր իմ, օր Դեւի ախչիկ տանիմ, ու Դեւ չ'իտայ ուր ախչիկ տանիմ:

Թագաւոր ըսեց թէ՛—Ը՞նչի չ'իտայ:

—Ընձի, կ'ըսէ, գնա իմ կնիկ բի, տամ իմ ախչիկ՝ առ գնա:

—Էդ արժ՞ով իս էկի:

—Էդ արով իմ էկի ու մոռնաթ կ'էնիմ, թագաւոր:

—Օր հմալ է, ես ու Արծըւի թագաւոր կուուեր ինք, Արծըւի թագաւոր իմ վրէն շատ զօրնդեղ էր, օր կուուանք, ընձի մէկ քար մ'ունէնք*), իմ քար խլեց տարաւ, մենք ձըմըւան ժամաւ:

*) Աւշագրու(թեան արժանի են այս և սորա նման քերականական խորթութիւններ, որ նկատուում են այս բարբառում. օր. ես խաբար չունէնք—ես խաբար չունէի—ենթական և ստորոգելին անհամաձայն. օր ես սպանուէր—գէմքով անհամաձայն: Դու մեռուկ էր (էիր), ես դու քնուկ չէր (չէիր):

նակ էն քարով կապրէնք, էն քար կ'լիզէնք ու կապրէնք. գնա՛, ըսեց, էն քար բի, Դեւ թագաւորի կնիկ տամ, առ գնա:

Տղէն ըսեց թէ՛—Ես ճամբախ չըմ գինայ, ընձի ճամբախ նշանց տուէք, ես էրթամ, բալքի բերիմ:

Բերեց էրկու օձ դրեց տղէկներու հետ, տարան յարի Արծըւի թագաւորի սինոռ, ու ետ դարձան էկան:

Տղէկներ նստան էդ սինոռ ու հաց ուրանց կերան, ու էլան ճամբախ տուին առէչ ուրանց, գացին. գացին, Արծըւի թագաւորի մարդըկտոց մօտէն մարդ էկաւ ըզնոց առէչ. մէկ Արծըւի թագաւորի տղէն էր, էկաւ ճանչըցաւ էդ տղէկներուն ու առաւ գընաց. առաւ գնաց ուրանց դարգՏի դուռ կանգըցուց, օր կայնան, մտաւ ներս բըբկեղէն շոր հանեց վըաւէն. հագաւ մէկ ձեռք թագաւորկան լայնղի շոր, էղաւ մէկ տըսնուհինգ տարեկան ջՏէլ տղէ մի, ու էկաւ ըզոնց կուշտ, էդոնց թուից բռնեց, տարաւ թագաւորի դիւան:

Թագաւոր հարցուց ըզոնց.—Դուք ի՞նչ բան ունիք, էկեր իք:

Ըսեցին.—Թագաւոր, էկեր ինք Դեւ թագաւորի ախչկան ու չ'իտայ տանինք. կ'սնդրինք օր Օձու թագաւորի քար տաս տանինք Օձու թագաւորին, Օձու թագաւոր լէ տայ Դեւի կնիկ, Դեւն էլ տայ ուր ախչիկ, առնինք, էրթանք:

Տղէկներն օր թագաւորից խնդրուան, քար բերին տուին տղէկներուն, քարն օր տուին տղէկներուն, տղէկներ շնոխկըլան ու ետ դարձան. դարձան ու էկան Օձի թագաւորի կուշտ, քար տուին Օձի թագաւորին, Օձի թագաւոր լէ բերեց Դեւի թագաւորի կնիկ տուեց տղէկներուն. կնիկ տարան հասուցին Դեւ թագաւորի կուշտ, ըսեցին.—ԸՏա, Դեւ թագաւոր, իդա լէ քու կնիկ:

—Օր, ըսեց, հմալ է, ես լէ իմ ախչիկ կ'իտամ ձըղի, առէք, գացէք: Բերեցին ու հագուցին ու խըուցին Դեւ թագաւորի ախչկան, աչքեր դեղին*) ու գլուխ կապին ու մէկ ձի՛մ լէ հագ:

*) Արարանցի աջիկները աչքերին գեղ են քսում աւելի գեղեցիկ իրեալու համար:

րեցին ու բերին Գլխի ակազիան հեծրցուցին, ու ընկան ճամբախ, գացին, հասան ուրանց բաղաք:

Ու տարան ակազիկ դրեցին մէկ օթախի մէջ, դճուղ-ղուռնայ սարքեցին, բերին ակազիկ պսակեցին ու ժամուց հանին, բերին, եօթ օր գիշեր ու ցերեկ հարսնիք էրեցին:

Ընդոնք հասան ուրանց մուրազին, լսողներ լէ հասնին ուրանց մուրազին:

Ջ Ա Ն - Փ Ո Լ Ա Դ

Մէկ թագաւոր կ'էղնի. իդա թագաւորին քառսուն տղայ կ'էղնի: Եղաւ, օր տղէկներ հասան՝ պղի կարգէր. միտք էրից, օր կարգէր:

Կնիկն, իշխաններ քոման ըսեցին թէ՛—Թագաւոր, ըմէն մէկ տեղից մէկ ակազիկ բերիս, չըն կառավորուի, ըմէն մէկ տեղից պըղի էղնի:

Եղաւ օր մէկ դարվէշ էկաւ ըսեց.—Թագաւոր, դու արեւելոց թագաւորն իս, արեւմտոց թագաւորին լէ քառսուն ակազիկ կայ:

Թագաւոր վերցուց թէ՛—Արեւմտոց թագաւոր դո՞ր ա:

Ըսեց.—Մարդ ճամբա՛, իմցի տես դոր ա:

Մարդ ճամբեց, տեսաւ օր արեւպատոց թագաւորին քառսուն ակազիկ կայ. էդ տեղէն օր ետ դարձան, էկան, արեւպատոց թագաւորի կնիկ վերցուց թէ՛—Գացէք տղէկներ, բերէք, օր մեծ մեծին տամ, պղտիկ լէ պղտըկին:

Ելաւ թագաւոր վերուց տղէկներ գնաց. պղտիկ տղան Խըրխըզան քուչուկ*) Փիր-Ահմատ մնաց տուն:

Թագաւոր վերցուց տղէկներ գնաց արեւմտոց թագաւորի մօտ: Բերեցին ակազիկներ մեծ մեծին տուին, պղտիկ պղտըկին:

Խըրխըզան քուչուկ Փիր-Ահմատ մացեր էր տուն. թագաւորի կնիկ վերուց թէ՛—Դո՞ր ա բու պղտիկ տղէն:

*) Քառասունից կրտսեր:

Թէ՛—Մանցեր ա տուն, մէկ էլ տղոց տեղ շիքա՛, գան նստին:

Թագաւորի տղէկներ վերցին ակազիկներ բերին, քառսուն լէ ջառիէք հետ ուրանց: Եկան մէկ չիման տեղ գիշեր օթուրախ էրին. լուսուն էլան, օր վիշապն փաթուեր էր չորս բոլոր, մացին շիւար. էլան, գացին բոլոր պտտեցին, գլու գտան. հարցուցին.—Ա՛յ ջանաւար, դու յո՞րի մեր առէչ կտրեր իս, մըզի արգըլեր իս, մենք ի՞նչ ինք էրի քըզի:

Ըսեց.—Խըրխըզան քուչուկ Փիր-Ահմատի նշանած կթողիք յուգա, ձըզի կթորկիմ էրթաք, թէ չըք թողի, կմնաք իդա տեղ կըմեռնիք:

Ելան մաշուարաթ տեսան. Խըրխըզան քուչուկ Փիր-Ահմատի նշանած թողին հոնի, ուրանք էկան, էկան գացին տուն, ամէկ մէկ օթախի մէջ գացին. գացին օթախներու մէջ, Խըրխըզան քուչուկ Փիր-Ահմատ մնաց շիւարած, նշանած չէր: Ընդոր նշանածի ջառիէն բերած էն հետ ուրանց, հմա նշանած չէր:

Գնաց ջառիի առէչ կտրեց թէ՛—Քու խանըմ՛ դո՞ր ա:

Ըսեց.—Ջանմ, էկանք Ֆլան տեղ, վիշապ մի փաթուաւ մեր բոլոր, զքու նշանածն առաւ:

Ըսեց.—Օր հմալ է, ես պղի էրթամ իմ նշանածի հաւարին:

Ելաւ, հեծաւ զԱրարաղայտան, գնաց հասաւ վիշապի կուշտ. գնաց տեսաւ, օր նշանած չադրի մէջն ա, վիշապ փաթուէ բոլոր. գնաց զարկեց, թուր չկտրեց. պտտաւ զգլու գտաւ, ըսեց.—Յո՞րի իս իմ նշանած բռներ իս էգտեղ:

Ըսեց.—Գինաս յո՞րի իմ բռնի, գնա 2ինմաչին թագաւորի ակազիկ բեր ընձի, ես տամ քու նշանած, տար:

Ըսեց.—Ջանմ, թող էրթամ իդա գիշեր կուշտ, լուսուն էլնիմ, էրթամ:

Ըսեց.—2ըմ թորկի էրթաս կուշտ, քու նշանած արեգական պէս խորոտ ա, թողիմ էրթաս կուշտ, լուսուն էլնիս, թողիս էրթամս, էլ չերթամս բերիս:

Մնաց վիշապի կշտի հետ յարի լուսուն, լուսուն հարցուց

Թէ՛—Ճամբախ դո՛ր վի կերթայ, Ճամբախ ընձի տուր նշանց, ես էրթամ:

Ըսեց.—Գրգալի կերթայ Ճամբէն:

Տղէն էր, Ճամբախ տուեց առէչն ու գնաց. գնաց, հասաւ Ձինմաչին, գնաց էղաւ մէկ պառուու խոնախ.—Մէրիկ, ըսեց, ես անհէր իմ, անմէր իմ, ընձի բըզի կ'էնի՛ս տղայ:

Ըսեց.—Որտի նեա հաց ունիմ, նեա ջուր ունիմ, նեա տեղ ունիմ:

Օր զէգ խօսքն ըսեց, տղէն ըսեց.—Առ բըզի ճանգ մի ոսկի, գնա առ հաց ջուր, ըմեն թագարուք տես, արի:

Պառաւն ուրախացաւ. տղէն մնաց ընդոր կուշտ:

Լուսուն տղէն էլաւ, գնաց մըչ բաղբին ժուռ գալու. գնաց ժուռ գալու, տեսաւ օր մէկ բագան ջամբըբէ ա, գլխէ լէ բերդ ա շիբուկ, մէկ գլուս մանցէ, օր բերդ թըմի, մէկ ջամբաք մացէ, օր բագան թըմի:

Գարձաւ ետ, էկաւ պառուու կուշտ թէ՛—Նանէ, ձեր թագաւոր ի՛նչ անաստուած ա, էդ յո՛րի էդմալ արունք էրեր ա:

Ըսեց.—Իդա թագաւորին ախչիկ մի ունի, նաթիջայ ա դրուկ վոէն, որն օր կատարայ, ախչիկ կիտայ ընդոր, որն օր չկարցաւ, նաթիջէն կատարեց՝ գլուս կղարկայ:

Մնաց լուսուն, տղէն էլաւ, գնաց բաղարի մէջ ժուռ էկաւ, տեսաւ օր մէկ մարդու ձեռ դրում մի կայ, կ'ըսէր.—Ալանդա փոշման, սաթան դա փոշման *):

Ըսեց.—Ջանմ, իդա դդմի վնասն ի՛նչ ա, կ'առնիմ տանիմ, բրդինք, էփինք, իմ մօր հետ կուտինք:

Առաւ էկաւ տուն. բերեց, մէր տուն չէր, ուր դանակ քաշեց զարկեց մէջ իրեք արաք էլան դդմից, կայնան առէչ, յախու դանակ քաշեց: Գարձաւ միտք էրեց թէ՛—Ջանմ, էդ իմալ բան էր, կայնի մէկ լէ զտրկիմ դանակ:

Մէկ լէ զարկեց, կայնան առէչ թէ՛—Խըրխդան քուչուկ Փիր-Ահմադ, աւիրինք, թէ շիբինք:

*) Գնողն էլ կղղջայ, ծախողն էլ կղղջայ:

Ըսեց.—Նը աւիրէք, նը շիբէք:

Գրում գրեց ուր ծոց:

Մէրն էկաւ:

—Նանէ, գնա թագաւորի ախչիկ ուղա ընձի:

—Որտի, ըսեց, անջախ իս էկի իմ կուշտ, ընձի կ'պահիս, թագաւոր զմայ քար ա, կ'սպանայ բըզի:

Ըսեց.—Ձէ, նանէ, պդի էրթաս:

Մօր իլաջ կտրաւ. պառաւ գնաց նստաւ վըր բինագ տաշուն*). թագաւորի մարդն հարցուց թէ՛—Պառաւ, յո՛րի իս էկի:

Էկեր իմ զթագաւորի ախչիկ կուզիմ իմ տղին:

Օր ըսաց՝ էկեր իմ զթագաւորի ախչիկ կուզիմ իմ տղին՝ թագաւորն ըսեց.—Գացէք ըսէք եօթ ջաղաց շիբուի իմ բօշկ ու սարի ցած, լուսուն էլնիմ տեսնիմ, օր դորչիք զիրար ծեծած ա, էկած մըտ ընձի գանգատ:

Պառաւն էլաւ, էկաւ տղի կուշտ, թէ՛—Ո՛րտի, հմլայ ա դրէ վըր ընձի, օր չկատարիս, լուսուն գլուսդ ի կղարկայ:

Տղէն քաշեց դանակ, զարկեց մըչ դըդմին. արարներ էլան առէչ կայնան, ըսեց.—Աւիրինք, թէ շիբինք:

Ըսեց.—Ոչ աւիրէք, ոչ շիբէք. թագաւորի բօշք ու սարի տակ եօթ ջաղաց էղնի, դորչիք զիրար տփին, իգան մըտ թագաւոր գանգատ:

Ու պառկան բնան:

Լուսուն էլան օր դորչիք իրար տփած, էկած էն մըտ թագաւոր գանգատ:

Մնաց յիրիկըւան. պառաւ էլման գնաց, նստաւ վըր բինագ տաշուն:

Թագաւոր խանչեց թէ՛—Պառաւ, մնաց էրկու նաթիջայ, թէ օր էն էրկուս լէ կատարիս, ախչիկ կ'իտամ քու տղին, թէ օր չէ՛

*) «Հարսնախօսութեան քար», եթէ կարելի այսպէս կոչել հէքիաթները մէջ յաճախ գործածուող մոտիւ է դա. այն քարն է, որ գրուած է թագաւորի դռան առաջ, քարի վերայ նստելը նշան է, թէ գործ ունին թագաւորի հետ:

տղիդ գլուխ կ'զարկիմ. ըսեց, լուսունն օր էնիմ դուս, իմ քօշկ ու սարի տկով զաթար մի ջորի ընցնի քուռկըներ էդէ, քաշողն թիզ մ'եղնի, մուրուք թիզ-կէս:

Լուսունն թագաւորն էլաւ, օր զաթար ջորին էկաւ քօշկ ու սարի տկով ընցաւ, գնաց:

Պառաւ էլման գնաց, նստաւ էնդեղ:

Թագաւոր ըսեց.— Պառաւ, մնաց մէկ նաթիջէն, լուսունն քու տղէն կիգայ յուդայ, մէկ թաս շարքաթ կ'իտամ ձեռ. էնի իգա չինարի գլուխ. օր չթափեց, ախչիկ կ'իտամ ընդոր, օր թափեց՝ գլուխ կ'զարկիմ:

Էկաւ տղին ըսեց:

Լուսունն տղէն էլաւ, գնաց թագաւորի քօշկ ու սարի տակ տղէն շաա տեսակի խորոտ էր, ախչիկ բերեց ուր ծամերուց մէկ չորս մազ քաշեց, տուեց տղին.— Տղայ, ըսեց, իգա լէ իմ մատնիք, մատնիք լէ տուեց, իգա մազ կապայ քու օտաց, ծառն կ'էղնի քարթ-քարթ, իգա մատնիք լէ թալ մըչ շարքըթին, շարքաթ կը-պընդի, կ'էղնի ինչ օր մածուն, դիր ծոց, էլի ծառի գլուխ:

Ծառի տակ զանգ կէր դրուկ, օր մէկ կաթ կաթէր վրէն, ձէն կ'իտէր զանգն:

Տղէն զէգի դրեց ծոց, մաղեր կապեց օտ, էլաւ ծառի գլուխ. էլաւ ծառի գլուխ, ծոցից հանեց թաս, մատնիք միջէն հանեց, աչքն ընկաւ ուր հօր քաղաք, լաց,— արտսունը պագաւ զանգի վրէն, ձէն տուեց:

Թագաւորն ըսեց.— Արի ցած՝ գլուխդ ի զարկեմ:

Տղէն խանչեց իշխաներուն, ըսեց.— Իշխաներ, ըսեց, շար-քաթն քաղցր ա, արտըսունը շոռ ա, էկէք, տեսէք արտըսունը ա՞, թէ շարքաթ ա:

Տեսան, օր արտըսունը էր:

— Թագաւոր, ըսեցին, էգի արտըսունը ա, էգի շարքաթ չէ:

Թագաւորն ըսեց.— Օր հմալ ա, իմ ախչիկ տուի տղին:

Թագաւոր բերեց ախչիկն պսակեց վըր տղին:

Տղէն պգի էրթէր թագաւորի էրես, էկաւ օր էրթէր թա-

գաւորի էրես, Ջան-Փոլագ կէր (թագաւոր զէգի բռներ էր, բե-րէր էր, ճխան դրեր էր անկաջ), տղէն էկաւ, օր պգի էրթէր թա-գաւորին, ձեռ թալեց, տղին բռնեց, թէ՛— Տղայ, քու Աստըծու սիրուն էղնի, իդախըր ժամանակ ճխան դրեր ա իմ անկաջ, կ'եր-թաս թագաւորի կուշտ, թագաւոր բըզի շատ խալաթ կ'իտայ, մ'առնի, խնդրուի, թըղ ընձի թողայ, կ'էղնիմ քըզի խղմաթբար:

Տղէն գնաց թագաւորի կուշտ:

Թագաւոր ըսեց.— Այ օրտի, ինչ օր քու սիրտ կուղայ, ու-զա՞ տամ*):

Ըսեց.— Տղայ, կ'թողիմ, կ'էղնի քու անձին ցեց:

Թողեց:

Թողեց, Ջան-Փոլագն էլաւ, գնաց ընդոր ձին թիմրեց, արաբ թիմարի տուեց:

Մէկ իրեք օր մնաց, էլաւ Խըրխագան քուչուկ Փիր-Ահմատ գնաց թագաւորի կուշտ, ըսեց.— Ես քըզնէ կ'խնդրիմ, ընձի ի-զին տաս էրթամ:

Թագաւոր վերուց թէ՛— Որտի, մէկ իրեք օր ընձի մոհլաթ տուր, ես իմ ախչկայ ոտ ու ձեռ տեսնամ, առ գնա:

Իրեք օրն օր թըմաւ, թագաւորն զտղէն դրեց ճամբու:

Տղէն, ուր կնիկ, Ջան-Փոլագ բարխանէք վերցին ու գացին. մէկ իրեք թէ չորս օր ճամբախ գացին, էկան մէկ ծովու խրաղ օթուրախ էղան: Գիշերուայ մէջ տեղ Ջան-Փոլագն էլաւ, բռներ ձղեց, դրում հանեց. հանեց, դանակ զարկեց մէջ, դանակ զար-կելուն՝ արարներ էլան, ըսեցին.— Ջան-Փոլագ, աւիրի՞նք թէ շի-քինք:

Ըսեց.— Եր աւիրէք, նը շիքէք, ընձի ու թագաւորի ախչիկ տանէք զնէք եօթ ծովու կղզին:

Տղէն մնաց բնուկ յարի լուսուն. օր լուսցաւ, տեսաւ, օր նը Ջան-Փոլագ կայ, նը ախչիկ կայ, նը դգում:

*) Գրի առնելու ժամանակ մոռացմամբ մի նախադասութիւն պակաս ենք թողել. մտքից իմացուում է, որ տղան Ջան-Փոլագին աղատելու համար է խնդրում:

Տղէն էլաւ նստաւ, լաց:

Տղէն շատ լաց, ձին էլաւ լեզու, ըսեց.—Յո՞րի կ'իլաս:

Ըսեց.—Ես չ'իլամ, ըբա ո՞ր լայ:

Ըսեց.—Իմ քուր մըջ իդա ծովուն ա, գամն յուգայ հորուկ ա, հանիս, թաթխիս ջրի մէջ, կիգայ. ես ընկեր իմ հողածնի բէհնի տակ, էլ չըմ կեարնայ ընցու զքի ծով:

Տղէն գամ թաթխեց ծով, քուրն էկաւ. քուրն էկաւ, հեծաւ զքուր, ծովն ընցաւ, գնաց թագաւորի ակնայ կուշտ:

Էնկերդր թագաւորի ակնայ լացի, աչքերն ուներ ա, դարձի մէկ-մէկ խնձոր:

Աչքն առաւ թագաւորի տղին, ուրակցաւ, էկաւ առէչ, փաթուան իրար ու գացին, գացին բօշկ ու սարէն:

Ախչիկ վերուց թէ.—Քու տուն աւիրի, էդի Ջան-Փոլադն ա, ըտոր մահ չունի:

Ջան-Փոլադ գացեր էր ավելուչ. իրիկուան Ջան-Փոլադն էկաւ, ակնայ տղին տարաւ պահեց, Ջան-Փոլադն էկաւ, ըսեց.—Իդա տեղէն մարդու հոտ կիգայ:

Ըսեց.—Սարից դու կիգաս, ձորից դու կիգաս, մարդահոտ քննէ կիգայ, ես իդա տեղ նստուկ, ընձնէ յո՞ւստ մարդահոտ պդի գայ:

Մնաց լուսուն, Ջան-Փոլադն էլաւ, գնաց ավելուչ:

Տղէն թագաւորի ակնայ ըսեց.—Ըդոր հոգու տեղն իմցի, ըդոր հոգին ըդոր մօտ չէ:

Իրկուն Ջան-Փոլադն էկաւ. թագաւորի ակնայ հարցուց.—Ջան-Փոլադ, քու հոգին դո՞ր ա:

Ըսեց.—Իմ հոգին իդա աւելն ա:

Լուսուն թագաւորի ակնայ բերեց մէկ ձեռք շոր կտրեց, կտրեց, հագուց աւելին. ինք ու թագաւորի տղէն ուրակուտեն էրին չուրի իրկուն. իրկուն թագաւորի տղին տարաւ, պահեց ու էդ աւել առաւ ձեռք, խաղցաւ:

Ջան-Փոլադն իրկուն էկաւ. իրկուն էկաւ, տեսաւ, որ թագաւորի ակնայ աւել բռնի ձեռ, կ'խաղայ:

Ջան-Փոլադ ծծղաց. որ ծծղաց, թագաւորի ակնայ զէդ աւել թալեց ու գնաց թըխ ծով, որ զինք թալայ ծով:

Ջան-Փոլադ եարվար ընկաւ թէ.—Թագաւորի ակնայ, արի կ'ըսեմ:

Ախչիկն դարձուց, բերեց թէ.—Գինաս, իդա ցախաւելն ա իմ հոգին:

Էն մէկ էլ որ լէ ցախաւել զարտըրեց, խաղցաւ չուրի իրկուն:

Իրկուն Ջան-Փոլադն էկաւ, էլման ծծղաց թէ հողածին ա, յիմար ա, չը գինայ:

Թագաւորի ակնայ շատ լաց ու գնաց թըխ ծով. Ջան-Փոլադ գնաց, բռնեց, բերեց.—Թագաւորի ակնայ, ըսեց, իմ հոգին Գեւրստուն Ղաշղայ-ասլանի փորն ա, մէկ զուծի, իրեք ճընճըուկ մէջ:

Մնաց լուսուցաւ. Ջան-Փոլադ գնաց ավելուչ: Թագաւորի տըղին հանեց ակնայ ըսեց.—Խըրխոան-բուչուկ փիր-Ահմադ, կըսայ, իմ հոգին Գեւրստուն Ղաշղա-Ասլանի փորն ա, կեարնաս էրթաս բերիս:

Տղէն իրկուայ դէմ գամ թաթխեց ծովու մէջ, հրեղէն ձին էկաւ. էկաւ, հեծաւ, ընկաւ ծով, գնաց մըտ ուր ձին. զխորաղ թողուց մըջ ծովուն, հեծաւ ուր ձին, տուեց ճամբախն ի առէչ. գնաց, հասաւ Գեւրստուն:

Հովիւ ոստտ էկաւ. զէդ տղէն վերուց դրեց մըջ կուլբի սարբըլին, ձին լէ խառնեց խըտ օխչիին, առաւ գնաց:

Գեւրստուն թագաւորի ակնայն էկաւ բեր. էկաւ բեր, էդ հովիւ զտղէն տարաւ, դրեց թագաւորի ակնայ չոքին թէ.—Քըլի էդի հագիա իմ բերի, հողէ կոշտիկ ա:

Թագաւորի ակնայ օխչար կ'ընեց, պրծաւ, տղէն դրեց վըր փիջին, առաւ, գնաց. ակնայ լէ վերցուց տարաւ թագաւորին հագիայ:

Թագաւոր շատ ուրակցու վըր էդ տղին.—Կ'էղնի, որ ըդոնք ուրա՞ց խելըով էլնին զաշխարք արգլին:

Ըդոր իշխաններ վերցնին թէ՛—Թագաւոր, իդա տղէն ճամբինը, էրթայ քու ձին ջրայ, տենանք ի՛մալ կըրայ:

— Տղայ, ըսեց, գնա էն ձին ջրա:

Ըդոնք զգուռ կգրկէն, տանէն, դնէն ձիու առէչ, էդ տղէն զձին պրծուց, բերեց վրէն խմցուց:

— Դէ, ըսեց, տղայ, գնա ձիուն գարի կախա:

Ձիու բանձրուտեն տղի բոյ չըր հասնի, բերեց ջրհոռի բերան բացեց, ձին գլուս բսպեց մէջ, ինք թեւ թաւեց վըր գլխուն: Թագաւոր վերուց. — Տեսաք, ըսեց, ես ըսի ընդոնք խելքով պտի կառավարուին, զօրքուտենով չէ:

Տղէն ըսեց. — Պուդ մի ջուր տաք խմիմ:

Ըսին թէ՛ — Ջուր չկայ:

— Ըբա յո՞րի ջուր չկայ:

Ըսեց. — Մէկ Ղաշղա-Ասլան կայ, եօթ գուռ ջուր կըցուի, կ'իդայ խմայ, էրթայ, արգըլեր ա մեր ախպուր:

Տղէն վերուց թէ՛ — Թագաւոր, ես էրթամ ընդոր սպանիմ. ի՛նչ կ'իտաս ընձի:

Ըսեց. — Իմ թագաւորուտեն լէ կիտամ քըզի, իմ ախչիկ լէ կիտամ քըզի:

— Ըբա, թագաւոր, գինաս ի՛նչ կայ, եօթ տիկ քացախ կուզիմ բենէ, եօթ անյուսյ բուրդ կ'ուզիմ, մէկ չորս լէ մարդ:

Ելաւ չորս մարդ, զէդ տկեր, զէդ բուրդ վերցին, առան գացին:

Տուեց էն գոներու ջուր թափել, բրդեր զարկեցին ախպրի ախն օր ջուր գուս չիգայ, ցամքըցուցին: Բերեց քացախ լէ լցեց մըչ էդ գոներուն. ընդոնց իզին տուեց թէ՛ — Դէ դուք գացէք:

Ընդոնք թողին, գացին. տղէն ուրին տեղ շերեց, տափաւ:

Ախաւուր շոքն օր տուեց, Ղաշղա-Ասլան մէշեց էլաւ, էկաւ. զզոնն շոք, հոտն առաւ, տեսաւ, օր քացախ էր. մէկ ետ դարձաւ, գնաց. էլ ուրիշ տեղ ջուր չ'իէր, օր խմէր. մէկ լէ ետ դարձաւ էկաւ. իրեք հաղ գնաց, էկաւ, իրեք հաղն օր էկաւ, իլաջ կտրեց ասլանին, խմեց. խմեց, պատուաւ: Քաշեց դանակ զըդոր

փորն ձեւեց, զութին միջէն հանեց. զութու բերան բացեց, օր իրեք ճնճուղ կէր մէջ, մէկի գլուս կտրեց, էն մէկէլ էրկուս մնաց. զութով դրեց ուր ծոց, առաւ խրտ ուրին գնաց:

Եկաւ Դևի թագաւորի կուշտ. էկաւ թագաւորի կուշտ անկըջկըլայ բերեց թէ՛ — Աչքդ ի լուս էղնի, Ղաշղա-Ասլան սպանեցի:

— Դէ որդի, ըսեց, իմ ախչիկ լէ տըւի քըզի, թագաւորուտեն լէ տըւի քըզի:

— Քու թագաւորուտեն քըզի բու՛մբարաք էղնի, ընձի իզին տաս՝ ես էրթամ:

Թագաւոր վերուց թէ՛ — Մէկ իրեք օր ինձի մոհլաթ տուր. ես քըզի դնիմ ճամբախ՝ գնա:

Իրեք օրն օր թըմաւ, թագաւոր զէդի դրեց ճամբու, ախչիկ լէ տըւեց ու շատ ապրանք լէ դրեց խրտ ուր ախչիկան:

Քշեց էդ տեղեց էկաւ ծովու խրաղ. ախչիկ իջուց, չադր զարկեց, Դևի թագաւորի ախչիկ դրեց մէջ, հըմա էն սհաթգախ ձիու գամ զարկեց ծով, էկաւ խսրաղ, էլաւ հեծաւ, ընցաւ գնաց մըտ թագաւորի ախչիկ, թագաւորի ախչիկան հարցուց թէ՛ — Ջան-Փոլադ ի՛մալ ա:

Ըսեց. — Ջան-Փոլադ հիւանդ ա, կ'ըսայ իմ ջան կ'ցաւայ:

Ըսեց. — Բերեր իմ զըութին, ճնճղներ մէն ին:

Բացին զըութու բերան, էրկուով մէկ ճնճուղ սպանեցին, նըստան փանջարէն, թամաշայ էրին Ջան-Փոլադի գալուն, տեսան, օր Ջան-Փոլադ փէտ դրի վըր փիջին, նէճիր ա էրի, զարկեր ա փէտին ու կ'իգայ:

Եկաւ մօտկըցաւ, թագաւորի տղէն էրեաց աչիչ, ըսեց — Թագաւորի տղայ, ես քըզի բէքախտուտեն իմ էրի, քըզի կարօտեցեր իմ, արի բու էրես պագիմ:

Թագաւորի ախչիկ վերուց թէ՛ — Քու Աստըճու սիրուն, մ'էրթար, Ջան-Փոլադ, զքու գլուս կքաշայ ուր փոր:

Ըսեց. — Ջան-Փոլադ, ըսեց, գացեր իմ Ղաշղա-Ասլան սպաներ իմ, զըութին առեր իմ, էկեր իմ, էրկու ճնճղուկ սպաներ իմ, մանցի մէկ:

Բացին զութու բերան, օր վիզ քաշէն, տղէն ըսեց ես կ'գա-

շիմ, ակնակն ըսեց՝ ես կ'քաշիմ—էրկուսի ձեռաց պրծաւ, էլաւ ծառ, ըսեց.—Հաւկիթ կ'ածիմ, զիմ տէր կ'սաղցում:

Օր ըսեց, ներքեանց թագաւորի ակնակն բերեց ցած, զգլխ քաշեցին:

Ջան-Փոլադ սատկաւ:

Ժուռ էկաւ, զբոլում գտաւ, զգանակ զարկեց մէջ, — արարներ դուս էլան, ըսեց.—Աւիրի՛նք, թէ շիբի՛նք:

Ըսեց.—Նը աւիրէք, նը շիբէք, հուկցայ կ'վերուք զթագաւորի ակնակն, —ինչ օր ինք թեթ'ւ ա, գին ծանդր ա, —ընցուք ծովու էն խրաղ՝ իմ բարխանի կուշտ:

Արարներ զթագաւորի ակնակն լէ, զմալ լէ ըմին ընցուցին ծովու էն դէն:

Տղէն էկաւ, դամ թաթխեց, ձին էկաւ, ընցաւ էնդէն. բերեց ուր բարխանէն բարձաւ, զկնկտիք, գնաց ուր հօր էրկիրն. էկաւ էնտեղ, օր վիշապն էր, աչկեց, տեսաւ օր վիշապ դարձաւ մէկ ծեր հալիւոր. հալիւոր նստուկ չադրի կուշտ:

Բարև տըւեց, բարևն առաւ:

—Գէ, ըսեց, որտի, բարի իս էկի, խիստ հազար բարի:

—Գէ պապէ, քու ուղած բերեր իմ:

—Օրտի, ըսեց, քըզի համար բուսբարաք էղնի. ընդոր հէր էդ խըդր արուներ էրեր էր, ես գիցայ, օր դու կ'երթէր, բերէր, էն արով քու նշանած արգըլեցի իդա տեղ: Գէ որտի, մէկ նշանածի տեղ էլաւ իրեք, գնա Աստուած քու բան աջողայ:

Էլաւ, տղէն էր, բարխանէն բարձաւ, կնկտիք հեծըցուց ձիանք, շնորակալուտեն առաւ պապէից. պապէն օրշնուտեն տըւեց, տղէն դուր բարխանէն քշեց, հաղ մ'էլ տեսաւ, օր պապէ չկայ*):

Էկաւ ուր հօր քաղքին մօտեցաւ, տեսաւ, օր նախընտրու մէկ էդտեղ նախիր կ'պահէր, ըսեց.—Նախընտրու, առ իդա ճանգ օսկին քըզի, գնա իմ հօր անկըջկըլայ տար, թէ քու տղէն էկաւ:

*) Պատմողի ասելով՝ Գարրիէլ հրեշտակն էր վիշապի կերպարանքով Փիր-ահմադի կնոջ պահողը:

Նախընտրու վաղաւ, գնաց. էդի բերեց ուր բարխանէն իջուց, չադըր զարկեց, թագաւորի ակնակնը դրեց մէջ: Նախընտրու գնաց անկըջկըլայ տարաւ թագաւորին:

Թագաւոր ասկար վերուց, էկաւ տղի առէչ, էկաւ տղի առէչ, առաւ զհարսներ, տղէն, ու գնաց. տարաւ իջուց, տարաւ ուր տուն. եօթ օր եօթ գիշեր տղի հարսնիքն էրեց:

Ընդոնք հասան ուրանց մրաղին, դուք լէ հասնիք ձեր մըրաղին:

Օ Ս Կ Ի - Ծ Ա Մ

Աւալ ժամանակ մէկ թագաւոր կ'էղնի. էդ թագաւորին լէ մէկ տղայ: Էդ տղի սովորուտքն էր, օր գիշեր ցերեկ ավըղուշ կ'երթէր: Մէկ պառաւ մէկ արտ կորիկ էր ցանի, էդ թագաւորի տղէն ըմեն օր կ'երթէր ավըղուշ, կ'երթէր մըչ պառու կորեկին ժուռ կ'իգէր, լոր կ'բռնէր:

Մէկ օր պառաւ էլաւ, գնաց՝ օր կորեկ շատ էն տրորած, հարցուց գրկեցնեցուց.—Էդ ո՞րն էրեց հմլայ:

Ըսին թէ—Թագաւորի տղէն:

Պառաւ ըսեց.—Կայնի ես էրթամ, նստիմ մըչ արտին, յարի թագաւորի տղէն գայ:

Պառաւ գնաց, նստաւ մըչ կորեկին, յարի թագաւորի տղէն գայ. տեսաւ, օր թագաւորի տղէն էկաւ. վերցուց.—Ա՛յ որտի, էդի իմ ուղէն ա, յո՞րի կիտաս յոտաց առէչ:

Վերցուց ըսեց.—Պառաւ, էդի խոտ ա, ի՞նչ ա:

Ըսեց.—Թագաւորի տղայ, քըզի չըմ խիմիշի, մեր թագաւորի մէկ տղէն իս, Աստուծուց կ'խնդրիմ Օսկի-ծամի սէր մըչ քու սըրտին էղնի:

Օր ըսեց, տղի խեղք գնաց, ընկաւ ցած ձիուց, էլաւ, էկաւ ուր օթախի մէջ վըր քիթ ու բերնին ընկաւ:

Հէր ճամբեց թէ—Ա՛յ որտի, էդ ի՞նչ էկաւ քըզի:

Ըսեց. — Հէր, ընձի օր չ'երթաս Օսկի-ծամ չըբրես, ես կը-
մեռնիմ:

Էլաւ հէր, ըմեն դէն ճամբեց թէ՛—Գացէք, տեսէք ո՞ր դէն
ա, էրթամ, բերիմ:

Գացին ժուռ էկան, էկան ըսին. — Թագաւոր, իսկի ձէն չըբ
լսեր ի, թէ դոր կայ, Օսկի-ծամ որտեղն ա:

Տղէն միտք էրեց ուրին թէ՛—Ջանմ ընձի ետրայ սաղըցող
չ'կայ:

Տղէն էլաւ ուրին համար մէկ թեթեւ չադր վերուց, ուր
սարք վերուց ու խանչեց Աստուած, ընկաւ ճամբախ:

Գնաց, շատ ու բիչ Աստուած գինայ, գնաց իրեք ճամբաբա-
ժին իջաւ, ուր չադր զարկեց, նստաւ մէջ, բերեց չայ սարքեց,
լցեց մէկ սաքան չայ, գրից գետին, ըսեց. — Աստուած, մէկ գէր,
էդ չայ մէկ ինք խմէր, մէկ ես:

Տեսաւ, օր էնդէն մարդ էկաւ:

Ըսեց. — Արի նստի:

Էնի նստաւ: Մէկ լէ լցեց չայ, ըսեց. — Աստուած, մէկ լէ գէր,
իդա չայ խմէր:

Տեսաւ, օր մէկ լէ էնդէն էկաւ. էն լէ նստաւ, էլան իրեք-
իրեք չայ լցին բարենբար խմեցին:

Խըմեցին պրծան. — Ախպէր, ըսեց, դու յո՞ւստ իս:

Ըսեց. — Արւբբան, ես արևելոց թագաւորի տղէն իմ:

Գարծաւ մէկէլին ըսեց. — Արւբբան, դու յո՞ւստ իս:

Ըսեց. — Ես լէ արևմտոց թագաւորի տղէն իմ:

Ըսին. — Գո՞ւ:

Ըսեց. — Ես լէ Փլան թագաւորի տղէն իմ, իմ անուն լէ Ջան-
Փոլագ է:

Ըսեց. — Ըբա յո՞րի ժուռ կիկաս:

Ըսեց. — Թարգ դունեայ էրեր ինք, ախշար ժուռ կիգանք,
տենանք մըր գլոխ Ե՞նչ կիգայ:

Ըսեց. — Քու փէշէն Ի՞նչ ա:

Արևելոց թագաւորի տղէն ըսեց. — Ես աստղաբաշխ իմ:

Մէկէլ տղին հարցուց թէ՛—Գու Ի՞նչ փէշէ տէր իս:

Ըսեց. — Մէկ ուլինգ թալին ծովու տակ, ես կ'երթամ, հա-
նիմ, բերիմ:

Ջան Փոլագին դարձան հարցուցին թէ՛—Քու փէշէն Ի՞նչ ա:

Աերուց ըսեց. — Իմ փէշէն էն ա, օր հաղար մարդ իմ ա-
ռէչ ինչ որ մէկ փարայ ա, ես ինսանից ա՛հ չըմ բաշի, մա՛հ
չ'ունիմ:

Էլան իրեքով ախպէր. խանչեցին Աստուած ու ընկան ճամ-
բախ. գացին, գացին, տեսան, օր մէկ սիւտակ քօշի ու սարայ, ինչ
որ ձիւն:

Գացին էդ սիւտակ քօշի ու սարի դէմ առան, զարկին ը-
դոր դարդա՛հ կոտրին, մտան ներս, ուրանց ձիանք բրախեցին մըչ
բախչին. տեսան, օր մէկ ախշիկ փանջարից գլոխ կախեց, ըսեց.

— Թագաւորի տղէկներ, էլէք գացէք, մկայ դե կիգայ ձըր
ընջ փերթ ձըր անկաջ կմնայ:

Աերուց Ջան-Փոլագն ըսեց. — Թագաւորի ախշիկ, փշուր մի
հաց ճամբիս իգայ՝ ուտինք, էլնինք էրթանք:

Հաց ճամբեց էկաւ. հացն կերան քաշին խապուտներ, պառ-
կան վըր հաւուղին. օր պառկան, ախշիկ երկու հաղ, իրեք հաղ
ձէն տըւեց, ձէն չտուեցին էլ, պառկան քնան:

Մնաց, իրիկուայ պահն էր, դեն էկաւ: Եկաւ, շատ հերսո-
տաւ վըր թագաւորի ախշկան թէ՛—Գու յո՞րի չդրիր ճամբու, գա-
ցին, հմլայ թալափ էրեցին իմ բախչէն. ըմա բան չ'կայ, ես շատ
փափագեմ հողածնի մտի:

Ջան-Փոլագ վերուց ըսեց. — Հողածնի մտի փափագ իս, էլի
կուռինք, ընձի սպանա, իմ միս կի:

Էլան կըուրտան, զգւի գլոխ զարկեց. թագաւորի ախշիկ
փանջարից իշկեց տեսաւ, օր դեին սպանեց, իջաւ, էկաւ առէչ,
բռնեց Ջան-Փոլագի ձեռ, խանչեց, օր տանէր ուր քօշի ու սա-
րէն:

Իրեք իրարու հետ վերցուց տարաւ քօշի ու սարէն. հաց
գրին, կերան:

Ըսեց.— Թագաւորի ակնիկ, իմ տեղ ո՞րն ա:

Ըսեց.— Յուզա մէկ ակապօրն ա, իդատեղ մէկէլ ակապօր, իդատեղ լէ իմն ու քուսնն ա:

Ըսեց.— Դու իմ ակապօր նշանածն իս, դու իմ հարսն իս:

Արեւելից թագաւորի տղէն մեծն էր, ընդոնք մէկ տեղ պառկան, էրկուս ջոկ-ջոկ ուրանց տեղ պառկան:

Էլան, լուսուն էրկու ակապէր ձիան քաշին, օր պղի էրթէն, մեծ ակապէր լէ էկաւ, օր պղի էրթէր:

Ջան-Փոլադ վերուց թէ՛— Դու յո՞րի կիգաս, էդի փարի ա, սիրտ կպատուի, դու մանցի հոգ:

Էդոնք էլան ուրանց ձիանքն հեծան. թագաւորի ակնիկ էկաւ Ջան-Փոլադի ձեռ բռնեց, ըսեց.— Դու կ'երթաս, բու փափազն իմալ պղի առնիմ, նշանաբան տու:

Ձեռ տարաւ ծոց, դաստըմալ հանեց, տըւեց թագաւորի ակապէրին.— Ինչ ժամանակ օր ես նեղուտենի մէջ կ'էղնիմ, իդա եայլուղ կ'տղկի, իմ ակապէր ճամբիս գայ իմ հաւարին:

Էրկու ակապէր գացին. շատ ու քիչ Աստուած գինսյ, գացին դէմ առան մէկ կարմիր քօշկ ու սարի. գացին, ժուռ էկան, ընդոր դուռ գտան. դուռ գտան, զարկին դուռ ջարդեցին, մտան քախէն. ըդոր բախէն չորս զաթ վըր էն մէկէլ բախին աղէկ էր,— ձիանք թորկին մըչ բախին:

Թագաւորի ակնիկ գլու կախեց թէ՛— Թագաւորի տղէնք էլէք գացէք, մկայ կարմիր դե կիգայ ձըր ջոջ փերթ ձեր ականջ կ'թողայ:

Ջան-Փոլադ վերուց թէ՛— Թագաւորի ակնիկ, փշուր մի հաց ճամբիս իգայ, ուտինք, էլնինք էրթանք:

Թագաւորի ակնիկ հաց շրդով կապեց, իջուց. ըդոնք կերան, կերան, քաշին խապուտ վըր ուրանց գլխուն, պառկան, քնան վըր հաւուղին:

Թագաւորի ակնիկ ձէն տուեց թէ՛— Ջանմ, էլէք, գացէք: Անկաջ չ'էրին, թագաւորի ակնիկ ձէն կտրեց:

Իրկուան դեն էկաւ. դեն էկաւ թագաւորի ակնիկ վըրէն

շատ հերսոտաւ թէ՛— Յո՞րի հաց չտըւեցիր, կերան ու գացին, թալափ էրին իմ բախէն:

Ախիկն ըսեց.— Հաց տըւի, կերան, ըսի, չգացին:

Ըսեց.— Իմ ակնէքս ի կ'եռայ հողածնի մսի համար:

Ջան-Փոլադ վերուց ըսեց.— Էլի՛ ընձի սպանա, իմ միս ա-նուշ ա, կի:

Էլան կուռան, զղև սպանեց:

Թագաւորի ակնիկն իջաւ քօշկ ու սարից, էկաւ զթև բռնեց. էլան իրար հետ գացին քօշկ ու սարէն: Հաց բերեցին, կերան, պրծան.— Թագաւորի ակնիկ, ըսեց, իմ տեղ ո՞րն ա, ես էլնիմ քնիմ: Էնա տեղ քու ակապօր տեղն ա, իդա տեղ լէ իմն ու քուսնն ա: Թագաւորի ակնիկ վերցուց թէ՛— Բու խոչաղուտեն լէ տեսայ, ք'ակապօր լէ:

Ըսեց.— Ջանմ, մըր վարք կայ, օր քանի՛մ պղտի ակապէր սաղ ա, մեծ կուռ չ'էնա, օր ես սպանուէր, տեսնէր իմ ակապօր խոչաղուտեն:

Քնան, լուսուն էլան. էլան, Ջան-Փոլադն էլաւ, օր ուր ձին քաշէր հեծնէր, էրթէր: Մէկէլ ակապէր լէ ձին քաշեց դուս:

Ջան-Փոլադ կուռաւ թէ՛— Յո՞րի կիգաս, ընդոնք փարի ին, սիրտ կպատուի, դու մանցի էդոր կուշտ:

Ախիկն էկաւ, ձեռ թալեց Ջան-Փոլադի ձեռ բռնեց, ըսեց.— Դու կ'երթաս, իմ սիրտ կպատուի, բու նշանաբան տա՞ս ընձի: Ձեռ տարաւ ծոց, թաս հանեց տըւեց ակնիկան, ըսեց.— Իդա թաս կիտամ քըղի, կ'տեսնա՞ս իմալ իստակ ա, թասն օր կ'ժանգուտի, իմ ակապէր ճամբիս, գայ իմ հաւարին, ես նեղուտենի մէջ իմ: Էլաւ խանչեց ուր Աստուած, ընկաւ ճամբախ, գնաց. գնաց դէմ առաւ մէկ սև քօշկ ու սարի: Դուռ զարկեց, կտրեց, մտաւ ներս. մտաւ ներս, ըդոր բախէն տասն զաթ բընց ընդոնք բախէք աղէկ էր. ձին թորկեց մըչ էդ բախին:

Ախիկ գլու կախ էրեց փանջարից, քառսուն ծամ ունէր, քառսուն լէ օսկի էր, վերուց թէ՛— Թագաւորի տղայ, էլի գնա, սև դե կիգայ բու ջոջ փերթ անկաջ կ'թողայ:

Ըսեց. — Օսկի-ծամ, կտոր մի հաց ճամբա՝ գայ, ես ուտիմ, էլնիմ էրթամ:

Հաց ճամբեց, էկաւ, կերաւ. կերաւ, խապուտ քաշեց վեր գլխուն պառկաւ վեր հաւուզին:

Անչիկ վերուց թէ՛— Ջան-Փոլադ, էլի գնա, միայ սև դև կիգայ: Քնաւ. մնաց քնուկ, չ'էլաւ:

Իրիկուան դևն էկաւ, շատ հերսոտաւ վեր թագաւորի ախ- չըկան, ըսեց. — Յո՞րի էդ մարգուն հաց չ'տըւեցիր, դնէր ճամ- բու էրթէր:

Ըսեց. — Հաց տըւեցի, չգնաց:

Ըսեց. — Հողածին, էլի ես դու կոռւիներ:

Արուըտան չուրի արև մտաւ, մէկ մէկու չ'կեարցան ախտէն:

Դևն ըսեց. — Դարձի էրթանք, գիշերս ի իմ խոնաղն իս:

Էկան, հաց կերան, պառկան. հաց կերան, պառկան, էլան լուսուն կոռւան, կոռւան յար իրիկուն, մէկ մէկու չախտեց:

Ըսեց. — Իմ խոնաղն իս, արի էրթանք:

Ընդոնք օր հաշտըւան, Օսկի-ծամ գիր գրեց թալեց թէ՛— Ջան- Փոլադ, ըդոր իրեք գլու ա, օրթըլիսն օր կտրեցիր, էլ չ'սաղ- նայ, մէկէլ գլխներ օր կտրին, կսաղնայ. չէղնի օր օրթըլի գլու օր կտրեցիր, էրկու դըրք զարկիս, մէկ դըրք զարկ:

Էլան. զարկեց, օրթըլի գլու կտրեց:

Դևն ըսեց. — Հողածին, մէկ լէ զարկ, մէկ լէ զարկ:

Ըսեց. — Չէ՛, ես իմ մամուց մէկ հաղ իմ ծնի:

Օսկի-ծամն էկաւ, բռնեց Ջան-Փոլադի ձեռն ու գնաց:

Ըդոց սահմանքն ինչ էր— Ջան-Փոլադ կ'երթէր ավըղուչ, Օս- կի-ծամ կ'մէր քոչկ ու սարէն. իրկուն օր էղնէր, Օսկի-ծամ կ'եր- թէր Ջան-Փոլադի առէչ:

Մէկ ամիս ժամանակ քաշեց. Օսկի-ծամ վերուց թէ՛— Ջան- Փոլադ, ըսօր մ'էրթայ ավըղուչ, մեր շորեր կըղտոտեր ա, էր- թանք ծովափ, լուանք:

Էլան գացին ծովափ, կրակ վառեցին, ուրանց շորեր լուանէն. Օսկի-ծամ գլու քանդեց, ուր գլու լուանէր, մէկ մաղ ըդոր ծա- մերուց պրծաւ. Ջան-Փոլադ զէդ մաղ վերուց, էրեց հալըայ, բըն-

նեց ձեռ. բամին զարկեց, ձեռնէն թուաւ, ընկաւ վեր ծովուն: Ջան-Փոլադն էրեց օր զինք թալէր ջուր, բռնէր, Օսկի-ծամն ը- սեց. — Տնաւեր, քառսուն ծամ ունիմ էդ մաղից ա, դու յո՞րի կ'թալիս բըզի ծով:

Քամին զարկեց, դաղլան զէն մաղընցուց Ձինմաչինայ դէն, ծովու էն խրաղ. գնաց ընկաւ էդ մաղն թագաւորի հաւուզի մէջ, ինչ ըդոր ձին կբերէն ջրին:

Թագաւորի սէիսն առաւ ձին, բերեց վեր հաւուզին, ձին է- դոր շաւաղից չըր մօտենէ ջուր խմէր:

Սէիս վերուց ձին տփեց. թագաւորի տղէն տանիքն էր, տե- սաւ, օր ձիուն տփեց, ըսեց. — Սէիսն իգայ, գլուսն ի զարկիմ, հը- մալ էղնի, օր իմ ձիուն տփայ:

Սէիսն աչկեց, օր մըջ ջրուն կգեղնկտէր, ձեռ տարաւ, հա- նեց դուս: Ձին ջուր խմեց, առաւ գնաց:

Թագաւորի տղէն էկաւ առէչ. — Դու յո՞րի իմ ձիուն տը- փեցիր:

Ըսեց. — Իդա մըջ հաւուզին էր, ձին կխրդէր, չըր խմէ ջուր, ես խաբար չունէնք:

Թագաւորի տղէն առաւ, աչկեց, չգիցաւ թէ մաղ էր, թէ օս- կի էր, ըսեց. — Քըզի բախշեցի, էլ բա՛մ չըմ էնի:

Էլաւ, թագաւորի տղէն էդի առաւ, գնաց թագաւորի դիւան. տարաւ տըւեց թագաւորի ձեռ, թագաւոր տըւեց վոքիլ-վոքիլին, մէկ չճանչըցաւ թէ ի՞նչ էր:

Մէկ ջաղուքար պառաւ էկաւ թէ՛— Թագաւոր, էդի չը՞ս ճան- չընայ:

Ըսեց. — Չէ՛, պառաւ:

Ըսեց. — Ըդոր տիրոջ քառսուն ծամ լէ օսկի ա, Ջան-Փոլադի նշանածն ա:

Ըսեց. — Պառաւ, որն օր էրթայ էդի բերայ ընձի, անուն իմ էղնի, թագաւորուտն ընդոր:

Պառաւն էլաւ ծրծում թալեց վեր ծովուն, օձ բռնեց ձեռ,

ընցաւ ծովու Էն խրաղ. ընցաւ ծովու Էն խրաղ, ծրծում պահեց,
գնաց քօշկ ու սարէն:

Օսկի-ծամն աչկեց, օր պառաւն էկաւ, քաշեց փէտ զպա-
ռաւ ծեծեց, չ'թորկեց քօշկ ու սարի մէջ մնէր:

Պառաւ գինէր, օր Ջան-Փոլադ գացեր էր ավըղուշ, գնաց
վըր ճամբուն պառկաւ:

Ջան-Փոլադն էկաւ.—Ա՛յ պառաւ, ըսեց, յո՞րի իս պառկի
յուրայ:

Ըսեց.—Հիւանդ իմ, պառկեր իմ յուրայ. գացի իդա քօշկ
ու սարէն, չըմ գինսյ քու քուրն ա, քու կնիկն ա, ընձի ծեծեց
դուս էրեց:

—Դէ, ըսեց, պառաւ, արի իմ թարք:

Օսկի-ծամն էկաւ առէչ, ըսեց.—Ջան-Փոլադ, էդ պառաւ թող
ցած. էդի ջարդար ա:

Ըսեց.—Մեխք ա, հիւանդ ա:

Չ'էղաւ, կնիկ ինչ էրեց, չկեարցաւ վըր ուր իրկան:

Ըսեց.—Կնիկն շատ էրես տալ լաւ չէ:

Կնիկ վերուց ըսեց.—Էդ մէկ խօսք ընձի բօլ ա, դու գինաս:

Առաւ, էկաւ քօշկ ու սարէն, ձիուց իջաւ, պառաւ տարաւ
ձին տաւլեց, դարձաւ էկաւ էդոնց առէչ խուլուղ էրեց:

Մէկ տասն օր ընցաւ:

Ջան-Փոլադ գնաց ավըղուշ. էդի ընկաւ կնիկսյ լերդի տակ,
թէ քու իրիկ չ'սպանուի, հարցուս թէ քու իրկայ հոգին դոր ա:

Ըսեց.—Ես ի՞մալ հարցում:

Ըսեց.—Իրկուն օր կիգայ, հետ մը զըուցի:—Իրիկ էկաւ թէ

—Օսկի-ծամ, հըտ ընձի յո՞րի չըս զըուցի:

Ըսեց.—Ի՞նչ զըուցիմ, դու մըտ ընձի սաղ չիս:

Ըսեց.—Յո՞րի.

Ըսեց.—Էդ ը՞նչից ա, դու չըս սպանուի:

Ըսեց.—Դու չըս ուղի, օր ես չ'ըս սպանուիմ:

Ըսեց.—Կ'ուզիմ:

Ըսեց.—Իրկուն պառկինք, քնինք, ես իմ հոգու տեղ կ'ը-

սիմ:—Պառկան, քնան. ճրագն օր ընցուցին, պառաւն էկաւ, նստաւ
գլխու վերեւ: Ըսեց.—Ձեռդ ի բի հլայ:

Ձեռ տարաւ, ըսեց.—Իդա ա իմ հոգին, իդա զամալտին
յընթի տակ, էդիկ օր քաշեցին, ես կմեռնիմ:

Էդոնք քնան:

Պառաւ մէկ ձեռ թալեց օր քաշայ, վախեցաւ. մէկ լէ ձեռ
տարաւ իրեք հաղ ձեռ տարաւ, բերեց. ըսեց.—Ջանմ, ես էկիր
իմ Օսկի-ծամ տանիմ, ես չըմ էկի խուլուղ Էնի, ես սպանայ,
եա թողայ,—ըսեց ու ձեռ տարաւ, քաշեց զամալտին. զղամալ-
տին քաշեց ու գնաց ուր տեղ պառկաւ, քնաւ:

Լուսուն էլաւ Օսկի-ծամ տեղի միջէն, էլաւ գնաց դուս:

Պառաւ էլաւ գնաց—տեսնամ մեռեր ա, թէ կայ—աչքեց,
տեսաւ, օր մեռեր էր: Պառաւ դանակ տարաւ, թալեց մըչ ծովուն:

Օսկի-ծամն էկաւ թէ՛—Ջան-Փոլադ, Ջան-Փոլադ, յար ե՞ք
քնիս: Պառաւ քաշեց էն անթրոց, ինչ ուրին տիեր էր, քաշեց,
էկաւ թըխ Օսկի-ծամի ջան:

Ըսեց.—Պառաւ, դու քու Աստուած, ես փարի իմ, օր փէ-
տով ընձի զարկիր, կ'մեռնիմ:

—Դէ, ըսեց, էլի ընկի իմ առէչ:

—Պառաւ, ըսեց, քու Աստու սիրուն, կայնի էրկու զալամ
կայ զարկիմ, ու կ'երթանք:

Գրեց թէ՛—Ջան-Փոլադ, ես քըզի չ'ըսի՞ թէ պառուուց մըզի
մնաս կիգայ:

Թուխթ գրեց, դրեց մըչ Ջան-Փոլադի սօլին ու գնաց:

Պառաւ հեծըցուց ծրծում, ընցուց ծովն, առաւ, գնաց էն
դէն՝ Ձինումաչին:

Թագաւոր բերեց, շատ վերդի տըւեց պառուուն:

Ախչիկ կայնաւ թէ՛—Թագաւոր, մէկ քառսուն օր ընձի վաղ-
դայ տուր, բաւսուն օրով ետ կաննիմ քու տղին:

Էդոր քուրըւտիք էլան լուսուն, աչկեցին տեսան մէկի թասն
ա ժանգոտի, մէկին լէ դաստըմալ տղկուի, ըսեց.—Գացէք, ձեր
ախպէր նեղուտենի մէջ ա:

Էլան, էրկուս իրար հետ էկան. էկան, աչկին, տեսան, օր Զան-Փոլադ մեռուկ ա. ձեռ տըլին օր զամալտին տարած ա:

Ըսեց.— Գու աստղաբաշխ իս, իմցի տես զամալտին գոր աս տարած:

Աչկեց, ըսեց.— Թալած ա ծով:

Էլան, գացին ծովափ: Էն մեկէլ ըսեց.— Ա՛խպէր, բու փեշէն լէ էն ա, օր մտնիս ծովէն հանիս:

Տղէն մտաւ ծով, ժուռ էկաւ, չ՛կերացաւ գտաւ, ըսեց.— Ձկայ:

Ըսեց.— Զանմ, ըբա գոր ա, օր չ՛կայ, ես գինամ օր մըջ ծովուն ա:

Ըսեց.— Մէկ սե բա՛ մի կայ էնդեղ, ընդոր բոլոր չըմ իշխըցեր ի, գացեր ի:

Ըսեց.— Իդա մէկ փարչ ձէթ տար դարտըկա մըջ ծովուն, կ՛էղնի ջրի երես, էն ջանաւար կփախնի ընդրնէ:

Ձէթն օր թողեց, ջանաւար փախաւ, աչկեց, տեսաւ. օր զամալտին հոն էր:

Առան զամալտին, էկան. բերեցին, զարկեցին ուր տեղ, յընթէ տակ:

Զան-Փոլադ իմցաւ, ըսեց.— Ինչխըդր ի՛մ քնի՛:

Ըսեց.— Գու տուն աւիրի, դու մեռուկ էր, խօ գու քնուկ չէր:

Աչկեց, տեսաւ, օր մըջ սօլին թուխթ կէր. գրուկ էր մէջ թէ՛ — Զան-Փոլադ, չ՛ըսի՞ քըզի, թէ պառուց մըզի ետդայ կիգայ ընծի տարան, գացին Չինմաչին:

Ախպրտանց իղին տըլեց թէ՛ — Գացէք նշանածներու կուշտ:

Ընդունք գացին, ինք էլաւ շխտկըւաւ, օր էրթայ թըն Չինմաղին: Քառսուն օր թըմաւ, գնաց հասաւ. գնաց մըջ էդ քաղքին, տեսաւ օր դհոլ կ՛զարկէն, խաղ ա, խնդում ա: Զան-Փոլադ գնաց մէկ պառուռ էլաւ խոնաղ.— Նանէ, ըսեց, էդ ի՛նչ գհոլ ա կզարկին:

Ըսեց.— Զան-Փոլադի նշանածի հարսնիքն ա կ՛էնին:

— Նանէ, ըսեց, օր Զան-Փոլադն իդա տեղն էղնի, կեարնա՞ս իլաջ էնիս:

Ըսեց.— Լաօ, իլաջ չ՛կայ, էլի գնա մայդընի մէջ, իմ տղէն գլխաւոր ա, Զամուշ-Օղլի¹⁾ կ՛ըսին, գնա քղե բանի կղնայ, չէրթաս, հըմայ բանդ էղնիս, մնաս: Էնի կհերստայ, մէկ սիլայ կը ղարկայ, թէ գլոնդ ի գնաց, աշխրքից կպրծնիս, թէ գլոնդ ի չը պրծաւ, էնի ինդ կ՛էնայ, կիգայ իմ կուշտ, ես մէկ բա՛մ կ՛ըսիմ:

Զան-Փոլադ գնաց մայդընի մէջ կայնաւ.— Զան-Փոլադին ըսեց թէ՛

— Տղայ, գնա՛ ցախ բիր:

Էնի անկաջ չ՛երից:

Գնաց մէկ էլ պտտեց.— Տղայ, չէ՞ ես քըզի ըսի՛ գնա ցախ բիր:

Էլման անկաջ չ՛երեց,

Մէկէլ դօնուշն էկաւ տեսաւ — օր չգացեր էր, սիլայ մի զարկեց, ինչ օր քարին զարկայ:

Ինդ էրեց, փէտ թալեց ու գնաց մօր կուշտ. գնաց նիաթն էրեց, նստաւ. ըսեց.— Տղայ, յո՞րի իս քու նիաթ էրի:

Ըսեց.— Մայդընի մէջ մէկ տղայ կէր հոնի կայնուկ, իրեք հաղ ըսեցի, իմ եօսք չէրեց, սիլայ մի զարկի, ինչ օր քարին զարկի:

— Տօ լա՛օ, քու ձեռն ի՛մալ բոնեց, օր դու ընդոր զարկիր, էդի բու ախպէրն ա, ըսեց. ետջարի տարին կուռ ա էղի, ղէդի բոնած տարած հէսիր, էդի՛ Զան-Փոլադն ա:

Էլաւ, վաղաւ թըն ախպէր, գնաց ինք թալեց ուր ախպօր օտայ.— Զան-Փոլադ, ըսեց, ես չգիցայ, իմ ձեռ կոտրէր, ես քըզի չգարկէնք:

Զան-Փոլադն ըսեց.— Բան չկայ, ախպէր:

Էրկուս իրար հետ էկան պառուռ կուշտ, էկան պառուռ կուշտ, պառաւ ըսեց՝ էլէք մէկ թաղ բոնէք ձեռ ձի, աւիրէք:

1) Գոմշի որդի:

Էլան առան մէկ թաղ աւիրեցին. ձէն գնաց թագաւորին թէ—Ջան-Փողազն էկեր ա, Ջամուշ-Օղլին ընդոր ախպէրն ա, զբաղաբ ընցուցին:

Թագաւոր ըսեց.—Էրկու թաղ լէ ընցուն, Օսկի-ծամ չիմ իտայ:

Ըսեց.—Մէկ օլուշաղի աբով դու մէկ քաղաբ պտի ընցու: Բերին Օսկի-ծամ տըւին Ջան-Փողազին: Ջան-Փողազն առաւ, էկաւ պառու տուն:

Ջամուշ-օղլին ու Ջան-Փողազ հարցուցին թէ—Ջադուբար պառու տուն ո՞ր մէկն ա:

Տըւին շանց:

Խանչին պառաւ հանին դուրս, ձեռ թալեց էրկու ծառ բերեց կպուց իրար, բերեց մէկ օտ կապեց մէկ ծառ, մէկ էլ օտ մէկ ծառ, թողեց,—պառաւ էլաւ էրկու կտոր:

Էլան, չորսով ընկան ճամբախ, էկան:

Թագաւորն ասկար էրեց, յետեանց ճամբեց վըր էդոնց:

Գարձաւ Ջամուշ-Օղլին ըսեց.—Նանէ, նանէ, դարձի էտոնց մէկ բա՛մ ըսէ, թըղ դառնան:

Պառաւ դարձաւ, ծառ մի փիցուց, լարեց էդոնց յեդե, տարաւ լցեց մէջ բաղքին, ուրանք էկան Ջան-Փողազի բօշկ ու սարէն:

Մէկ ժամանակ մանցին հոնի. իրկուն էղնէր Ջամուշ-Օղլին պդի գէր Ջան-Փողազի օտներ մաժէր, յարի բնէր:

Օսկի-ծամ վերուց.—Ջան-Փողազ, ըսեց, յար ե՞ր Ջամուշ-Օղլին մնայ առանց կարգել Ֆլան թագաւորին մէկ ախչիկ կայ, գնա բիր Ջամուշ Օղլուն:

Էլաւ Ջան-Փողազն զթագաւորի ախչիկն ուղեց, բերեց Ջամուշ-Օղլուն:

Ժամանակ մի մըտ իրար մանցին. Ջան-Փողազի միտք ընկաւ հօր տուն, միտք էրից, օր էրթայ հօր տուն:—Նանէ, ըսեց, ընձի ուսղաթ տուր, ես էրթամ:

Վերուց թէ—Լա՛օ, քու ախպօր սիրտ կպատուի, օր սհաթ մի

քըղի չտեսնի. մնա՛ իրկուն, ձըղի մէկ բա՛ մի կ'ըսիմ:

Մնաց իրկուն.—Ըբա Ջան-Փողազ, բեանի ես սաղ իմ, էկէք բաժուէք, էրկու գմշու գլոխ մէկ պտուկ չի մտնի, ես օր մեռայ, էրկու ախպէր կ'կըուըտիք. մէկզմէկ կ'սպանիք:

Բերեց էրկու ախպէր բաժնեց իրարուց. օթախի մէկ տըւեց մէկ տղին, մէկ լէ մէկ տղին. հուցկայ էդե Ջամուշ-Օղլին էլ չըր էրթայ օտներ մաժէր:

Էլաւ, գնաց մօր թէ—Նանէ, ես կ'երթամ:

Էլաւ, վերցուց Օսկի-ծամ, էն բօշկ ու սարէն բիրադի թողեց Ջամուշ-Օղլուն, էկաւ մէկէլ քուրոջ կուշտ. էկան էն տեղն օր իրեքն էղած էն ախպէր, ուրանց չադր զարկին, իջան, հաց կերան, պրճան, էլան իրարուց հալալամիշ էղան, ամէկ գացին ուր հօր բաղաբ:

Ջան-Փողազն էկաւ հօր քաղքին մօտկըցաւ. ճանդ ըմ օսկի տըւեց նախընուն, ըսեց.—Գնա իմ հօր անկըջկայ տար թէ՛ քու տղէն առած զՕսկի-ծամն՝ էկաւ:

Թագաւոր ասկրով էկաւ տղի առէշ, վերցուց տարաւ տուն. եօթ օր, եօթ գիշեր հարսնիք էրեց:

Էն հասաւ ուր մրաղին, դուք լէ հասնիք ձըր մրաղին:



Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

(Արարանի բարբառով)

Աբով—ստաճանով	Ահուայ—ատամ
Աբրջան—ապարանջան	—ակուէքս ի կեռայ—շատ ակոր-
Ագուատ—նախաճաշ	ժակ ունիմ
Ադէ—մայրիկ	Ահօս—գուժանի հետքը, փորածը:
Ազա էնել—ազատել	Ահ, տես ախ:
Ազաբ—ամուրի երիտասարդ	—ահիկն ա տարեր մահիկ—երբ
Ազիզ—սիրելի, դուրեկան	մէկը երկիւղեց է մի գործ կա-
Աթոռք—աթոռ, գահ	տարում, այդպէս են ասում:
Աթար—վառելիք կենդանիների	Աղա—պարոն, ազնուական
կղկղանքից, ձեռքով թխածը:	Աղանձ—բոված ցորեն
Ալաչըղ—վրան, հասարակ տե-	—կարգալ կայ քարէ աղանձ ա—
սակը՝ թաղիքից:	կարգալը շատ դժուար է:
Ախ—երկիւղ	Ամա—բայց
Ախտել—յաղթել	Ամէկ—իւրաքանչիւր ոք
Ախտ ու շարթ էնել—պայման	Ամիրայ—ազնուական, աղա
կապել	Ամրոց—աթարի դէզ, աթարնե-
Ակ—աղբիւրի ակ	րը շարում են միմեանց վերայ
—թոնրի ակ—այն անցքը գետ-	կոնաձէ:
նի տակից, որտեղից քամու	Անագան—ուշ, յետոյ, մութ
հոսանք է յառաջանում:	Անգընալ—ուշանալ
—սէլի ակ—սայլի անիւ	Ան ու էրեխէն—մեծ ու փոքր,
Ակիշ—գործիք է, բարակ, եր-	տնով տեղով:
կար, ծայրը կեռ երկաթ, ո-	Անթրոց—թոնիրը խառնելու փայ-
րով թոնրում թխած հացը հա-	տը
նում են:	Անկըջկայ բերել—աչքալոյս տալ,

աւետել տակամածը:
 Անկարին—անկարելի Արճըկան—թել մանելու գործիք, կանայք կանգնած մանուկներն (իլիկ):
 Անուշ մնալ—ողջ-առողջ մնալ Արև ծաղկաւ—արևը դուրս եկաւ, արևը ծագեց
 —ես անուշ մնամ բըզի համար—ես ողջ լինիմ քեզ համար
 Անջախ—հազիւ Արևպատոց—արևը մայր մտնելու ժամանակը
 Աչկել—նայել Աւալ—առաջ, ի հնումն
 Աչքալուսէնք—աւետիս Քարա—հայր, ծերունիների պատուանուն
 —աչքդ ի լուս էղնի—աչքդ լոյս տուանուն
 Առէչ—առաջ, յառաջ Յարան—պարիսպ, պատ
 Առան իրար—կռուեցան, յարձակուեցան իրար վերայ: Բազայ—բազէ
 Առնել կայնել—յամանել Բաժ—բրդերէն՝ հասակ
 Առաւ ճամբախ—ճանապարհընկաւ Բաժակ—գինի
 Առաւ ձեռ—սկսեց Բաժուել—բաժանուել
 Ասրար—ղէնք Բալքի—գուցէ
 Ասկար—զօրք Բախշել—ընծայել, ներել
 Աստըծու մէկիկ բարով—Աստուծոյ Բանակի—ջուրձ կապելու գործիք
 —ած տար մի (ձեռս ընկնէր...) Ե, գործդ վատ է
 Ավրխուշ—որս, որսորդութիւն —բանդ ի բուրդ ա—բանդ բուրդ
 Արզ—ամօթ, պատիւ է, գործդ վատ է
 Արծալ—արածեցնել Բանդ էղնել—կանգնել
 Արունք էնել—կոտորել, կոտորած անել Բաշլայել—սկսել
 Արունխում—արիւնբարբու Բարայ—հաւասար, չափ
 Արեղ, աղներ—սայլի կողքէ Բարինար—տես բարայ
 ըի այն երկու փայտը, որոնց Բարիշել—հաշտուել
 վերայ հաստատուած է տախրեռ Բարխանայ—բարկ ու բուրկ, բեռ

Բարկ—տաք, ջերմ Բօլ—բաւական
 Բարկնալ—բարակել, նուազել Բօյ—հասակ
 Բարժքըկ—մղան, այն գործիքը, որով յարգը հաւաքում են Պախ—ժամանակ, միջոց
 յարդանոցն ածելու համար: Գամ—սանձ, երաստանակ
 Բէհլին—ի զուր, դատարկ Գաշել—փնդուել, որոնել
 —բերնի գոլն իմնալ—միտքն ի Դեանդի ըսողանի տղէք—վամանալ, կարծիքն իմանալ՝ խօսք յեւհասակ, կտրիճ տղայք
 քաշելով Գեստ—զգեստ, հագուստ
 Բէքախտ—անբաղդ Գինին բունեց—գինովցաւ
 Բէքախտուտեն — անբաղդու Գլուխ ի յոնի տղկիս, յուրայ
 թիւն կնդիս—շուտով դաս, հասնես.
 Բեհին(°)—իրաւունք Գոլ—գորտիկ
 Բեր գալ—ոչխար կթելու գալ Դոլ—լիճ
 Բըբուկ—փետուր Գողտուկ—գաղտնի
 Բիրաղի—բոլորը, ամենը Դորա—չափ, համեմատ
 Բլազուկ—ապարանջան —ի ձեր կարողութենի գորայ—
 Բլել—փլել ձեր կարողութեան չափ
 Բնագայ—գութանի հաստ շղթայ Գործըրար—կտաւագործ
 Բնակ—տան երդիկի վերայ ձը Գութնհերկ—գութանի հերկած
 գուած փայտը տարածութիւնը
 Բուղալայ—մէն-մենակ, չոր գըլ Դուլաշէի—ըմբշամարտ
 լուխ: Գուռ—քարի աւազան, շինում են
 Բուխերիկ—օջախ, հնոց պատի աղբիւրների մտ անասուններին
 մէջ ջրելու համար:
 Բուծալու—սիրեկան, սիրուհի Դուրգ—լախտ
 Բումբարաք—շնորհաւոր Դուրգ էնել—խարդախ, ամարդի
 գործած սալայ վարուել
 —բուրդդ ի բարերար հանեցին Դագմիշ մ'էղնի—ձեռ մի տալ
 Բրդել—փրթել, կտրատել մի կպչել
 Բրդուջ—կտոր, պատառ Դաղլայ—ալիք

Դան—ժամ, միջոց
 Դանէց դան—օր ու գիշերուայ —եա գլխուցդ ի անցնիս եա... —
 մէջ նշանակած ժամից մինչև կամ գլխիցդ պէտք է ձեռք
 մի որոշ ժամ վերցնես, կամ...
 Դաստանաղ—այն գործիքն է, Եալվար ընկնել—աղաչել խընդ-
 որի վերայ կտաւագործը հաս- րել
 տատում է թելի կաժերը հի- Եալլուղ—տես դաստըմալ
 նած անելու համար: Եաւաշ — սպասիր, կանգնիր,
 Դաստմալ—թաշկինակ հանգիստ
 Դար—բլուր Եբ—երբ
 Դարբաղ—տես դարբաս Եդե—յետոյ
 Դարգան—դուռ, դարբաս —եդե անցըման —մեռնելուց
 Դարգաւանչի—դռնապան յետոյ
 Դէն—կողմ, դէ՛հ Եսիր—գերի
 Դըռ—դեռ ևս
 Դըրը—հարուած Զաղըանալ—ղղուել
 Դիզգին—սանձի բռնելու մասը Զաղայ—այր, քայր
 Դիւան—դատարան, պալատ Զամբիլ—խոտից գործուած մի
 Դ՛հայ—աւելի, առաւել կիսագնդի նման կարասիք է,
 Դհոլ—թմբուկ որ աթոռի տեղ են գործ ա-
 Դոնուշ—անգամ ծում Աբարանում
 Դոշ—կուրծք Զանգու—ասպանդակ
 Դոր—հերթ, կարգ Զարգանդ—սարսափ
 Դորչի—հերթապահ Զարզանդ կոխել—սարսափել,
 Դո՞ր—ո՞ւր, ո՞րտեղ վախենալ
 Դուման—մառախուղ Զալթել—նուաձել, գրաւել,
 Դունեայ—աշխարհ, երկիր յափշտակել
 Դունեայրգ—աշխարհային Զարբ—ցեղ, զարմ, տոհմ
 Դուրան—դաշտ, հարթավայր Զրվոնել—պտըտել պտոյտ գալ
 Դուէ—ուղտ Զիլ—բարձր
 —դեէն գդղով կ'ըտուէ՞ Զլմայ քար—չարագործ, չար
 գործ

Զօրքուտեն—զօրութիւն, կա- Ընկնաւոր—ուշագնաց, ուշաթա-
 րողութիւն փուռղ
 Զօրնդեղ—ուժով, զօրեղ —ընկնել լերդի տակ—դրդել
 (չար դիտաւորութեամբ) —ըռկել—բարկանալ, խռովել
 Էդ, էդի, էդիկ—այդ, դա —ըռնու էնէլ—թախանձել, ա-
 Էդխըղը—այդքան ղերսել
 Էդմալ—այդպէս, այդքան
 Էթըմ—օրբ
 Էլ, էլիաթ—ժողովուրդ Թազայ—նոր
 Էլման—դարձեալ կրկին —թազայ նուրար քու տղի
 Էղեկեցի—եկեղեցի արև:
 Էն—այն Թաժայ—նոր
 Էնել—անել Թալափ էնէլ—ոչնչացնել
 —էնոնցմէ արուն կ'երթայ, մըղ- Թախտ—աթոռ, թագաւորական
 մէ ջո՞ւր—մենք պակաս ենք, գահ
 մենք չենք կարող Թախտըպել—թափ տալ
 Էնմալ—այնքան, այնպէս Թամամ—լրիւ, կատարեալ
 Էր—բարայր, այր Թամանդայ էղնել—ձեռքերը
 Էրեսուան իրար—դէմ ու դէմ կրծքին դնել ի նշան խոնար-
 դուրս եկան հուժեան
 Էրթալ իրես—տեսութեան գնալ Թամբի էնել—պատուիրել
 — էրթալն իմ ձեռ, գալն Աս- —թան անիչել կ'իմայ—հեգնու-
 տըծու: թիւն է (շատ երևելի գործ է):
 Ըբա—ապա Թառ — սայլի տախտակամածը,
 Ըննալ—լցնել —թառն ի թագաւորին— գահն
 Ըհա—ահա է թագաւորին, բացականչու-
 Ըղորդ—ճշմարիտ թիւն փեսայի համար հարսա-
 Ըղունգ—եղունգ նիքի ժամանակ:
 Ըմա—բայց Թարգ էնել—վերջ տալ, վեր-
 Ըմեն—ամեն, իւրաքանչիւր, ա- ղացնել
 մենը, բոլորը Թարզոունեայ էնել—աւերել,

ոչնչացնել Իդա—այս
 Թարք—գաւաղ Իդախրդըր—այսբան
 —Թաց ու չոր չհարցու—խըա- Իզին—խրաւուներ, Թոյլտուութիւն
 րութեան չի դնում Իլաջ—ճար, հնարք
 Թաւիհիկ զարկել—աքացել Իմալ—ինչպէս
 Թերի—սայլի այն տախտակը, Իմդաղ—օգնութիւն
 որ հաստատում են վերջին Ինա—այն
 ճաղերի վերայ բեռը չթա- Ինաղ—Թշնամութիւն
 փելու համար Ինաղ Էնել—Թշնամանալ, խոռ-
 Թըլ—Թող վել
 Թըխ—Թող Ինաղ ընկնել—Թշնամանալ
 Թըխ—դէպի Ինչխրդըր—որբան
 Թիմլիել—ձին մաքրել գործի- Ինսան—մարդ
 բով Իշինալ—համարձակուել
 Թմել—լրացնել Իշկել—նայել
 Թոթուել—հրել Իսկի—ամենեւին
 Թորկել—Թողնել, Թոյլ տալ Իստակ—մաքուր
 Թորնդազ—վայելչակալմ Իստրկել—մաքրել
 Թոփալ—կաղ Իրար գալ—շարժուել
 Թունդիր—Թոնիր, գիւղական Իրար ընցնել—խառնուել
 հնոց, որի մէջ հաց են թխում Իցկել—ձգել
 Թրբել—բանդել Իցցուն—յիսուն
 Թւել—ուսի, Թւի վրայ դնել
 Էազդան—կէմ ոլորելու գործիք
 Էաժ գալ—շարժուել Էամդան—ոլորած կէմ, որ կա-
 Ժողվրտել—ժողովել պում են մեծ քթոցին հեշտու-
 Ժուկ—ժամանակ Թեամբ շալկելու համար
 Ժուռ—խակ, չ'հասած Էայրդ—վայել, արժանի
 Ժուռ գալ—ման գալ, պտրտել Էարան—բարակ պարան չուալի
 բերանը կապելու, սմբետան:
 Իբրդուղ—պղնձէ աման ձեռքին Էարել յեղև—ետևից ընկնել,
 ջուր ածելու համար ետևից վաղել

Էաօ—տղայ Խապուտ—վերնաղգեստ, որ այժմ
 Էեռ (.բար)—ժայռ աղնուական քրդերն են միայն
 Էողինալ—լողանալ հագնում:
 Էորիս—այն փոկը, որով սայլը Խառ—արագ
 լծից կապում են: Խաս—աղնիւ, նուրբ
 —լորնել—կապել փոկով Խալազ—գգեր, (չափար)
 Էուսուն—առաւօտը, վաղը Խարաբայ—աւերակ
 Խարաւաշ—աղախին
 Խարզան—խարազան, երկար և
 Խաղայ—փորձանք, պատուհաս, հաստ մտրակ գոմէշներին քշե-
 վտանգ լու համար:
 Խաղալու—վտանգաւոր —խարզան դրեց վըր կաման—
 Խազինայ—գանձ գործը Թողնել, պաշտօնից խոռ-
 Խազմալթընար—ծառայ ված հրաժարուել
 Խալալթ—ընծայ Խարջ—հարկ, տուրք
 Խալխան—վահան —Խարջ ու խարաջ—տուրք
 Խալմախալ—աղմուկ Խարջկաթ—երկաթէ ձող, որ
 Խախնդել, խախնդաւ—հանդար- հնում են Թոնրի վերայ կաթ-
 տել սաներ տեղաւորելու համար:
 Խածել—կծել Խբել—զարգարել
 Խամ—անփորձ Խեր—բարի
 Խամիշ—եղէգն Խեր ու խերիաթ Էնել—ողոր-
 Խայս—ժայռ, քերծ մութիւն տալ, բարերարութիւն
 Խան—իջևան, քարվանսարայ անել
 Խանգրած—աւերակ Խերիաթխանայ—աղքատանոց,
 Խանդակ—փոս, այն հաստատութիւնը, որտեղ
 Խանչի—պանդոկապետ օտարները հիւրասիրում են:
 Խանչել—կծնչել Խրա—հետ
 Խաչբուռ—հնձուորները հունձը Խիմիշել—ափսոսալ
 վերջացնելուց յետոյ խաչաձև Խիտր—լիտր
 գործում են պատից կախելու Խլրզ—ձև, տարազ
 համար: Խոնաղ—հիւր

Խոշուկ — զօրք ձիւնն են հաւաքում:
 Խոշուկն էնել — զօրք հաւաքել Կատարելի — կատարեալ, հա-
 Խոշաղ — քաջ, արի սուն, հասկացող
 Խոշաղորտեն — քաջութիւն, ա- Կարգել — ամուսնացնել
 րութիւն Կեակօ — հօրեղբայր
 Խոտկար — դէպից խոտ քաղելու Կեր ու խում էնել — ուտել,
 կեռ գործիք խմել
 Խորթ — անհարազատ Կղել — կռանալ, խոնարհուել
 Խորուրդ — խորհուրդ Կէմ — խոտից շինած պարան, ու-
 Խորոտ — գեղեցիկ րով կապում են ցորենի խուրձը:
 — շատ տեսակի խորոտ էր — — կէր ժամանակ, որ մածուն
 շատ գեղեցիկ էր անփչել կուտէնք — հեղու-
 Խուլատ — դժ, զօրութիւն թիւն, տես՝ թան անփչել կիմայ:
 Խուլ — ծառայ Կըղտոտել — կեղտոտել
 Խուլուղ էնել — ծառայել Կըսայ — պատմութիւն, զօրոյց
 Խուր — հիւր Կըսայ էնել — պատմել
 — Խուրջին — հագբայ Կթոց — կովկիթ, աման, որի մէջ
 Խարաղ — մատակ, էգ ձի կով են կթում
 Խրաղ — կողմ, ափ Կնդել — սափրել, ածիլել
 Խրդել — երտնել Կնկնակ — կնոջ նման, կանացի
 ձևով
 Ժառ կանանչ ա — սերունդը Կող — փայտէ չափ է, որ (Աբա-
 շարունակում է: րանում) քսանչորս գով ցո-
 Ծուխը կտրել — ցեղը ջնջել, րեն է տանում:
 ոչնչացնել Կողիկ — փոքր գաւաթ հողից
 Ծուռ — գիժ, յիմար Կոպալ — հովուի փայտ՝ ծայրը
 գունդ: գունդ:
 Կամ — այն գործիքն է, որով Կոտոշ — եղջիւր
 կախում են կալը: Կորի — արտի մէջ արօրով բաց
 Կանամբ — կանեփ արած առուն. կորի է նոյնպէս
 Կապուած կուտեն — պայման այդպիսի երկու առունների մէջ
 Կառափ — գործիք փայտից, որով եղած տարածութիւնը:

Կուլբայ — թաղիքից պատրաս- Ղաթար — շաքի, կարաւան
 տած հովուի վերարկու: Ղալամ — գրիչ
 Կուշտ — կողք, կող, մօտ Ղամալթի — եանջարի տակը
 — կշտի հետ — կողքին, մօտը խրած փոքրիկ դանակը
 Կչկչալ Կաւի ձայնը Ղոլթուղ — կոնատակ, թւի տա-
 Կռկռալ կը Ղոլթի — սնդուկ
 Կսկուծ — կսկիծ Ղուլթի — սնդուկ
 — կսկուծ տըւեց սիրտ — ցաւը — կսկուծ տըւեց սիրտ — ցաւը
 սիրտն ընկնել, վշտաբեկ լինել Ծամբաթին — ճանապարհի այն
 Կսկուծուորել — վշտահար լինել, տեղը, որտեղ նոր ճանապարհ-
 թախծել ներ են բաժանում:
 Կտրել — կտտորել, սպանել, վեր- Ճամբան — ճանապարհ
 ջացնել Ճամբախ բունց — ճանապարհը
 — Կրակ թափաւ թունդիր — շատ բունց, գնաց
 հարկաւոր է, փոյթ չէ (հեգ- Ճամբուց իցկել — պահել, ճանա-
 նութիւն). պարհից ձգել
 Կրդընակ — այն գործիքը, որով Ճամբեն պահել — սպասել
 լաւաշի գունդը բաց են անում, Ճամբախ տըւեց յառէչ — գնաց
 տափակացնում են: Ճամբարակ — շղթայ է գուլթանի
 վերայ, որ խարզանն ու գու-
 թանը իրար է կապում:
 Զեռնէ էկած — կարողութեան Ճանգ — բուռ, կուց
 չափ — ճանձ գլխուցդ ի վերեւով կ'ըն-
 Զէն — ձայն ցընի*):
 Զիաթող — ձի վազեցնելը, ջրիդ Ճիժ — տղայ, երեխայ
 խաղալը — Ճխան — գուան կրունկի հաս-
 Զեիչ — գուլթանի այն երկաթը, տատուած տեղը
 որ ձևում, կտրում է հողը: Ճխտել — սեղմել, մտցնել
 Զաթ — անդամ Ճոթ — ծայր

*) Թէ և այս ոճի ճիշտ նշանակութիւնը չկարողացանք ի-
 մանալ, բայց աւելորդ չհամարեցինք նշանակել չկորցնելու համար:

Ճոկան—կեռ փայտ, որ հոգիւ- ու մօր, միամօր որդի
 ները գործ են ածում ոչխար —մէր ու քուր էղնել—սիրել
 բռնելու համար այնպէս, ինչպէս մօրն ու քրո-
 ճով—տես կէմ ջը:
 Ճրագ-վառոց, ճրագ-կպոց —ճրագ—քըղնով մէջք չըմ կապի—վըս-
 վառելու ժամանակ, երեկոյ տահանալ չի կարելի, քո օգ-
 նութիւնը ոչինչ է:
 Մաժել—տրորել, շիւել —մըչ համամին բորիկ ժուռ
 Մալ—ապրանք կիգայ—շատ երեւելի գործ է
 Մահուան ա—մեռնելու վրայ է կատարում (հեգն. արհամար-
 Մահրում—զուրկ հանք):
 Մահրում նստիս—զրկուիս ա- Մըր—մեր
 մեն բանից Միզար—գործնոց հաստ փալա-
 Մայրան—հրօսարակ սից
 Մանձ—արօրի այն մասը, որ Մկայ—այժմ
 երկրագործը բռնած հետեւում Մկեր—միթէ
 է արօրին: Մկուկ—կտաւագործների գործիք
 է թելով փաթաթած, որ հի-
 նածի միջով անց են կացնում
 Մանջկալ—մանջը բռնող, երկ- և գործում:
 րագործ
 Մաշուվարաթ—խորհուրդ
 Մարգանակ—մարդու նման Մշոշ—ջրով կերակուր
 Մարիֆաթ—չնորհք, ձիրք Մշուշ—մըժ, մառախուղ
 Մասնիք—մատանի Մոհլաթ—ժամանակ, միջոց
 Մարտալ—վահան Մուլք—կալուած
 —մասրայ—եղէգի կտորը, որի Մուխամաթ—խախուտ, խար-
 վերայ կտաւագործները թել դախ, անազնիւ
 են փաթաթում: Մուրազ, մլրազ—իղձ, փափագ
 Մզիլ—ասպարէզ (ձիու): Մտեհան էնել—մոռանալ
 Մզիլ բաշել—ասպարէզ բռնել
 Մզրախ—նիզակ Յար, յարի—մինչև
 Մէշայ—անտառ Յարօր—արօր
 Մէկ ու ճար—միակ զաւակը հօր Յըր—տես յար

Յէր—այր, քարայր Շաւաղ—փայլ, ցոլք
 Յողայ—գոմի այն մաքուր մա- Շէնք—քայլ
 սը, ուր մարդիկն են բնա- Շէնլըգ—բնակութիւն, բնակա-
 կուում: րան
 Յօրի—ի՞նչու Շիրիգ—ընկեր
 Յուդայ—այստեղ Շիրիգ—ձող կամ պարան, որի
 Յուշ—ուշք, միտք վերայ հագուստն են կախ տա-
 Բէյուշ—անմիտ, մոռացկոտ, ու- լիս:
 շաթափ Շիւար—խեղձ, աղքատ, անճար
 Յուշիկ—կամաց, հանդարտ Շիւարել—անճարանալ
 Յոստ—ուստի, ո՞րտեղից Շնոկկըլաւ—չնորհակալութիւն
 Յուցկայ—այստեղից յայտնեց
 Շոռ—աղի, աղաշատ
 Նախիր—ամբողջ գիւղի անա- Շրջել—անցնել միւս կողմը
 սունները միասին առած նա- —չրջուաւ դարով—բլոզն անց-
 խիր է կոչուում կացաւ
 Նախուրդ | Նախիր պահող
 Նախըն | Ոտ ու ձեռ տեսնել—պատրաս-
 Նափաս—շունչ տութիւն տեսնել, գործածա-
 Նէնիր—որս կան է մանաւանդ հագուստի
 Նիաթ կախել—բիթը կախել համար:
 Նորաթ—հերթ, կարգ, վիճակ Ո՞ր—ո՞վ
 Նուրար—առաջին պտուղ, երա- Որբէւերի—այրի, ամուսնից զեր-
 ւայրիք կուած
 Նշանաբան—նշան Ուլինգ—ուլունք
 Նշանգար—նշան Ուտարգել—հիւսել (մազերը)
 Նստուածք—բնակարան Ուր—իւր
 —ուրին հաց կերաւ—իւր հա-
 Ղալիել—շալակել, տանել մէջ- ցը կերաւ
 քի վերայ —ուրնցնով էնել—սեպհականել
 Շարիազայ—խելօք, իմաստուն Ուցկայ—այստեղից
 Շարրաթ—մի տեսակ խմիչք է:

Չաղը—վրան (արհամարհանք)
Չափալէխ—ապտակ Պլիկ—գեղին դրամ է, որ երե-
Չափուկ—կողով Խաների վերայ իբրև զարդ են
Չափըննել—չըջապատել, բողոքել գործ ածում:
Չաւուշ—գզեր Պլպլել—քանդել, աւերել
Չըմքի—որովհետև Պորպնկել—Թոնրի ակից փէշով
Չոլ—գաշտ հոսանք յառաջացնել վառելու
Չոք—ծունգ համար:
Չունքի—որովհետև Պուգ—կաթիլ
Չուր, չուրի—մինչև Պուլ—Թուփ
 —չուրի պլիկն էղնի փարայ, Պուլիկ—աման, պղիկ
 դու կէղնիս իմ բարայ— Պուուկ—չուրթ, շրթունք, ափ
Չքուիլ—խրուել Պտոտել—գրօսնել, պտըտել
 Պտուկ—երկու կանթէ հողէ ա-
 ման, որի մէջ կերակուր են
 պատրաստում Թոնրան վերայ:
Չան—մարդ, հոգի, մարմին
Չանաւար—գաղան
Չանդաք—գիակ, գէշ
Չաղաչ—ջրաղաց
Չառիայ—աղակին
Չինս—աղգ, ցեղ, տոհմ
Չլեր—անկողին
Չլիզ—բողոքովին
Չնէլ—երիտասարդ, պատանի
Չհոռ—տոպրակ, որ գարիով
 ձիու գլուխն են անց կացնում:
Չիլի հանելուց յետոյ այն Չոջ—մեծ
 մնացորդը, որ աղքատներն են
 հաւաքում:
Չիլիկեր—աղքատ, պլեճ ուտող Չուրի—կարմիր մահուդից վեր-

Նազգեստ պատարագը . . .
Ջուլ—ձիու մէջքին ձգելու շոր Սարայ—պալատ
Ջուլեակ—կտաւագործ, գործը- Սարք—կարգ, Թախում
 բար Սարքել—կարգաւորել, դասաւո-
Ջուղապ— տես ջուաք. րել
Ջունապ— Սարքել գինի—սկսել գինի խը-
Ջրինդ խաղալ—տես Թաթոզ. մել
Պաստ գալ—պատահել Սարքուլ—հոգուի Թաղիքէ
Ռըթըբ(°)—սարք ու կարգ, Թա- վերարկուի ծայրի վեղարա-
 Խում նման մասը, որ անձրևի ժա-
 մանակ գլուխն է անց կացնում:
Ռուզայ—պարէն, օրական ապ- Սարսն—բաժակ
 ըուստ Սեխ—փայտէ բիզ, ծայրը սուր
Ռուսլաթ—Թոյլտուութիւն, ի- փայտ:
 բաւունք արձակման Սէլ—սայլ
Սարր էնել—համբերել Սէլի Թամը
Սատրինջ—տամայի նման մի Սըփ—սուրբ
 Խալ է Սիլան—զէնք
Սախ—գուլբայի նման գործած, Սիլայ—ապտակ
 որ ամբողջ սրունքը ծածկում է: Սինօգ—խորհրդական
Սահմանք—սովորութիւն Սինոռ—սահման
Սայիս—ձիապան, ախոռապետ Սկում—հսկում
Սայիսիսանայ—ձիերի գոմը Սհաթ—ժամ, ժամացոյց
Սայիսուտեն—ախոռապանու- Սոֆի—պարոն, աղնուական
 Թիւն Սուգ կապել—սուգ պահել
Սանդ—քարի մէջ փոս, որտեղ Սըսուռ—արտասուք
 ձաւարկամ այլ բան են ծեծում: Սրտնոց—գոգնոց
Սանէր—սանահայր Սօլ—ոտնաման, մաշիկ
Սաղմոց—սաղմոս
Սասում—ցասում Վախտ—ժամանակ
Սասման, ցասման ժամ—այն Վաղդայ—ժամանակ

— Աաղղայ էղնի իմ ջանին—
 Աարք—սովորութիւն
 —մըր վարքին չ'կայ—մենք սո-
 վորութիւն չունինք
 Աերգի—պարգև
 Աեցկի—արօր
 Աէրու—վայրենի
 Աըր—վերայ
 Արաւէդ ի կթափի — (Նեգն.)
 շնորհքդ երևում է:
 Ալանալ—լուանալ
 Տաշտ ու մաղ կախել—
 Տատէ—հօրեղ օր կին
 Տարթ—ոչխարի կղկղանքից պատ-
 րաստած վառելիքը
 Տաւել—գոմել գոմում կապել
 Տափել—ցաքանել ցորենը ցա-
 նելուց յետոյ փոցնով հաւասա-
 րեցնել
 Տղկել—թրջել
 Տէրբըտէր էնէլ—իւրաքանչիւրի
 պատկանելիքը տիրոջը հաս-
 ցնել
 Տիրուխնի—քահանայի կին, տի-
 րուհի
 Տիլ—տիղմ
 Տրոտ—տղմոտ, ցեխոտ
 Տկողնալ—մերկանալ, տկորա-
 նալ
 Տղացկան—երեսայ բերող կին,
 ծնողկան

Տղղել—կուչ գալ հարուածի տակ
 Տղէկ—փոքր երեսայ
 Տնուորուիլ—ամուսնանալ, տուն
 ու տեղ շինել
 Տուն մնաց մըղի, բագ հաւերուն—
 այժմ ամեն բան մեղ մնաց. սկե-
 սուրս մեռաւ, տեղս լէնացաւ:
 Տփել—ծեծել
 Տախ—վառելու փայտ
 Տան—վառելիք՝ կենդանիների
 աղբից պատրաստած
 Տխել—երբ տիղմը թուչում է
 մարդու շորերի վերայ, ասում
 են «ցխաւ», կեղտոտեցաւ:
 Փալաս—կապերտ
 Փահլելանն | ըմբիշ, քաջ մարդ
 Փալելանն |
 Փանջարայ—լուսամուտ
 Փարի—յաւերժա հարսն, գեղեց-
 կուհի
 Փարչ—հողէ աման ջուր կամ
 լու համար
 Փերթ—կտոր
 Փէշքէշ—ընծայ
 Փէշշայ—արհեստ
 Փէտ—փայտ.
 Փթիր—վառելիք, անասունների
 կղկղանքից ձեռքով թխածը:
 Փիջ—ուս, թև
 Փշուր—քիչ, կտոր

Փողոց—աղբանոց, որտեղ թա-
 փում են թոնրի մոխիրը, տան
 աղբը և բլրակ է կազմուում:
 Փոշմեել—զղջալ
 Փոցխ—սյն գործիքն է, որով ցա-
 նելուց յետոյ հաւասարեցնում
 են մարգի կամ ցանքսի երեսը:
 Փրցնել—պոկել, բաղել
 Քաղ—հունձ
 Քամակ—մէջք, թիկունք
 Քաման—կաշէ պարան
 —քամին մեռաւ ցրտուց, կամ
 —քամին մրսկաւ—(Նեգն. շատ
 հարկաւոր է:
 Քասայ—գաւաթ, հողէ աման
 Քարթու—հին (հաց):
 Քարեշտ—հեծանոց
 Քաւշան—գաշո, անդ
 Քեսասիքուտին փակեց—աղբա-
 տացաւ
 Քեղբել—կծպել
 Քիսնել—ընդհարուել, շփուել,
 կպշել
 Քոմել—ժողովել հաւաքել
 Քոչել—գաղթել
 Քուլաբ—փայտից շինած աման
 Քոչմեել—զղջալ
 Քուր—քոյր
 Քանախաշ էղնիլ — խաշուել
 Քրտնքից
 Քսպել—կոխել, մտցնել (մէջք):
 Պթախ—սենեակ
 Օթուրախ էղնիլ—իջևանել
 Օլուշաղ—կին, ընտանիք
 Օխնէթ—օրհնութիւն
 Օխար—ոչխար
 Օյամիշ էղնիլ—զարթնել, ուշ-
 քը գլուխը գալ
 Օսկի—ոսկի
 Օր—որ (յարաբ. դեր.)
 —օրը զաւուր—օրէ-ցօր
 Օրթըրլիս—Ռիշին, մէջ, մէջտեղ:
 Քաս—գլխարկ
 Փլան—այս ինչ, այն ինչ
 Փոզ—լիրբ, անառակ, անզգամ:



Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Շ

Ա.

ՍԻՐՈՅ ԵՐԳԵՐ ԿԱՄ «ԵԱՅԼԻ» ԽԱՂԵՐ *)

Կարմիր վարդը ջամով ա,
Սիրած եարը¹⁾ չամով ա,
Ըստե²⁾ զօռի բան չկայ,
Սաւղէն³⁾ իրան կամով ա:
Յերդրկայ յերդիկ էկեր ես,
Յերդրկայ փէտեր բռներ ես,
Իմ հէր քի ախչիկ չի տայ,
Նհախ⁴⁾ քունդ կտրեր ես:
Ա՛յ ախչիկ, դէսն աչէ⁵⁾,
Փանջարից քեզի տեսայ,
Վարայ եոխս⁶⁾ կ'ծախեմ,
Կ'ընիմ քու աղէի⁷⁾ փեսայ:
Ա՛յ տղայ, ալ⁸⁾ կապաւոր,
Խի՞ չ'էլար կարդացաւոր,
Ընդամ⁹⁾ սիրի, եար չ'էլար,
Նաչարցայ¹⁰⁾ կ'անիմ քաւոր:
Իմ եարը խռով գնաց,
Սարերի սռով¹¹⁾ գնաց:

*) Գրի առնուած Արագածոտն գաւառի Թալին գիւղում:

1) Սիրեկան, սիրուհի. 2) այստեղ. 3) սէրը. 4) իզուր. 5) նա-
յիր. 6) ունեցած չունեցածս, 7) մայր, մօր 8) բաց կարմիր. 9) այն-
քան. 10) անճարացայ 11) սեռ, լեռների ուղղութեամբ այն գիծը,
որ կարծես երկինքը կպած է, հորոզոնին:

Նա ղուշ¹⁾ էլաւ, նա կարաւ,
 Չեռնէս էլաւ, թռաւ գնաց:
 Էս օր պաս ա, միջուներ ա,
 Ամբեր ա՛ պտի ձուն գայ,
 Ախչի, բուկդ սագաֆ ա,
 Արանքինը²⁾ ուլինդ ա:
 Ժամի դուռը թինկներ ա,
 Ալուան կարաւ բոներ ա,
 Չէն տուի, ձէնս չ՝առաւ,
 Եարաբ թարգս տուեր ա:
 Արեալըղ³⁾ նարնջի,
 Ադա, վեր էրթանք փնջի,
 Իմ հէր քի ախչիկ չի տայ,
 Չեռդ ծոցիդ զառնջի⁴⁾:
 Նստեր ես փէտ կ՛տաշես,
 Ի՞նչ մայլոց մայլա կ՛աշես,
 Գու ինձ խարեցիր չ՛առար,
 Չիթ արեւըլըդ ոչ մաշես:
 Սիրեր եմ սերն էրեսին,
 Նարնջի թէլն էրեսին,
 Որ իմ սիրածն առնի,
 Գեղարդայ թուրն էրեսին:
 Զուրն էկաւ վրին սարէն,
 Թափում ա մարմար քարին,
 Ով զառնայ յիր իրջանէն⁵⁾,
 Վրէն թափի գօթու⁶⁾ եարէն:
 Ա՛յ ուռ ես, կռանալ մի,
 Մեր զոնէն հեռանալ մի,
 Որ Աստուածդ կ՛սիրես,
 Սիրել ես, մոռանալ մի:

1) Թռչուն. 2) միջինը. 3) բաճկոն. 4) խիղճ, մալուլ. 5) պայման. 6) վերքի մի տեսակ:

Ամբեր ա ամբոց վրէն,
 Ամբը լայլեցոնց վրէն,
 Ամբ, Աստուածդ կսիրես,
 Մի՛ գնա եարիս վրէն:
 Ա՛յ տղայ, ալ ու վալ ես,
 Կանաչ քոլերի¹⁾ խառն ես,
 Քի ո՞ր կ՛ասա դու դառն ես,
 Գու իմ սիրելի եարն ես:
 Այ տղայ, հուր ես մուր ես,
 Ես ծարաւ եմ, դու ջուր ես,
 Մուխառամ թառան շորեր,
 Համբարձում գըլեր դու դո՞ր ես:
 Առաւօտայ սըռ քամին,
 Ադա, կայներ ես կամին,
 Ընդամ սիրի—եար չ՛էլար,
 Աստու կրակ քու ջանին:
 Ա՛յ ախչի, ասա, ասա,
 Ծամերիդ ծէրը խաս ա,
 Թուշդ դէս արա պաշեմ,
 Գնա քու մօրն ասա:
 Ախչի, բոլ է, նեղացար,
 Գիւգազ էրեսդ բաց ա,
 Էս խօսքեր, որ ես ասի,
 Գու զալում էր՝ զիմացար:
 Ախչի, շիմալ բոյ ունես,
 Ղալամ զաշի եար ունես,
 Ամեն քո եար տենալուց,
 Հազար տարուայ ումր ունես:
 Էլ չեմ խօսայ քու հետը,
 Չուր ընիս լայլաղը,

1) Թուլի:

Եայլից էր էկե բարով,
 Խի՞ տուիր սրտիս բարով:

 Խաղ ասի խաղերից տուս,
 Ճրագ բերէք ետրիս լուս:
 Սարերը զուրս ա դառե,
 Արունը սիրտս առե,
 Հեռու ճամփէն ետր ունիմ,
 Աչքերս չորս ա դառե:
 Կաղզըւանայ ձորէն իմ,
 Մեծ բաղի խնձորէն եմ,
 Քամին տուեց, վեր ընկայ,
 Վաթանս¹⁾ մոլորել եմ:
 Զաղաչի աջի կուռը,
 Կ'ցնծայ միջի գիւլը,
 Վայ իմ սիրած բիլբիւլը
 Քաշեցին խանի դուռը:
 Էս օր ծաղարդար պիտի,
 Իմ ախպէր կարգալ պիտի,
 Ամեն բեմն ըլնելուց,
 Հալած, արդար մոմ պիտի:
 Կտուր կայնօղին մեռնեմ,
 Քագիւլ²⁾ սանրողին մեռնեմ.
 Մենակ իրեն չեմ ասում,
 Ետրան եղբայրն³⁾ մեռնեմ:
 Էդ գո՞ր կ'երթաս էլ նման,
 Բո՞յ⁴⁾ ըմ ունիս քեալաչ նման,
 Էս օր տասն օր չեմ աեսե,
 Նա գին⁵⁾ ունիմ, նա իման:

1) Հայրենիք. 2) մաղեր. 3) ընկեր. 4) հասակ. 5) հաւատ:

Էրկու տակ պատ շարէք,
 Ինձի մէ լաւը ճարէք,
 Էւել պակաս չեմ ուզում,
 Ընձի բարաբար արէք:
 Արե մեր դուռը մտաւ,
 Սիրած սիրածին գտաւ,
 Վայ ագէ ջան, շուտ արա,
 Պահած բաներդ փթաւ:
 Գութանը ման եմ տուե,
 Սիրեր եմ, ջան եմ տուե.
 Օխտը զօր, օխտը գիշեր
 Մի օր իրդար եմ աուեր:
 Գութանին հաց եմ տարե,
 Բերանը բաց եմ դրե,
 Գինաս հաց եմ տարե,—
 Զկով տապկած եմ տարե:
 Նորը¹⁾ թաժայ նորեր ա,
 Ետրիս եայլուղը կորել ա,
 Ով որ գտե թող իտայ,
 Քեամարս մոժդայ²⁾ կիտամ:
 Զուրս տաք ա, ջուր բերէք,
 Հնդստանայ հունդ բերէք,
 Էլ ու գիւնս թամամ ա,
 Ղարիբ եարս տուն բերէք:
 Էս գիշեր շուտ դուս էլայ,
 Թուխանը³⁾ անուշ կցուլայ,
 Կ'ցուլար Հալուայ սարին,
 Շատ բարե տար իմ ետրին:
 Լուսնակը ցերեկ ցերեկ,
 Շիրվուս քեարվան բերէք,

1) Լուսինը. 2) ընծայ բարի համբաւի համար. 3) լուսինը:


Լայլուզս մուժգայ կ'տամ,
 Եարոջս խաբար բերէք:
 Տեղ եմ քցե փոնթ կուգայ,
 Բարձի տկէն հոտ կուգայ,
 Մեռնիմ բոլոր քանգուլիդ,
 Մէջէն խնկան հոտ կուգայ:
 Ամբել ա թոն չի¹⁾ գալում,
 Մթնել ա տուն չի գալում,
 Շամ եօրդան ղուլթնի գոշակ,
 Առանց եար քուն չի գալում:
 Բարձս ղալմով գրած է,
 Եարս վրէն քնած է,
 Չէն տուի ձէնս չ'առաւ,
 Եարար ինձնէն ջորված է:
 Այլսարն առեր եմ բակը,
 Գէմ տուի սէլի աղը,
 Ավ որ իմ սիրածն առնի,
 Չ'վէլայ²⁾ գլխի թագը:
 Մէշի³⁾ միջին պաչ ախպուր,
 Ադա, արի տար բու քուր,
 Քու քուրն ընձի հաւան չէ,
 Տար ինձանից լաւին տուր:
 Իմ եարը հանդին⁴⁾ տեսայ,
 Ջրի բանդին տեսայ,
 Ասի քանքիլ սանդրի,
 Քանքիլը դանդան⁵⁾ տեսայ:
 Ես էն եարին եար պիտէի,
 Գօտին մի . . . պիտէի.
 Էրթացած ճամփէն ղուրբան,
 Թոփ խնկենի ծառ պիտէի:

1) Անձրև. 2) չ'վայելէ. 3) անտառ. 4) անդ, դաշտ, 5) հատ-հատ:

Իմ եարը դուռն ա դրե,
 Գօտիկը նուռն ա դրե,
 Էրթացած ճամփէն ղուրբան,
 Ալ Փասը¹⁾ ծուռն ա դրե:
 Էս գիշեր լուսնակ գիշեր,
 Կարնկներ կարմիր թշեր,
 Անչի, քու ախպէրն ապրի,
 Գաստուր տու գամ էս գիշեր:



1) Գլխարկ, ֆէս:



2275

Ինքը ենթարկվել է սխառ չափման

Մ. Բ. Կոչ.

23388 2013

« Ազգային գրադարան



NL0267592

43.	Օրլէանի կըյս, Օստրոգորսկու	25
44.	Յարուժիւն Արարատեանի կեանքը	75
45.	Գաղափարական քահանայ, Պօտապենկոյի	75
46.	Ընտանիքի յոյսը, Աննենսկայի, թարգմ. օր. Վ. Տէր- Ասիսէփեանի	10
47.	Լուսնոսի ձեռաստորը Յ. Պարոնեանի	1
48.	Քիմիա Բօսկոյի, թարգմ. Ա. Մելիք-Ալլահվերդեան	40
49.	Շէգըրինի երեք վէպիկ, թարգմ. Մ. Ղաղարեանց	15
50.	Սասնայ ծռեր, Գարեգին սարկաւազի	50
51.	Ջաւախքի բուրմունք, Ե. Լալայեանցի	25
52.	Մտաւոր, բարոյական Ֆիլիբական կրթութիւն, Սպեն- սերի. թարգ. Մ. Ղաղարեանցի	1
53.	Մըռոան, Օ. Ի. Շփտօ. թարգ. Ա. Բալանթար	20
54.	Խան-Միրան, գրեց Սէյլան	20
55.	Տարաս Բուլբա, Գոգոլի, թարգ. Մ. Աբեղեան	40
56.	Փշրանքներ, Գարեգին սարկաւազի	50
57.	Երկու քոյր, Ղ. Աղայեանցի, ռ. տպ.	25
58.	Իրախտի ընտանիք, գրեց Խրիմեան Հայրիկ	60
59.	Սիրաք և Սամուէլ. գրեց Խրիմեան Հայրիկ	50
60.	Բրօքեր. փորձանքների բժշկարան. թարգ. Ք. Օհա- նեան	20
61.	Շէկսպիրի Մակրեթ, թարգ. Ս. Մալխասեանց	50

ՆՈՅՆ ՏԵՂՈՒՄ ՎԱՃԱՌՈՒՄ ԵՆ ՆԱՆԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԵՏԵՒԵԱԼ
ԳՐՔԵՐԸ

1.	Ուսումնարանների առողջապահութեան հարցեր, ռժ. Ա. Բարայեանի	1
2.	Վրքեր և նոցա ազգեցութիւնը առողջութեան վրայ, ռժ. Ա. Բարայեանի.	30
3.	Բոնի միութիւն Հայոց Ա. հաստանի	2

ԳԻՆՆ Է 50 ԿՈՂ.

Handwritten signature and scribbles in blue ink, including the number 50 and other illegible marks.